

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ՄԵՅԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

Ք Ր Ի Ս Տ Ո Ն Է Ա Կ Ա Ն

**Զ. ԳԻՐՔ**

Ե. ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

(Ի պէտս Ոստոյչաց)

(Բարեփոխում)



Պատրաստեց՝  
Նուպար Սրկ. Պերպէրեան

ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻՐԱՆԱՆ  
1991

Սոյն գիրքը կը հրատարակուի մեկեւնասութեամբ  
**ԾԱՓԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ**

The Tzapik Baghdasarian Charitable Trust  
The First National Bank of Boston, Trustee

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Քսաներորդ դարու վերջին այս տասնամեակը յատկանշող գեղեցիկ երեւոյթներէն մէկը կրօնական բիրեղ ապրումներու եւ զգացումներու վերայաշունչութիւնն է արդի ընկերութեան մէջ: Կրօնական վերագարթօնքի թարմ հով մը կը փչէ գրեթէ ամէն տեղ ու ամէն երդիքի տակ: Ընկերային կարգերու փոփոխութեան հետեւանքով յառաջ եկած կրօնական շարժումը հարկ է որ լաւագոյն կերպով եւ ուսումնասիրուած միջոցներով յառաջ տարուի ի խնդիր նոր սերունդի կրօնական առողջ եւ ամբողջական դաստիարակութեան:

Հայց. Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցները, իբրեւ կրթական-դաստիարակչական հաստատութիւն, անցնող վաթսուն տարիներու ընթացքին, ջանադիր եղան հայ մանուկի ու պարման-պարմանոճի կրօնական-ազգային տոճմիկ դաստիարակութեան: Կիրակնօրեայ Դպրոցէն շրջանաւարտ հայ երիտասարդն ու երիտասարդուհին ռեւ մէկէն աւելի գիտակից ու նախանձախնդիր եղան ու են իրենց ազգային եւ կրօնական պատկանելիութեան:

Ապագայի աւելի արդիւնաշատ ու պտղայից գործունէութեան ու դաստիարակչական աշխատանքի հեռանկարով, Հայց. Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Տնօրէնութիւնը վերամշակումով կը վերահրատարակէ իր «Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր» դասագիրքերու շարքը, պատրաստուած Բարշ. Նուպար Սրկ. Պէրպէրեանի կողմէ: Ներկայ դասագիրքը, որ յատուկ է Ե. դասարանին, իր բովանդակութեան թելադրականութեամբ մեծապէս օգտակար պիտի ըլլայ ե՛ր կիրակնօրեայի աշակերտին ե՛ւ առօրեայ վարժարանի աշակերտին:

Ներկայ դասագիրքը, սիրելի ուսուցիչներ, իր պարունակութեամբ եւ հաղորդականութեամբ պէտք է սեփականութիւնը դարձնէք ձեր աշակերտներուն: Հոն տեղ գտած դրուագները, պատմական դէպքերն ու դէմքերը հարկ է որ իրենց հարազատութեամբ եւ ճշգրտութեամբ

փոխանցումն աշակերտներուն, որպէսզի աշակերտները աւելի սիրով ու հետաքրքրութեամբ իրացնեն իրենց հրամանածը: Տիպար ուսուցիչը այն է որ կը յաջողի իր նխօր սիրելի դարձնել իր աշակերտներուն: Ամբողջ ուսուցչական ասպարէզին գաղտնիքը այս կէտին մէջն է: Հաստատեալ ու հաստատոր ուսուցիչը, ինչպիսին է Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչը, ամէն բանէ առաջ կ'աշխատի տէր ըլլալու իր նխօրն, որպէսզի կարենայ իր կարգին տիրութիւն ընել իր աշակերտներուն:

Մեր բուն փափաքն է, այլեւ մաղթանքը, որ մեր ուսուցիչները ըլլան նախանձախնդիր իրենց ուսուցումին մէջ: Ինքնաքննութեամբ, ինքնաճանաչութեամբ եւ ինքնազարգացումով տէր կանգնին իրենց կոչումին, որպէսզի ըլլան առաքելային բառերով «մշակ առանց ամօթի, եւ ճշմարտութեան խօսքը ուղիղ բացատրողներ»:

Այստեղ, կ'ուզենք մեր ջերմ գնահատանքը յայտնել հրշ. Նուպար Սրկ. Պերպէրեանին իր այս աշխատանքին համար: Կը հաւատանք որ սոյն դասագիրքը կրնայ օգտակար ըլլալ նաեւ մեր առօրեայ դպրոցներուն, որոնք կրօնի դասագրքերու պակասէն կը զանգատին: Մեր եղբայրական անկեղծ շնորհակալութիւնները Գեղշ. Տ. Արտաւազդ Արքեպիսկոպոսին, որ բարեխղճօրէն կարդաց ամբողջ գիրքը, կատարեց անհրաժեշտ սրբագրութիւնները եւ տուաւ իր շինիչ դիտողութիւնները:

**ՍԵՊՈՒՆ Ծ. ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆ**

Վարիչ Տնօրէն

Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու:

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կարգ մը բարեփոխումներով եւ մի քանի դասերու յաւելումով ձեռնարկեցինք «Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր»ու շարքի Զ. գրքի Բ. տպագրութեան, որ կ'ընդգրկէ Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի համբարձումէն ետք իր առաքելներուն սկզբնական գործունէութիւնը Երուսաղէմի եւ Հրէաստանի մէջ, ու նաեւ Պօղոս Առաքելայի դարձն ու առաքելական ճամբորդութիւնները:

Յաւելեալ երեք դասերուն առաջինը համառօտ ակնարկ մըն է Յիսուս Քրիստոսի առաքելութեան եւ փրկագործութեան խորհրտորդին վրայ:

Գիրքիս վերջին երկու յաւելեալ դասերը յատկացուցած ենք Ս. Աստուածածնի վերափոխման եւ Քրիստոսի Խաչին:

Իրաքանչիւր դաս ունի ընթերցանութեան համար սուրբ գրային հատուած մը: Նախընտրելի է դասարանդութիւնները սկսիլ Սուրբ Գիրքի ընթերցումով: Փափաքելի է որ աշակերտներ հերթով մաս առ մաս կարդան օրուան դասին սուրբգրային հատուածը:

Յաջողութիւն կը մաղթենք մեր կիրակնօրեայ դպրոցներու մշակներուն եւ կ'աղօթենք որ Տէրը անեցնէ անոնց կողմէ ցանուած Աւետարանին սերմերը հայ պատանիներու մատղաշ սրտերուն մէջ:

ՆՈՒՊԱՐ ՍՐԿ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

## Ա. Դաս

### Աստուածորդին Փրկիչ Աշխարհի

(Ղուկ. 2.8-17, Մատթ. 28.16-20)

Հայր Աստուած մարդ արարածը իր մեղքերէն սրբելու եւ դատապարտութենէ փրկելու համար իր Միածին Որդին աշխարհ ղրկեց: Աստուածորդին անուանակոչուեցաւ Յիսուս, որ կը նշանակէ փրկիչ:

Հին Կտակարանի մարգարէական գիրքերուն համաձայն Աստուածորդին մարդացաւ եւ ծնաւ սուրբ կոյս Մարիամէն: Հրեշտակներ անոր ծնունդը աւետեցին հովիւներու, որոնք Բեթղեհէմ գալով երկրպագեցին անբան կենդանիներու մսուրին մէջ պառկող մանուկ Փրկչին: Նոյնպէս հեռաւոր Արեւելքի մէջ մոգեր նոր ծնած մանուկ Արքային լուսափայլ աստղը տեսնելով Հրէաստան եկան ու երկրպագեցին Անոր: Իսկ Աստուծոյ ընտրեալ ծառաներէն Սիմէոն ծերունի քահանան Սուրբ Հոգիին ներշնչումով ճանչցաւ իրեն ներկայացուող Յիսուս մանուկին երկնառաք Մեսիա\* եւ փրկիչ ըլլալը. ուստի օրհնեց զԱյն ու յայտնեց թէ ան աշխարհ Լոյսն էր եւ պիտի լուսաւորէր Իսրայէլի ժողովուրդին հետ միատեղ բոլոր հեթանոս ազգերը: Միեւնոյն ատեն գուշակեց անոր չարչարալից մահը մարդոց փրկութեան համար:

Աստուածորդին մարդանալով ստացաւ նաեւ Որդի մարդոյ կոչումը:

Յիսուս մեծցաւ Գալիլիայի Նազարէթ քաղաքին մէջ եւ իր քաղաքացիներէն ճանչցուեցաւ որպէս որդի հիւսն Յովսէփի:

\*) Մեսիա կամ Քրիստոս կը նշանակէ Օծեալ, այսինքն՝ Թագաւոր:

Յիսուս որպէս օրինապահ անձ կատարեց Հին Կտակարանի Օրէնքին բոլոր տրամադրութիւններն ու պատուիրանները: Երբ երեսուն տարեկան եղաւ, գնաց Յորդանան գետը՝ Յովհաննէս Մկրտիչին քով եւ ուզեց անոր ձեռքով մկրտուիլ: Յովհաննէս Մկրտիչ աստուածային ներշնչումով զգաց, թէ իրեն ներկայացող նոր անձնաւորութիւնը մարգարէներու բերնով Աստուծոյ խոստացած Մեսիան՝ Քրիստոսն էր. ուստի ետ կեցաւ զԱյն մկրտելէ, ու առաջարկեց որ ինք Անկէ մկրտուի, սրբանալու եւ արդարանալու համար: Սակայն Յիսուս ըսաւ թէ հարկ էր լրիւ կատարել Հին Կտակարանի Օրէնքին բոլոր տրամադրութիւնները:

Յովհաննէս Մկրտիչ յօժարեցաւ եւ մկրտեց Յիսուսը, ու այն ատեն տեսաւ Աստուծոյ Սուրբ Հոգին որ բացուած երկինքէն աղաւնակերպ կ'իջնէր Անոր վրայ. միեւնոյն ատեն լսեց Հօր Աստուծոյ վկայութեան ձայնը որ կ'ըսէր. «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որու հաւնեք եմ»:

Այնուհետեւ Յովհաննէս Մկրտիչ իրեն ներկայացող ժողովուրդին պատգամեց թէ Յիսուս նազովրեցին էր սպասուած Մեսիան, որ աշխարհի մեղքը պիտի վերցնէր ու փրկէր մեղաւոր մարդկութիւնը: Ի լուր աշխարհի յայտնեց, թէ զԱյն մկրտած ատեն ինք տեսած էր Սուրբ Հոգւոյն էջքը Անոր վրան ու լսած էր Հօր Աստուծոյ վկայութեան ձայնը Անոր մասին:

Յովհաննէս Մկրտիչէն վկայուելէ ետք Յիսուս սկսաւ իր մեսիական գործունէութեան: Իրեն համար աշակերտներ ընտրեց. պտրտեցաւ քաղաքներ ու գիւղեր. տուաւ իր երկնային պատգամները, կատարեց իր աստուածային հրաշքները ու Իսրայէլի ազգը հրաւիրեց ապաշխարելու՝ ժառանգելու համար երկինքի արքայութիւնը:

Ունկնդիր ժողովուրդէն ոմանք հոգեւորապէս նորոգուելու եւ երկինքի արքայութիւնը ժառանգելու տենչով ընդունեցին Յիսուսի հրաւերը եւ հաւատքով հետեւեցան իրեն:

Այդ հաւատացեալ փոքրամասնութեան կողքին Յիսուսի ետեւէն գացին նաեւ բազմաթիւ անձեր, որոնք մեախայի յայտնութենէն կ'ակնկալէին երկրաւոր բարիքներ, նամանաւանդ կը բաղձային տեսնել հրեայ ազգին ազատագրումը հռոմէական տիրապետութեան լուծէն: Ազգայնամոլ զանգուածներ Յիսուսի հրաշքներուն ընդմէջէն նշմարեցին անոր գերբնական զօրութիւնը: Սակայն անոնք առաւելաբար հրէական երկրաւոր թագաւորութեան մը հաստատումին երազէն տարուած ըլլալով չկրցան ըմբռնել թէ Յիսուս ի'նչպիսի թագաւորութիւն մը կ'ուզէր հաստատել երկրի վրայ: Առիթով մը անոնք որոշեցին Յիսուսին քով երթալ եւ զԱյն թագաւոր հռչակել ու անոր դրօշին ներքեւ կոտորել հռոմէական կայսրութեան լուծը. ըլլալ ազատ ու անկախ, եւ ապա գրաւել այլ երկիրներ ու տիրել աշխարհի բոլոր ժողովուրդներուն վրայ:

Յիսուս անոնց դիտաւորութիւնը իմանալով, լեռ ելլելով առանձնացաւ եւ ընթացք չտուաւ հրեաներու աշխարհիկ ցանկութիւններուն: Յաճախ իր քարոզներով եւ առականերով յայտնեց թէ իր հիմնած թագաւորութիւնը երկրային չէր, այլ երկնային, ու իր առաքելութիւնն էր լուսաւորել աշխարհը, փրկել մարդիկը մեղքի գերութենէն եւ յաւիտենական կեանք շնորհել իրեն հաւատացողներուն: Սակայն ժողովրդական խաւերը դեռ եւս կը յուսային Երուսաղէմի մէջ Յիսուսը տեսնել թագաւորական գահի վրայ եւ անոր առաջնորդութեամբ հիմնել հրէական անկախ պետութիւն մը:

Չորսօրեայ մեռեալ Ղազարոսի յարութենէն ետք Յիսուսի ժողովրդականութիւնը բազմապատկուեցաւ, ու երբ Ան Երուսաղէմ կը մտնէր, ժողովուրդը ցնծութեան աղաղակներով եւ «Ովսամնա» բացականչութիւններով ընդունեց զինք, որպէս թագաւոր եւ փրկիչ Իսրայէլի ժողովուրդին:

Հրեայ քահանայապետներն ու ղեկավար իշխանները առաջին օրէն հաշտ աչքով չէին դիտեր Յիսուսի գոր-

ծունէութիւնը: Անոնք նախապէս Յովհաննէս Մկրտիչին հանդէպ ալ թշնամական վերաբերում ունեցած էին եւ չէին ընդունած անոր մարգարէութիւնն ու տուած պատգամները, որովհետեւ ան ձաղկած էր իրենց կեղծաւորութիւնը, նիւթապաշտութիւնը եւ փառասէր ընթացքը: Յիսուս ալ յանդիմանած էր հրեայ իշխանաւորներուն ու անոնց ուղեկից ուսեալ դպիրներուն կեղծ բարեպաշտութիւնը, սնափառութիւնն ու սխալները, եւ հրաւիրած էր զանոնք ապաշխարութեան:

Հրեայ աւագանին իրեն ուղղուած զգաստութեան հրաւէրը ընդունելու տեղ ատելութեամբ լեցուեցաւ Յիսուսի հանդէպ: Օրուան իշխանաւորները նախանձեցան Անոր վայելած ժողովրդականութեան վրայ. իսկ Երուսաղէմ մուտքի ատեն Յիսուսին ձօնուած փառաբանութեան խօսքերը առաւել զրգռեցին ու զայրացուցին քահանայապետներն ու անոնց հետեւորդները: Անոնք միաբանեցան Յիսուսի դէմ եւ նենգութեամբ ձերբակալեցին զԱյն ու որպէս խոտվարար մատնեցին օրուան կուսակալ Պիղատոսին, եւ պահանջեցին որ խաչուի:

Պիղատոս թէեւ փաստեց Յիսուսի անմեղութիւնը, սակայն հրեաներու ստիպումին առջեւ տեղի տուաւ եւ վճռեց Անոր խաչելութիւնը: Յիսուս մահուան արժանի չէր: Ան անարատ էր եւ մահը չէր կրնար տիրել իրեն: Սակայն Ան աշխարհի փրկութեան համար ստանձնեց մարդոց բոլոր մեղքերը, կամաւորապէս յանձն առաւ խաչին վրայ զոհուիլ, իր սուրբ արիւնը թափել, քաւութիւն ընել ու Հօր Աստուծոյ առջեւ բարեխօսելով թողութիւն ձեռք բերել Ադամին եւ անոր սերունդին համար:

Երբ Յիսուս խաչին վրայ իր հոգին աւանդեց, բարի մարդիկ անոր մարմինը խաչէն իջեցնելով թաղեցին վիմափոր նոր գերեզմանի մէջ եւ անոր դուռը գոցեցին հսկայ քարով մը:

Նկատելով որ Յիսուս նախապէս ըսած էր թէ ինք խաչուելէ ու թաղուելէ ետք երրորդ օրը յարութիւն պիտի

առնէր, հրեայ քահանայապետները կասկածեցան որ անոր աշակերտները կրնային գիշերով գալ եւ իրենց վարդապետին մարմինը գողնալ եւ ապա յայտարարել թէ Ան յարութիւն առած է: Ուստի գերեզմանին դուռը կնքեցին եւ այնտեղ պահապան զինուորներ դրին, որպէսզի ռեւէ մէկը չկարենայ հոն մօտենալ եւ Յիսուսի մարմինը վերցնել:

Միաշաբաթի գիշերային ժամուն, մինչ զինուորները իրենց պարտականութեան գլուխն էին, մեռեալ Յիսուսը յարութիւն առաւ՝ վերակենդանացաւ, մինչ լուսապայծառ հրեշտակ մը երկինքէն իջնելով գերեզմանին առջեւ դռնուած հսկայ քարը մէկդի գլորեց եւ անոր վրան նստաւ, ու երկիրը շարժեցաւ: Պահապան զինուորները այդ տեսարանին առջեւ խիստ զարհուրեցան եւ մեռելի պէս գետին ինկան: Երբ ուշքի եկան, անմիջապէս դէպի քաղաք գացին ու քահանայապետներուն ներկայանալով պատմեցին անոնց Յիսուսի յարութիւնը, հրեշտակին երեւումն ու պատահած հրաշալի դէպքերը:

Նենգամիտ քահանայապետները զինուորներու վկայութեան վրայ դէմ յանդիման եկան ճշմարտութեան եւ իմացան Յիսուսի աստուածային զօրութիւնը, սակայն չուզեցին անդրադառնալ իրենց գործած սխալին ու կատարած ահաւոր ոճիրին: Անոնք կամակոր եղան եւ զղջումի չեկան Աստուծոյ առջեւ իրենց ահաւոր մեղքին համար. ընդհակառակը, հոռոմայեցի զինուորները կաշառեցին ու անոնց պատուիրեցին զրպարտել Յիսուսի աշակերտները եւ ըսել թէ գիշերը՝ պահակներուն քնացած մէկ պահուն՝ գերեզման գալով գողցած են իրենց վարդապետին մարմինը:

Յիսուս յարութիւն առնելէ ետք նախ երեւցաւ իւղաբեր կիներուն եւ ապա իր աշակերտներուն. իր յաճախակի երեւումներուն ընթացքին խրախուսեց զանոնք. ուղղութիւն տուաւ անոնց եւ պատուիրեց որ իր յարութեան ակնատես վկաներն ըլլալով քարոզեն իր փրկագործութեան աւետարանը (բարի լուրը) աշխարհի ամէն կողմերը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Յիսուս աշխարհ եկաւ մարդ արարածը իր մեղքերէն սրբելու եւ փրկելու: Իսրայէլի ազգէն քիչեր միայն հաւատացին անոր առաքելութեան եւ զԱյն Տէր եւ փրկիչ դաւանելով փրկուեցան իրենց մեղքերէն: Մեծամասնութիւնը կամակորութեամբ մերժեց զԱյն ընդունիլ որպէս մեսիա եւ փրկիչ, եւ ինքնաբերաբար ինքզինք դուրս դրաւ երկինքի թագաւորութենէն:

2) Յիսուս իր փոքրաթիւ աշակերտներով հիմնեց իր եկեղեցին եւ անոնց միջոցաւ իր լոյսը տարածեց աշխարհի չորս ծագերուն: Ան իր հրաւերը ուղղեց բոլոր մարդոց: Ով որ զինք դաւանի Տէր եւ Փրկիչ ու մկրտուի՝ կը դառնայ Աստուծոյ որդեգիր եւ ժառանգորդ երկինքի արքայութեան:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1) Հայր Աստուած ինչո՞ւ համար աշխարհ դրկեց իր միածին Որդին:

2) Հրեշտակները որո՞նց անտեցին Քրիստոսի ծնունդը:

3) Արեւելքի մէջ որո՞նք տեսան Քրիստոսի ծննդեան աստղը եւ ի՞նչ ըրին:

4) Սիմէոն ծերունին ի՞նչ ըսաւ Յիսուս մանուկին համար եւ ի՞նչ գուշակեց:

5) Յիսուսը մկրտելէ վերջ Յովհաննէս ի՞նչ տեսաւ եւ որո՞ւ վկայութեան ձայնը լսեց:

6) Ո՞վ ծանուցանեց հրեայ ազգին, թէ Յիսուս Նազովրեցին սպասուած մեսիան է:

7) Յիսուս հրեայ ժողովուրդը ի՞նչ բանի հրաւիրեց:

8) Որո՞նք ընդունեցին Յիսուսի հրաւերը:

9) Հրեայ ժողովուրդին մեծամասնութիւնը ի՞նչ կ'ակնկալէր մեսիայէն:

10) Հրեայ քահանայապետներն ու իշխանները ինչո՞ւ համար թշնամացան Յիսուսի եւ զԱյն մատնեցին խաչի մահուան:

11) Յիսուս ինչո՞ւ համար լանձն առաւ խաչուիչ:

12) Յիսուսի յարութեան լուրը առնելէ ետք հրեայ քահանայապետները ի՞նչ պատուիրեցին պահապան զինուորներուն:

13) Յարուցեալ Յիսուս իր աշակերտներուն երեւելով ի՞նչ պատուիրեց անոնց:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Որդին մարդոյ եկաւ որպէսզի կորսուածը փնտռէ ու փրկէ»: Դուկաս 19.10:

## Բ. Դաս

### **Յիսուսի Համբարձումը**

(Ղուկ. 24.50-53, Գործք 1)

Իր յարուժեան քառասուններորդ օրը, Յիսուս դարձեալ երեւցաւ իր աշակերտներուն: Անոնց հետ հաց կերաւ, խօսեցաւ ու պատուիրեց որ Երուսաղէմէ չհեռանան, այլ սպասեն Սուրբ Հոգւոյն գալստեան, որպէսզի անոր զօրութիւնը ստանալէ ետք սկսին Աւետարանի քարոզութեան, նախ Երուսաղէմի մէջ եւ ապա աշխարհի ամէն կողմերը:

Այս բաները խօսելէ վերջ, Յիսուս իր տասներմէկ աշակերտները Երուսաղէմէն դուրս հանեց եւ տարաւ Զիթենեաց լեռը, ու իր ձեռքերը վերցնելով սկսաւ օրհնել զանոնք: Եւ մինչ կ'օրհնէր, յանկարծ սկսաւ վեր բարձրանալ:

Աշակերտները ապշած դիտեցին Յիսուսի համբառնալը, մինչեւ որ ամպ մը եկաւ ու իրենց աչքերէն ծածկեց զԱնիկա: Սակայն անոնք տակաւին աչքերնին տնկած դէպի երկինք կը նայէին:

Նոյն միջոցին ճերմակ հանդերձներով երկու հրեշտակներ կանգնեցան աշակերտներուն քով եւ ըսին.

— Ո՛վ գալիլիացի մարդիկ, ինչո՞ւ կանգնեք դէպի երկինք կը նայիք: Այս Յիսուսը որ ձեզմէ երկինք համբարձաւ, օր մը այսպէս ետ պիտի գայ:

Հրեշտակներու աներեւութանալէն ետք, աշակերտները ուրախութեամբ լեռնէն վար իջան ու Երուսաղէմ դառնալով մտան վերնատունը: Հոն շարունակ աղօթքի եւ աղաչանքի ետեւէ եղան՝ իրենց հետ ունենալով Յիսուսի մայրը, եղբայրները (զարմիկները) եւ այլ բարեպաշտ կիներ ու հաւատացեալներ:

Այն օրերը Յիսուսի աշակերտներէն եւ հետեւողներէն 120 հոգի հաւաքուած էին վերնատան մէջ: Առաքեալները մտածեցին Յուդա իսկարիովտացիին տեղ ուրիշ մէկը ընտրել եւ իրենց թիւը տասներկուքի ամբողջացնել:

Յուդա Յիսուսը մատնելով եւ ապա ինքզինքը կախելով դուրս ելած էր առաքեալներու շարքէն: Ուստի Պետրոս առաքեալ այս պարագան յայտնեց բոլոր բազմութեան եւ ձեռնարկեցին ընտրութեան:

Ներկաները իրենց մէջէն ընտրեցին երկու հոգի. մէկը՝ Յուստոս, միւսը՝ Մատաթիա: Ապա զանոնք մէջտեղ կանգնեցնելով, Աստուծոյ աղօթեցին եւ վիճակ ձգեցին: Ու վիճակը ելաւ Մատաթիային, որ դասուեցաւ Յիսուսի տասներմէկ աշակերտներու կարգին:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ**

1) Յիսուս երկինք համբառնալով նստաւ Հայր Աստուծոյ աջ կողմը: Ան ինչպէս որ երկինք ելաւ, այնպէս ալ օր մը դարձեալ պիտի գայ իր բիրաւոր հրեշտակներով՝ աշխարհը դատելու համար: Ամէն անոնք որոնք Աստուծոյ նամբուն մէջ հաւատարմօրէն քալած են, պիտի վարձատրուին, իսկ չարութիւն գործողները պիտի պատժուին դժոխքի անշէջ կրակին մէջ:

2) Սուրբ եկեղեցիին եւ անոր գաւակներուն պարտականութիւնն է հաւատարիմ մնալ՝ Քրիստոսի պատուէրներուն եւ յոյսով սպասել Տիրոջ գալստեան, զԱյն ցնծութեամբ դիմաւորելու համար:

## **ՀԱՐՑՈՒՄՆԵՐ**

1) Յիսուս իր յարութենէն քառասուն օր ետք որո՞նց երեւցաւ:

2) Յիսուս ի՞նչ պատուիրեց իր աշակերտներուն:



- 3) Յիսուս իր աշակերտները ո՞ր տարաւ:
- 4) Իր աշակերտները օրհնելու ատեն Յիսուս ի՞նչ եղաւ:
- 5) Աշակերտները Յիսուսի համբառնալը տեսնելով ի՞նչ ըրին:
- 6) Որո՞նք երեւցան աշակերտներուն եւ ի՞նչ ըսին:
- 7) Աշակերտները ո՞ր վերադարձան:
- 8) Աշակերտներուն հետ ուրիշ որո՞նք աղօթք կ'ընէին վերնատան մէջ:
- 9) Քանի՞ հոգի հաւաքուած էին վերնատան մէջ:
- 10) Ո՞վ ընտրուեցաւ Յուդա Իսկարիովտացիին տեղ:
- 11) Ինչպէ՞ս կատարուեցաւ Մատաթիայի ընտրութիւնը:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր, ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան»:  
«ՀԱԻԱՏԱՄԲ»

### Գ. Դաս

#### Հոգեգալուստ (Գործք 2.1-42)

Յիսուսի համբարձումէն տասը օր ետք, Պենտէկոստէի տօնին\* առաքեալներ այլ հաւատացեալներու հետ զարձեալ հաւաքուած էին վերնատան մէջ եւ կ'աղօթէին Աստուծոյ՝ սպասելով գալստեան Սուրբ Հոգւոյն, զոր Յիսուս խոստացած էր զրկել իրենց: Վերնատան մէջ ներկայ էր նաեւ Ս. Կոյս Մարիամ Աստուածածին, ուրիշ բարեպաշտ կիներու հետ:

Մինչ բոլորը միաբանութեամբ աղօթքի ու աղաչանքի ետեւէ էին, յանկարծ երկինքէն սաստկաշունչ հովիճայնին պէս հնչիւն մը լսուեցաւ ու ամբողջ վերնատունը լեցուց: Նոյն միջոցին կրակէ լեզուներ երեւցան, որոնք բաժնուելով մէկ մէկ նստան անոնցմէ իւրաքանչիւրին վրայ, ու բոլորն ալ Սուրբ Հոգիով լեցուեցան եւ անոր զօրութեամբ սկսան զանազան լեզուներ խօսիլ, համարձակ ու բարձրաձայն զԱստուած փառաւորել:

Առաքեալներու այս նորօրինակ երեւոյթին լուրը տարածուեցաւ Երուսաղէմի մէջ եւ ամէն կողմէ մարդիկ հաւաքուեցան վերնատան շուրջ: Անոնք այդ զարմանահրաշ զէպքին ականատես ու ականջալուր ըլլալով զարմացան թէ այդ անուս առաքեալները ինչպէ՞ս կը փառաւորէին զԱստուած իրենց անձանօթ բարբառներով:

Հետաքրքիր բազմութեան մէջ կային նաեւ աշխարհի չորս ծագերէն Երուսաղէմ եկած հրեայ ուխտաւորներ, որոնք իրենց բնական երկիրներուն բարբառները առաք-

\*) Պենտէկոստէ կը նշանակէ յիսուսերորդ: Հրեաներ իրենց Ջատիկէն յիսուս օր ետք կը կատարէին հունգարի երախայրեաց տօնը:

եալներու բերնէն լսելով կը սքանչանային անոնց վրայ, ու զարմացած իրարու կ'ըսէին. «Միթէ ասոնք բոլորը Գալիլիացի չե՞ն, եւ ի՞նչպէս կ'ըլլայ որ մեզմէ իւրաքանչիւրին բարբառով կը խօսին»: Եւ շատեր ապշած իրարու կը հարցնէին. «Ի՞նչ պիտի ըլլայ այս»: Ոմանք ալ առաքեալները ծաղրելով կ'ըսէին թէ անոնք գինիով արբեցած են եւ անոր ազդեցութեան ներքեւ կը խօսին:

Պետրոս առաքեալ այս խօսքերը իմանալով, միև առաքեալներուն հետ ելաւ ու իր ձայնը բարձրացնելով ըսաւ.

— Ո՛վ հրեայ մարդիկ եւ դուք ամէնդ որ Երուսաղէմ կը բնակիք, մտի՛կ ըրէք. այս մարդիկը գինովներ չեն, այլ Սուրբ Հոգին ընդունած ըլլալով՝ անոր զօրութեամբ կը խօսին Աստուծոյ մեծամեծ բաները, իրենց անձանօթ բարբառներով: Դուք հիմա ականատես կ'ըլլաք կատարուող դէպքի մը զոր դարեր առաջ Աստուած ըսած է Յովէլ մարգարէին բերնով, «Եւ պիտի ըլլայ որ վերջին օրերը իմ Հոգիւս ամէն մարմինի վրայ պիտի թափեմ ու ձեր տղաքը եւ տղջիկները պիտի մարգարէանան... Եւ իմ ծառաներուս ու աղախիններուս վրայ ալ այն օրերը իմ Հոգիւս պիտի թափեմ ու պիտի մարգարէանան...» (Յով 2.28-29): Ով իսրայէլացի մարդիկ, Յիսուս նազովրեցին Աստուծմէ զրկուած էր, եւ ձեր բոլորին ալ յայտնի էր իր հրաշքներովն ու նշաններովը. սակայն դուք զԱնիկա անօրէններու ձեռքով խաչը հանեցիք ու սպաննեցիք: Բայց Աստուած զԱնիկա յարուցանեց:

Պետրոս առաքեալ նաեւ մէջբերումներ ըրաւ Սաղմոսաց գիրքէն, ուր Դաւիթ մարգարէն գուշակած էր Յիսուսի յարուսթիւնը (Սաղ 16.8-10): Ապա բազմութեան յայտնեց թէ Յիսուս իր յարուսթենէն ետք յաճախ երեւցաւ իրենց եւ իրենք անոր յարուսթեան վկաներն են:

Պետրոս առաքեալին քարոզը մեծապէս տպաւորեց ներկաներէն շատերը, որոնք Յիսուսի հանդէպ իրենց

ըրած թշնամութիւնը յիշելով զղջացին, եւ ապա առաքեալներուն մօտենալով ըսին.

— Մարդիկ, եղբայրներ, ի՞նչ ընենք:

— Ապաշխարեցէք ու ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Բրիստոսի անունով՝ մեղքերու թողութեան համար, — ըսաւ Պետրոս, եւ յորդորեց զանոնք որ Աստուծոյ դառնան:

Այդ օր երեք հազարի չափ մարդիկ դարձի եկան եւ Աստուծոյ խօսքը ընդունելով մկրտուեցան: Անոնք այնուհետեւ առաքեալներուն յարելով սկսան մասնակցիլ անոնց հաւաքոյթներուն, հացի բեկանումին (Ս. Պատարագի արարողութեան) եւ աղօթքներուն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Վերնատան մէջ առաքեալներու գլխաւորութեամբ հաւաքուած բազմութեան միասիրտ, միախոհ եւ միակրօն մթնոլորտը օրինակ պէտք է ըլլայ մեզի: Մենք ալ ազգովին պէտք է ըլլանք միասիրտ, միախոհ եւ միակրօն: Միշտ աղօթելու ենք Աստուծոյ՝ ստանալու համար Սուրբ Հոգիին շնորհքը եւ զօրութիւնը, որպէսզի կարենանք պայքարիլ մեղքին դէմ ու ապրիլ սուրբ կեանք մը, Աստուծոյ փառքին համար:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Առաքեալներ ո՞ր հաւաքուած էին:
- 2) Վերնատան մէջ ուրիշ որո՞նք ներկայ էին:
- 3) Վերնատան մէջ հաւաքուողները ի՞նչ կ'ընէին:
- 4) Աղօթելու ատեն յանկարծ ի՞նչ պատահեցաւ:
- 5) Առաքեալները Սուրբ Հոգին ընդունելով ի՞նչ եղան եւ ի՞նչ ըրին:

6) Երուսաղէմի բնակիչները այս դէպքերը տեսնելով ի՞նչ կ'ըսէին իրարու:

7) Պետրոս առաքեալ ի՞նչ խօսեցաւ բազմութեան:

8) Բազմութեան մէջէն շատեր Պետրոսի քարոզը մտիկ ընելէ ետք ի՞նչ ըսին առաքեալներուն:

9) Պետրոս առաքեալ ի՞նչ ըսաւ անոնց:

10) Այդ օր քանի՞ հազար մարդիկ մկրտուեցան:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Եւ ամէնն ալ Հոգով Սրբով լեցուեցան, ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար»: Գործք 2.4:

### Դ. Դաս

#### Ի ԾԱՆԷ Կաղին Բժշկութիւնը

(Գործք 3.1—4.31)

Հոգեգալուստէն վերջ, օր մը Պետրոս եւ Յովհաննէս առաքեալներ տաճար գացին աղօթելու համար:

Տաճարին Գեղեցիկ կոչուած դրան առջեւ նստած էր մուրացկան մը որ ի ծնէ կաղ էր եւ երբեք չէր կրնար քալել: Այս մուրացկանը Պետրոսն ու Յովհաննէսը տեսնելով ողորմութիւն խնդրեց անոնցմէ:

Պետրոս Յովհաննէսի հետ անոր նայեցաւ եւ ըսաւ.

— Մեզի՛ նայէ:

Կաղ մարդը անոնց դարձաւ եւ ակնկալեց բան մը առնել: Պետրոս առաքեալ ըսաւ անոր.

— Արժաթ ու ոսկի չունիմ, սակայն ինչ որ ունիմ գայն քեզի կու տամ. նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով ելի՛ր ու քալէ՛:

Այս ըսելով Պետրոս անոր աջ ձեռքէն բռնեց ու վերցուց: Իսկոյն անոր ոտքերուն թաթերը եւ կոճերը զօրացան, ու վեր ցատկելով կանգնեցաւ եւ սկսաւ քալել: Ապա առաքեալներուն հետ տաճար մտաւ եւ բարձրաձայն զԱստուած օրհնեց ու փառաւորեց: Տաճարին մէջ գտնուող ժողովուրդը կատարուած հրաշքը տեսնելով զարմացաւ: Մարդիկ ամէն կողմէ սկսան մօտենալ բժշկուած մարդուն որ Պետրոսի եւ Յովհաննէսի յարեր էր:

Պետրոս առաքեալ ապշած բազմութիւնը տեսնելով ըսաւ.

— Ով իսրայէլացի մարդիկ, ինչո՞ւ կը զարմանաք ասոր վրայ, կամ ինչո՞ւ ապշած կը նայիք մեզի, որպէս թէ մեր սեփական զօրութեամբ կամ բարեպաշտութեամբ քալեցուցած ըլլայինք զանիկա: Մեր հայրերուն Աստ-

ուածը փառաւորեց իր Որդին Յիսուսը՝ զոր դուք մատնեցիք եւ ուրացաք Պիղատոսի առջեւ, երբ ան վճռեց արձակել զԱյն. բայց դուք ուրացաք այն Սուրբն ու Արդարը, եւ խնդրեցիք որ մարդասպան մը (Բարաբբան) ձեզի շընորհուի: Դուք սպաննեցիք Կենաց Առաջնորդը՝ զոր Աստուած մեռելներէն յարուցանեց, որուն վկաներն ենք մենք: Ահաւասիկ այս հրաշքը կատարուեցաւ անոր անունով եւ անկէ ներչնչուած հաւատքն է որ առողջութիւն տուաւ այս մարդուն, որուն ականատես էք բոլորդ: Եղբայրներ, գիտեմ որ դուք չգիտնալով ըրիք այս բանը... ուստի ապաշխարեցէք ու դարձի եկէք, որպէսզի ձեր մեղքերը ջնջուին:

Ուրիշ շատ խօսքերով ու մարգարէական գիրքերէն մէջբերումներ ընելով խրատեց զանոնք:

Մինչ Պետրոս եւ Յովհաննէս ժողովուրդին կը խօսէին, վրայ հասան հրեայ քահանաներն ու տաճարին իշխանները եւ զանոնք ձերբակալելով բանտ դրին:

Հետեւեալ օրը հրեաներու քահանայապետը, ծերերն ու դպիրները հաւաքուեցան Երուսաղէմի մէջ եւ Պետրոսն ու Յովհաննէսը իրենց առջեւ հանելով սկսան հարցնել թէ ի՞նչ զօրութեամբ կամ որո՞ւ անունով կատարած էին այդ հրաշքը: Այն ատեն Պետրոս առաքեալ Սուրբ Հոգիով լեցուած ըսաւ անոնց.

— Ժողովուրդի իշխաններ եւ Իսրայէլի ծերեր, եթէ մեզ կը դատէք այն բարիքին համար որ եղաւ տկար մարդու մը, եւ գիտնալու համար թէ ի՞նչպէս բժշկուեցաւ ան, թող յայտնի ըլլայ ձեզի ու ամբողջ Իսրայէլի ժողովուրդին, որ ձեր առջեւ կեցող այս մարդը բժշկուած է անունովն ու զօրութեամբը Յիսուս Քրիստոսի զոր դուք խաչեցիք, սակայն Աստուած մեռելներէն յարուցանեց: Նա է վէմը, զոր դուք՝ շինողներդ անարգեցիք, բայց ան անկիւնադուլը եղաւ: Զկայ փրկութիւն ուրիշ ոեւէ մէկուն միջոցաւ, բացի Յիսուս Քրիստոսէ...

Ատեանի մէջ նստողները կը զարմանային Պետրոսի եւ Յովհաննէսի համարձակ խօսքերուն եւ Աստուածաշունչէն անոնց մէջբերած համարներուն, քանի որ անոնք տգէտ եւ անուս մարդիկ էին: Քահանայապետն ու իշխանները չկրցան հակաճառել առաքեալներուն, որովհետեւ բժշկուած մարդը անոնց հետ կանգներ էր իրենց առջեւ: Ուստի զանոնք ատեանէն դուրս հանելով իրարու հետ խորհրդակցեցան եւ ըսին, «Ի՞նչ ընենք այս մարդոց, վասնզի Երուսաղէմի բոլոր բնակիչներուն յայտնի է թէ ասոնց ձեռքով երեւելի հրաշք մը կատարուեցաւ ու մենք չենք կրնար ուրանալ: Բայց որպէսզի ժողովուրդին մէջ ա՛լ աւելի չտարածուի՝ սպառնանք անոնց, որպէսզի Յիսուսի մասին այլեւս չխօսին ոեւէ մէկուն»:

Ետքը Պետրոսն ու Յովհաննէսը կանչելով պատուիրեցին անոնց որ Յիսուսի մասին ամենեւին չխօսին եւ չուսուցանեն: Սակայն Պետրոս եւ Յովհաննէս ըսին.

— Մենք չենք կրնար չխօսիլ ինչ որ տեսանք ու լսեցինք:

Քահանայապետն ու ատեանին մէջ նստող իշխանները սպառնալիքներով ազատ արձակեցին երկու առաքեալները՝ պատիժի արժանի ոչինչ գտնելով անոնց վրայ եւ վախնալով ժողովուրդէն ալ, որ կը փառաւորէր զԱստուած՝ պատահած հրաշքին համար:

Պետրոս եւ Յովհաննէս ատեանէն դուրս ելլելէ ետք զացին միւս առաքեալներուն քով, որոնք երբ իմացան եղած բաները, ի մի հաւաքուելով աղօթեցին ու զօրութիւն խնդրեցին Աստուծմէ, որպէսզի համարձակօրէն քարոզեն: Աստուած լսեց անոնց աղօթքը, ու մինչ կ'աղօթէին, շարժեցաւ այն տեղը՝ ուր հաւաքուեր էին, եւ բոլորն ալ լեցուեցան Սուրբ Հոգիով:

Պետրոսի եւ Յովհաննէսի քարոզութենէն ետք երկու հազար մարդիկ եւս յարեցան եւ հաւատացին Յիսուս Քրիստոսի, ու հաւատացեալներուն թիւը բարձրացաւ հինգ հազարի:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1) Պետրոս եւ Յովհաննէս առաքեալներու ունեցած եռանդը մեզի օրինակ պէտք է ըլլայ: Անոնք որքան առիթով միշտ Աստուծոյ խօսքը կը փարոզէին մարդոց, որպէսզի անոնք նշարտութիւնը հասկնան եւ իրենց մեղքերուն վրայ զոջալով ապաշխարեն: Մենք ալ Աստուծմէ հեռու ապրող մեր ընկերները համոզելու ենք որ դարձի գան, մեղք չգործեն եւ եկեղեցի ու կիրակնօրեայ դպրոց յամախնն Աստուծոյ խօսքը լսելու համար:

2) Աստուած իր հաւատարիմ զաւակներուն շնորհիւ եւ իմաստութիւն կը պարգեւէ, որպէսզի անոնք համարձակօրէն խօսին ու փարոզեն Սուրբ Աւետարանին պատգամները:

3) Անդադար աղօթելու ենք որպէսզի Աստուծմէ գորութիւն ստանանք իր անուան ու փառքին ծառայելու:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞ր առաքեալները տաճար գացին:
- 2) Տաճարին Գեղեցիկ կոչուած դրան առջեւ ո՞վ նստած էր:
- 3) Կաղ մարդը երկու առաքեալները տեսնելով ի՞նչ ըրաւ:
- 4) Պետրոս ի՞նչ ըսաւ կաղ մարդուն:
- 5) Կաղ մարդը բժշկուելէ ետք ի՞նչ ըրաւ:
- 6) Մարդիկ այս հրաշքը տեսնելով ի՞նչ ըրին:
- 7) Պետրոս առաքեալ ի՞նչ խօսեցաւ բազմութեան:
- 8) Քահանաներն ու տաճարին իշխանները երկու առաքեալները ո՞ր տարին:
- 9) Քահանայապետն ու ծերերը ի՞նչ հարցուցին առաքեալներուն:
- 10) Պետրոս ի՞նչ պատասխանեց անոնց:

11) Հրեայ մեծաւորները իրարու հետ խորհրդակցելէ վերջ ի՞նչ պատուիրեցին առաքեալներուն:

12) Պետրոս եւ Յովհաննէս արձակուելէ ետք ո՞ր գացին:

13) Միս առաքեալները եղած բաները իմանալէ ետք ի՞նչ ըրին:

14) Աղօթելու ատեն ի՞նչ պատահեցաւ:

15) Պետրոսի եւ Յովհաննէսի քարոզութիւնը մտիկ ընող ժողովուրդէն քանի՞ հազար հոգի հաւատքի եկան:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Արծաթ ու ոսկի չունիմ, հապա ինչ որ ունիմ զայն քեզի կու տամ. Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունովը ելիր ու քալէ»: Գործք 3.6:

Անանիայի Եւ Սափիրայի Մահը

(Գործք 4.32-37, 5.1-11)

Առաքեալներու քարոզութեամբ Երուսաղէմի մէջ հազարաւոր մարդիկ Քրիստոսի հաւատացին ու միացան Սուրբ Եկեղեցիին:

Հաւատացեալներուն թիւը որքան աճէր, նոյնքան ալ եկեղեցական գործերը կը բազմանային եւ նիւթական ու դրամական կարիքներն ալ զգալի կ'ըլլային ամէն կողմ: Ուստի հաւատացեալներէն շատեր դրամական նուէրներ բերին ու յանձնեցին առաքեալներուն, որպէսզի այդ գումարները գործածուին եկեղեցիի պայծառութեան եւ ժողովուրդին կարիքներուն համար:

Այդ օրերուն հաւատացեալներ իրարու հետ շատ սիրով ըլլալով կը հասնէին իրարու կարիքներուն: Բոլորը մէկ սիրտ ու մէկ հոգի էին: Ոչ ոք իր ունեցած ստացուածքին համար կ'ըսէր թէ իրն էր, այլ իրենց ամէն ունեցածները հասարակաց կը սեպէին: Անոնց մէջ կարօտութիւն քաշող մը չկար, որովհետեւ ազարակներու եւ տուներու տէր եղողները կը ծախէին իրենց կալուածները եւ անոնց դրամը կը բերէին առաքեալներուն: Անոնք ալ կը բաշխէին զանոնք իւրաքանչիւրին պէտքին համաձայն:

Այդ նուիրատուներէն մէկն էր Բառնաբաս, որ իր ազարակը ծախեց ու անոր դրամը յանձնեց առաքեալներուն:

Անանիա անուկով մարդ մըն ալ կար որ նոյնպէս իր ազարակը ծախեց: Սակայն իր կնոջ՝ Սափիրայի հետ խորհրդակցելով, ազարակին բերած հասոյթին մէկ մասը միայն յանձնեց առաքեալներուն եւ սուտ խօսելով այնպէս ձեւացուց թէ ազարակին հասոյթը ամբողջութեամբ կը նուիրէր:

Պետրոս առաքեալ աստուածային ներշնչումով հասկըցաւ Անանիային կեղծիքը եւ ըսաւ անոր.

— Անանիա, ինչո՞ւ Սատանան քու սիրտդ լեցուց, որ դուն Սուրբ Հոգիին դէմ սուտ խօսիս եւ ազարակին գինէն խորես: Չէ՞ որ քուկդ էր այդ ստացուածքը եւ ծախուելէն ետքն ալ զանձած դրամդ կրնայիր քեզի պահել: Ինչո՞ւ այսպէս վարուեցար: Ի՞նչն ո՛չ թէ մարդոց՝ այլ Աստուծոյ դէմ սուտ խօսեցար:

Անանիա այս խօսքերը լսելով՝ ինկաւ ու հոգին աւանդեց: Երիտասարդները Անանիային մարմինը վերցուցին ու թաղեցին:

Երեք ժամ յետոյ Անանիային կինը՝ Սափիրան, անտեղեակ եղածին, ներս մտաւ: Պետրոս առաքեալ հարցուց անոր.

— Ըսէ՛ ինձի, ազարակը ա՞յդ գինով ծախեցիք:

— Այո, ա՛յդչափ, — պատասխանեց կինը՝ իր ամուսինին պէս սուտ խօսելով:

Պետրոս առաքեալ յանդիմանելով ըսաւ անոր.

— Ինչո՞ւ դուք երկուքդ միաբանեցաք Տիրոջ Հոգին փորձելու: Ահա քու ամուսինդ թաղողները քե՛զ ալ նոյն ձեւով դուրս պիտի հանեն:

Այս յանդիմանութիւնը լսելէ ետք Սափիրա իսկոյն Պետրոսի ոտքերուն առջեւ ինկաւ ու իր հոգին աւանդեց: Երիտասարդները ներս մտնելով անոր մարմինն ալ վերցուցին եւ ամուսինին քովը թաղեցին:

Այս դէպքը լսողներուն վրայ մեծ վախ մը ինկաւ եւ մարդիկ զգուշացան խաբեբայութենէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Անանիա եւ Սափիրա իրենց դրամին միայն մէկ մասը տալով մեղք գործած չէին ըլլար, եթէ չստէին: Սակայն անոնք ցուցամոլութենէ եւ մարդոցմէ փառաւոր-

ուելու տեղէն տարուելով այնպէս ձեւացուցին թէ ագարակին ամբողջ հասոյթը կը նուիրէին առաքելական ֆարոգութեան, եկեղեցիի պայծառութեան եւ կարօտեալներուն համար: Աստուած Պետրոս առաքելին յայտնեց անոնց կեղծաւորութիւնը եւ ապա պատժեց զանոնք:

2) Ուել էրիստոնեայ գգուշանալու է ցուցամոլութեան, փառամոլութեան, ստախօսութեան եւ կեղծաւորութեան:

3) Աստուծոյ ու անոր Ս. Եկեղեցիին տրուած նուէրները պէտք է ըլլան սիրայօժար եւ առանց ցուցամոլութեան:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Անանիա եւ Սափիրա ի՞նչ ծախեցին:
- 2) Անանիա իր զանձած գումարին մէկ մասը որո՞նց տարաւ:
- 3) Պետրոս առաքել ինչո՞ւ յանդիմանեց Անանիան:
- 4) Անանիա Պետրոսին առջեւ ի՞նչալով ի՞նչ եղաւ:
- 5) Երեք ժամ ետք ո՞վ եկաւ Պետրոսին քով:
- 6) Պետրոս առաքել ի՞նչ հարցոյց Սափիրային:
- 7) Սափիրա ի՞նչ պատասխանեց:
- 8) Պետրոս առաքելէն յանդիմանուելէ ետք ի՞նչ եղաւ Սափիրան:
- 9) Այս դէպքը ի՞նչ ազդեցութիւն գործեց ուրիշներուն վրայ:

### Զ. Դաս

#### Առաքեալներու Քարոզութիւնն Ու Հրեաներու Հալածանքը

(Գործք 5.12-42)

Առաքեալները եռանդով ժողովուրդին կը քարոզէին Աստուծոյ խօսքը ամէն տեղ, ի մասնաւորի տաճարի Սողոմոնի Սրահին մէջ: Անոնց ձեռքով շատ հրաշքներ կը գործուէին: Մարդիկ ամէն կողմէ հիւանդները իրենց մահիճներով ու պատգարակներով կը բերէին ու կը դնէին հրապարակներու վրայ, որպէսզի երբ Պետրոս անկէ անցնէր՝ գոնէ իր շուքը հասնէր անոնցմէ մէկուն:

Աննա քահանայապետն ու իր մարդիկը այս բաները տեսնելով նախանձով լեցուեցան եւ առաքեալները ձերբակալելով հասարակաց բանտին մէջ դրին: Բայց Տիրոջ հրեշտակը գիշերը բանտին դռները բացաւ եւ առաքեալները դուրս հանելով ըսաւ.

— Գացէ՛ք, կանգնեցէ՛ք տաճարին մէջ եւ ժողովուրդին քարոզեցէ՛ք:

Յաջորդ առաւօտ քահանայապետն ու իր մարդիկը ատեան կազմեցին եւ հրաւիրեցին Իսրայէլի ձերերը: Ապա մարդ ղրկեցին բանտ՝ բերելու առաքեալները: Սպասաւորները երբ բանտ գացին, առաքեալները հոն չգտան, ու զարմանքով վերադարձան քահանայապետին քով եւ ըսին.

— Բանտը գտանք կատարեալ զգուշութեամբ փակուած եւ պահապանները դրան առջեւ կանգնած: Բացինք դուռը, սակայն ներսը ոեւէ մէկը չգտանք:

Քահանայապետն ու ժողովականները այս բանը իմանալով ապշած մնացին եւ կը մտածէին թէ ի՞նչ եղած կրնային ըլլալ անոնք:

Նոյն միջոցին մէկը գալով լուր բերաւ եւ ըսաւ թէ բանտ դրուած մարդիկը տաճարին մէջ են եւ կը քարոզեն ժողովուրդին:

Տաճարին իշխանը այս լուրը առնելով իր սպասաւորներուն հետ տաճար գնաց եւ առաքեալները ատեանին առջեւ բերաւ:

Քահանայապետը առաքեալներուն ըսաւ.

— Չէ՞ որ խատիւ պատուիրեցինք ձեզի չուսուցանել այդ անունով (Յիսուսի անունով). եւ ահա դուք ձեր ուսմունքով լեցուցիք Երուսաղէմը եւ կ'ուզէք այդ մարդուն (Յիսուսի) արիւնը մեր վրայ բերել:

Պետրոս եւ միւս առաքեալները պատասխանեցին.

— Առաւել Աստուծո՛յ հնազանդիլ պէտք է քան թէ մարդոց: Մեր հայրերուն Աստուածը մեռելներէն յարուցանեց Յիսուսը՝ զոր դուք սպաննեցիք փայտէն (խաչէն) կախելով: Աստուած զԱյն իբրեւ առաջնորդ եւ փրկիչ բարձրացուց իր աջ ձեռքով՝ Իսրայէլի ապաշխարութիւն եւ մեղքերու թողութիւն տալու համար: Մենք ենք վկաները այս բաներուն, ինչպէս նաեւ Սուրբ Հոգին՝ զոր Աստուած տուաւ իրեն հնազանդողներուն:

Քահանայապետն ու ժողովականները այս խօսքերը լսելով կը զայրանային եւ կը խորհէին սպաննել առաքեալները: Սակայն ատեանին մէջ Գամաղիէլ անունով փարիսեցի մը նստած էր ու մտիկ կ'ընէր առաքեալները: Այս մարդը Օրինաց Վարդապետ էր եւ բոլորին առջեւ ազդեցիկ ու յարգուած անձնաւորութիւն մը: Գամաղիէլ ոտքի ելաւ եւ հրամայեց որ առաքեալները պահ մը դուրս հանեն: Ապա ըսաւ ներկաներուն.

— Ո՛վ իսրայէլացի մարդիկ, զգուշաւոր եղէք այս մարդոց նկատմամբ ձեր ընելիքին մէջ: Ասկէ առաջ երեւան եկաւ Թեւղաս\* անունով մէկը, ինքզինք ներկայացնելով կարեւոր անձնաւորութիւն մը: Անոր յարեցան թիւով չորս հարիւրի չափ մարդիկ, սակայն ինք սպաննուեցաւ եւ իր

\* Թեւղաս եւ Յուդա՝ Գալիլիացի մարդիկ՝ իրարմէ տարբեր ժամանակներու մէջ իրենց շուրջը բաւական մարդիկ հաւաքելով ապստամբական շարժումներ կազմակերպած էին. սակայն իրենք սպաննուելէ ետք իրենց հետնորդներն ալ ցիրուցան եղան:

հետեւորդներն ալ ցրուեցան ու չքացան: Անկէ յետոյ մէջտեղ ելաւ Յուդա Գալիլիացին\* եւ անոր հետեւէն ալ շատեր գացին: Երբ ինք մեռաւ՝ իր հետեւորդներն ալ ցիրուցան եղան: Արդ, ես ձեզի կ'ըսեմ, այդ մարդոցմէ հետու կեցէք եւ թո՛ղ տուէք զանոնք: Եթէ այդ խորհուրդը կամ գործը մարդոցմէ է՝ պիտի քակտուի եւ անոնք պիտի չյաջողին: Իսկ եթէ Աստուծմէ է՝ չէք կրնար զայն քակտել: Կրնայ պատահիլ որ Աստուծոյ դէմ մարտնչող ալ գտնուիք:

Ատեանին մէջ նստողները Գամաղիէլի խօսքերուն հաւանութիւն տուին եւ առաքեալները մեռցնելու խորհուրդէն ետ կեցան, եւ զանոնք զանահարելէ ետք արձակեցին՝ պատուիրելով որ անգամ մըն ալ Յիսուսի անունով չխօսին:

Առաքեալները ատեանէն դուրս ելան եւ ուրախացան որ Յիսուսի անուան համար անարգուելու արժանացան:

Այս դէպքէն ետք առաքեալները ամէն օր դարձեալ թէ՛ տաճարին մէջ եւ թէ՛ տուներէ ներս կը քարոզէին ու կ'աւետարանէին Յիսուս Քրիստոսը:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1) Աստուած միշտ իր ծառաներուն հետն է եւ կ'օժանդակէ անոնց, որպէսզի անոնք կարենան իր խօսքը քարոզել:

2) Աստուծոյ զաւակները եւ մանուաւոր պաշտօնեաները համարձակօրէն դաւանելու են Յիսուս Քրիստոսը որպէս Տէր եւ Աստուած:

3) Պետք է հնազանդիլ աւելի Աստուծոյ, քան թէ մարդոց: Երբ մարդիկ մեզ Աստուծոյ կամքին դէմ մղեն, պետք է հնազանդիմք անոնց, այլ ամէն զոհողութիւն յանձնելու ենք՝ կատարելու համար Աստուծոյ օրէնքներն ու պատուիրանները:



4) Առաքելներուն նման երանելի են բոլոր այն քրիստոնեաները, որոնք Յիսուս Քրիստոսի անուան համար կը նախատուին, կը հալածուին ու կը չարչարուին, քանզի անոնց վարձքը շատ է երկինքի մէջ:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Առաքելներու ձեռքով ի՞նչ բաներ տեղի կ'ունենային:
- 2) Որո՞նք ձերբակալեցին առաքելները եւ ո՞ր դրին զանոնք:
- 3) Գիշերը ո՞վ բացաւ բանտին դռները եւ ի՞նչ ըսաւ առաքելներուն:
- 4) Յաջորդ օր սպասատրները բանտը պարսպ գտնելով որո՞ւ քով գացին եւ ի՞նչ ըսին:
- 5) Նոյն միջոցին առաքելները ո՞ր էին եւ ի՞նչ կ'ընէին:
- 6) Առաքելները ատեանին առջեւ հանուելէ ետք, քահանայապետը ի՞նչ ըսաւ անոնց:
- 7) Պետրոս եւ միս առաքելները ի՞նչ պատասխանեցին:
- 8) Ժողովականները առաքելները մտիկ ընելէ ետք ի՞նչ կ'ուզէին ընել:
- 9) Գամաղիէլ ի՞նչ ըսաւ ատեանի մէջ նստողներուն:
- 10) Գամաղիէլի խօսքը մտիկ ընելէ ետք անոնք ի՞նչ ըրին առաքելներուն:
- 11) Առաքելները արձակուելէ ետք ինչո՞ւ ուրախացան:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Առաւել Աստուծո՛յ հնազանդիլ պէտք է քան թէ մարդոց»:  
Գործք 5.29:

### Է. Դաս

#### Ս. Ստեփանոս Սարկաւագին Նահատակութիւնը (Գործք 6-7)

Երուսաղէմի մէջ օրէ օր կ'աճէր Աստուծոյ խօսքը եւ Յիսուսի հաւատացողներուն թիւը կը բազմանար: Իսկ առաքելներուն գործն ալ կը բարդանար: Անոնք Աստուծոյ խօսքին քարոզութեամբ եւ աղօթքով զբաղած ըլլալով պէտք եղածին պէս չէին կրնար հասնիլ ու հսկել հաւատացեալներու ամէն գործերուն, մանաւանդ աղքատներուն համար ամենօրեայ նպաստաբաշխութեան:

Յունախօս հրեայ հաւատացեալներ առաքելներուն ներկայանալով զանգատեցան եւ յայտնեցին թէ իրենց այրիները կ'անտեսուին ամենօրեայ նպաստաբաշխումին մէջ:

Առաքելները անոնց զանգատը նկատի առնելով որոշեցին սարկաւագներ\* ձեռնադրել եկեղեցւոյ սպասաւորութեան համար, որպէսզի անոնք կատարէին այդ կարգի գործերը եւ իրենք զբաղէին միայն Աստուծոյ խօսքին քարոզութեամբ ու աղօթքով:

Հաւատացեալներ իրենց մէջէն ընտրեցին եօթը հոգի եւ զանոնք բերին առաքելներուն առջեւ: Անոնք ալ աղօթելով իրենց ձեռքերը դրին անոնց վրայ եւ սարկաւագութեան աստիճան շնորհեցին:

\* Սարկաւագ կը նշանակէ օգնական, գործակից, սպասար: Եկեղեցւոյ մէջ սարկաւագին պաշտօնն է՝ սպասարել սուրբ սեղանին՝ խնկարկել, Աւետարան կարդալ, քարոզասացութիւն ընել եւ վերաբերում կատարել: Սարկաւագները օգնականներն են քահանայներուն: Անոնք պէտք է ըլլան աստուածավախ, ծանրաբարոյ, զգաստ եւ անկեղծ մարդիկ:

Այս եօթը սարկաւազներէն մէկն էր Ս. Ստեփանոս, որ հաւատքով ու Սուրբ Հոգիով լեցուած՝ համարձակ կերպով կը քարոզէր Քրիստոսի աւետարանը եւ Աստուծոյ զօրութեամբ հրաշքներ կը գործէր:

Չարամիտ հրեաներ չհանդուրժեցին Ստեփանոսի քարոզութիւններուն եւ անոր ձեռքով կատարուած հրաշքներուն: Ուստի զրպարտութիւններ ընելով ժողովուրդը զրգոեցին անոր դէմ եւ զայն բռնելով տարին հրեաներու ատեանին առջեւ ու սուտ վկաներու բերնով ըսին.

— Այս մարդը չի դադրիր հայհոյալից խօսքեր ընելէ սուրբ տեղին (տաճարին) եւ օրէնքներուն դէմ: Մենք լսեցինք ատոր բերնէն որ կ'ըսէր թէ Յիսուս Նազովրեցին պիտի քակէ այս տաճարը եւ պիտի փոխէ այն օրէնքները զորս Մովսէս աւանդած է մեզի:

Ատեանին մէջ նստողները երբ Ստեփանոսի նայեցան, անոր դէմքը հրեշտակի պէս տեսան: Այն ատեն քահանայապետը հարցուց Ստեփանոսի.

— Քեզի դէմ եղած այս ամբաստանութիւնները ստո՞յգ են:

Ստեփանոս Աբրահամ Նահապետէն սկսելով յիշեց Սուրբ Գրոց մէջ գրուած դէպքերը եւ Աստուծոյ խօսքէն մէջբերումներ ընելով հաստատեց ու վկայեց թէ Յիսուս Աստուծոյ Միածին Որդին Քրիստոսն է որ աշխարհ եկաւ: Ապա հրեաներու թերութիւններն ու սխալները իրենց երեսին զարնելով ըսաւ.

— Ո՛վ խտապարանոցներ... դուք ամէն ատեն Սուրբ Հոգիին հակառակ կը կենաք: Ինչ որ ըրեր են ձեր հայրերը, նոյնը դուք կ'ընէք հիմա: Ձեր հայրերը մարգարէներէն ո՞ր մէկը չհալածեցին ու չսպաննեցին զանոնք՝ որոնք առաջուրէն պատմեցին այն Արդարին (Քրիստոսի) գալստեան մասին, որուն մատնիչներն ու սպաննիչները եղաք դուք: Առիթ օրէնքը հրեշտակներու ձեռքէն ու չպահեցիք զայն:

Հրեաներ Ստեփանոսի խօսքերը լսելով զայրացան եւ սկսան ակռայ կրճտել անոր վրայ. իսկ Ստեփանոս Սուրբ Հոգիով լեցուած երկինք նայեցաւ ու տեսաւ Աստուծոյ փառքը, եւ Յիսուսը՝ կանգնած Աստուծոյ աջ կողմը: Այս տեսարանին առջեւ Ստեփանոս գոչեց.

— Ահա կը տեսնեմ երկինքը բացուած ու Որդին Մարդոյ Աստուծոյ աջ կողմը կանգնած:

Այս խօսքերը լսելով հրեաներ ա՛լ աւելի զայրացան, բարձրաձայն աղաղակեցին իրենց ականջները գոցելով: Ապա բոլորը մէկ յարձակեցան Ստեփանոսի վրայ ու զայն քաղաքէն դուրս հանելով սկսան քարկոծել:

Մինչ անոնք կը քարկոծէին՝ Ստեփանոս կ'աղօթէր ու կ'ըսէր, «Տէր Յիսուս, ընդունէ՛ իմ հոգիս»: Ապա ծունկի գալով բարձրաձայն աղաղակեց.

— Տէր, այս արարքը մեղք մի՛ համարեր ասոնց:

Քարերու տեղատարափին տակ Ստեփանոս աւանդեց իր հոգին: Ան եղաւ քրիստոնէութեան առաջին նահատակը եւ կոչուեցաւ Նախավկայ:

Ստեփանոսը քարկոծողները ազատօրէն շարժելու համար՝ իրենց հանդերձները պահ դրած էին Սօղոս անունով երիտասարդի մը քով որ կամակից էր անոր սպաննուելուն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Ս. Ստեփանոս սարկաւազին մաքուր նկարագիրը պէտք է օրինակ ըլլայ բոլոր քրիստոնեաներուն: Անոր նկարագրին գլխաւոր գիծերն էին՝ ա) գօրաւոր հաւատք, բ) սրտի մաքրութիւն, գ) նշմարտութիւնը խօսելու համարձակութիւնն եւ քաջութիւն, դ) ներողամտութիւն, եւ այլն:

2) Ոեւէ քրիստոնեայ Ս. Ստեփանոսի նման պէտք է ներէ զինք չարչարողներուն եւ իրեն նեղութիւն պատճառողներուն: Եթէ մեք մեր հակառակորդներուն ու

թշնամիներուն յանցանքները չնեղեմք եւ անոնց հոգիներուն փրկութեան համար չաղօթեմք, չեմք կրնար ճշմարիտ քրիստոնեաներ ըլլալ:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Առաքելները քանի՞ սարկաւազներ ձեռնադրեցին:
- 2) Ստեփանոս ինչպիսի՞ մէկն էր:
- 3) Չարամիտ հրեաներ Ստեփանոսը բռնելով ո՞ր տարին:
- 4) Չարամիտ հրեաներ սուտ վկաներու բերելով ի՞նչ ըսին Ստեփանոսի համար:
- 5) Ատեանին մէջ ճատողները Ստեփանոսի երեսը ինչպէ՞ս տեսան:
- 6) Ստեփանոս ի՞նչ խօսեցաւ ատեանին առջեւ:
- 7) Ստեփանոս իր աչքերը երկինք վերցնելէ ետք ի՞նչ ըսաւ:
- 8) Հրեաներ Ստեփանոսը քաղաքէն դուրս հանելով ի՞նչ ըրին:
- 9) Ստեփանոս զինք քարկոծողներուն համար ի՞նչ ըսելով աղօթեց:
- 10) Ստեփանոսը քարկոծողները իրենց հանդերձները որո՞ւ քով պահ դրած էին:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Տէր, այս մեղքը մի՛ սեպեր ատոնց»: Գործք 7.59:

### Ը. Դաս

### Քարոզութիւն Սամարիայի Մէջ

(Գործք 8.1-25)

Ստեփանոս Սարկաւազի մահէն վերջ հրեաներ մեծ հալածանք հանեցին Երուսաղէմի եկեղեցիին դէմ, այնպէս որ առաքեալներէն զատ բոլոր հաւատացեալները ցիրուցան եղան Հրէաստանի եւ Սամարիայի զանազան կողմերը: Սակայն անոնց ցրուումը պատճառ դարձաւ Քրիստոսի Աւետարանին աւելի տարածուելուն: Անոնք կը պայքարէին տեղէ տեղ եւ Աստուծոյ խօսքը կը քարոզէին:

Ս. Ստեփանոսի ընկերներէն՝ Փիլիպպոս սարկաւազն ալ Սամարիայի մէկ քաղաքը երթալով սկսաւ հոն քարոզել Յիսուսի մասին: Մարդիկ Փիլիպպոսի ձեռքով կատարուած հրաշքները, նշաններն ու բժշկութիւնները տեսնելով ուշադրութիւն դարձուցին իրեն եւ շատ շատեր հաւատքի գալով մկրտուեցան: Սամարիայի մէջ բազմաթիւ անդամալոյծներ, կաղեր կը բժշկուէին Փիլիպպոսի աղօթքով ու պիղծ ոգիներ դուրս կ'ելլէին այսահարներու մէջէն:

Այդ քաղաքին մէջ կ'ապրէր Սիմոն անուկով մարդ մը, որ մոգութիւն կ'ընէր եւ Սամարացիները կ'ապշեցնէր իր կախարդութիւններով: Այս մարդն ալ ուրիշներու նման հաւատքի գալով մկրտուեցաւ եւ սկսաւ Փիլիպպոսի ետեւէն երթալ: Ան կը զարմանար Փիլիպպոսի ձեռքով կատարուող հրաշքներուն, բժշկութիւններուն եւ նշաններուն վրայ:

Սամարիայի մէջ կատարուող քարոզութիւններուն եւ մկրտութիւններուն լուրը Երուսաղէմ հասնելով մեծ ուրախութիւն պատճառեց առաքեալներուն, որոնք որոշեցին Պետրոսն ու Յովհաննէսը հոն ղրկել:

Պետրոս եւ Յովհաննէս Սամարիա երթալով նորահա-  
ւատներուն վրայ իրենց ձեռքերը դրին ու աղօթեցին որ-  
պէսզի անոնք Սուրբ Հոգին ստանան:

Սիմոն մոգ երբ տեսաւ թէ առաքեալներու ձեռնադ-  
րութեամբ Սուրբ Հոգին կը տրուի, դրամ առաջարկելով  
ըսաւ Պետրոսի եւ Յովհաննէսի.

— Ինձի ալ տուէք այս իշխանութիւնը, որպէսզի որու  
վրայ որ ձեռք դնեմ՝ անիկա Սուրբ Հոգին առնէ:

Պետրոս առաքեալ ըսաւ անոր.

— Բու արծաթդ քեզի հետ թող կորսուի, քանի որ  
կարծեցիր թէ Աստուծոյ պարգեւը ստակով կ'առնուի:  
Դուն այդ բանին մէջ մասն եւ բաժին չես կրնար ունենալ,  
որովհետեւ քու սիրտդ Աստուծոյ առջեւ ուղիղ չէ: Ուստի  
զղջա՛ ու ե՛տ դարձիր քու շարութենէդ եւ աղաչէ՛ Տիրոջ,  
թերեւս ներուի քեզի քու սրտիդ շար խորհուրդներուն հա-  
մար, որովհետեւ ես քեզ մաղձի դառնութեան եւ անիրա-  
ւութեան կապին մէջ կը տեսնեմ:

— Դուք աղաչեցէք Տիրոջ ինձի համար, որպէսզի ձեր  
այդ ըսածներէն բան մը չգայ վրաս, — ըսաւ Սիմոն Առաք-  
եալներուն:

Այնուհետեւ առաքեալները Սամարացիներու գիւղե-  
րուն մէջ Աւետարանը քարոզեցին եւ ապա դաձան Երու-  
սաղէմ:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Հայածանքը չի կրնար կասեցնել Աւետարանի քա-  
րոզութիւնը: Հրեաներ իրենց հայածանքով պատնառ  
դարձան որ Հրէաստանի եւ Սամարիայի ամէն կողմերը  
քարոզուի Քրիստոսի Աւետարանը:

2) Իւրաքանչիւր քրիստոնեայ, ուր որ ալ գտնուի, ջա-  
նալու է իր նմանները Աստուծոյ առաջնորդել: Փիլիպպոս  
սարկաւազին գործունէութիւնը օրինակ պետք է ըլլայ մեր

քոյորին: Մենք ալ մեր կարգին եկեղեցիէն ու կիրակնօր-  
եայ դպրոցէն մեր սորվածները կրնանք ուրիշներուն  
պատմել եւ այդ ձեւով Աստուծոյ խօսքը տարածել:

3) Այս դասին մէջ կը տեսնենք թէ առաքեալներ մկրթ-  
տուողներուն վրայ իրենց ձեռքը դրին (դրոշմեցին) եւ ա-  
նոնք ստացան Սուրբ Հոգին: Մեր եկեղեցին առաքելական  
այդ աւանդութեան համաձայն մկրտուող երեխային ճա-  
կատը եւ մարմինին այլ մասերը Սուրբ Միւտոնով կը դրոշ-  
մէ (կը կնքէ, ձեռք կը դնէ), որպէսզի մկրտուողը ստանայ  
Սուրբ Հոգւոյն շնորհքը: Միւտոնը կը խորհրդանշէ Սուրբ  
Հոգին:

4) Սիմոն մոգը կարծեց թէ դրամ տալով կրնայ ստա-  
նալ ձեռք դնելու իշխանութիւն եւ կամ եկեղեցական աս-  
տիճան. բայց Պետրոս առաքեալ յանդիմանեց զայն եւ  
մատնանշեց անոր մեղքերը, յանցանքներն ու սխալ ըն-  
թացքը: Եթէ ոնէ մէկը եկեղեցական ըլլալ կը փափաքի,  
ամէն բանէ առաջ մեղքէ հեռու մնալով իր անձը անարատ  
պահելու է. ապա աղօթքով ու Սուրբ Գրոց սերտողու-  
թեամբ պատրաստուելու է Աստուծոյ ծառայութեան մէջ  
մտնելու համար: Յետ քննութեան Եպիսկոպոսը կը ձեռ-  
նադրէ զայն՝ եթէ արժանի գտնէ: Եկեղեցական աստի-  
ճանները դրամով չեն ստացուիր, այլ՝ կոչումով:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ս. Ստեփանոսի մահէն վերջ ի՞նչ պատահեցաւ:
- 2) Հայածնող հաւատացեալները ո՞ր փախան:
- 3) Փիլիպպոս սարկաւազ ո՞ր գացած էր:
- 4) Փիլիպպոս ի՞նչ կ'ընէր Սամարիայի մէջ:
- 5) Մարդիկ Փիլիպպոսի կատարած հրաշքներն ու բժշկու-  
թիւնները տեսնելով ի՞նչ ըրին:
- 6) Երուսաղէմէն ո՞ր առաքեալները Սամարիա գացին:
- 7) Պետրոս եւ Յովհաննէս մկրտուողներուն ի՞նչ ըրին:

8) Ո՞վ էր Սիմոն մոգ:

9) Սիմոն մոգ առաքելներուն դրամ առաջարկելով ի՞նչ

ըսաւ:

10) Պետրոս առաքել ի՞նչ ըսաւ Սիմոն մոգին:

11) Սիմոն իր բանցանքին ծանրութիւնը զգալով ի՞նչ խրնդ-  
րեց առաքելներէն:

## Թ. Դաս

### Փիլիպպոս Եւ Եթովպացի Ներքինին

(Գործք 8.26-40)

Օր մը Տիրոջ հրեշտակը Փիլիպպոս սարկաւագին  
ըսաւ.

— Ելիր ու Երուսաղէմէն դէպի Գազա իջնող ճամբան՝  
անապատ գնա:

Փիլիպպոս հնազանդեցաւ ու երթալով հոն տեսաւ  
Եթովպացի մարդ մը որ իր կառքին մէջ նստած կը կարդար  
Սաայի մարգարէին գիրքը: Այս մարդը Եթովպիացի թա-  
գուհին ազդեցիկ ներքինին եւ անոր գանձերուն վերա-  
կացուն էր, որ Երուսաղէմ եկած էր Աստուծոյ երկրպագե-  
լու, եւ հիմա իր երկիրը կը վերադառնար:

Փիլիպպոս Սուրբ Հոգիին թելադրութեամբ մօտեցաւ  
կառքին եւ ըսաւ ներքինին.

— Արդեօք կարդացածդ կը հասկնա՞ս:

— Ինչպէ՞ս կրնամ հասկնալ, եթէ մէկը զիս չառաջ-  
նորդէ, — ըսաւ ներքինին եւ աղաչեց Փիլիպպոսի իր քով՝  
կառքին մէջ նստիլ:

Փիլիպպոս ներքինին քով նստելով հետեւեցաւ անոր  
կարդացած հատուածին որ հետեւեալն էր. — «Ոչխարի պէս  
մորթուելու տարուեցաւ, ու իր խուզողին առջեւ մունց կեցող  
գառնուկի պէս այնպէս իր բերանը չի բանար...»:

— Կ'աղաչեմ, — ըսաւ ներքինին, — մարգարէն այս  
խօսքերը որո՞ւ համար կ'ըսէ:

Փիլիպպոս բացատրեց անոր, թէ այդ խօսքերը Յիսուս  
Քրիստոսի համար են, որ մարգարէական գրութիւններուն  
համեմատ աշխարհ եկաւ եւ գառնուկի նման զոհուեցաւ  
խաչին վրայ եւ ընդդիմութիւն չցուցուց զինք չարչա-  
րողներուն, այլ՝ մեղաւոր մարդկութիւնը փրկելու համար

իր սուրբ արիւնը թափեց: Նաեւ շատ խօսքերով վկայութիւններ բերաւ Աստուածաշունչէն, թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է եւ ո՛վ որ Անոր հաւատայ, յաւիտենական կեանք կ'ունենայ:

Ներքինին Փիլիպպոսի խօսքերը մտիկ ընելով հաւատաց, ու երբ ջուրի մը քով եկան, ըսաւ.

— Ահաւասիկ ջուր, ի՞նչ բան կ'արդիւ է զիս մկրտուելէ:

— Եթէ կը հաւատաս բոլոր սրտովդ՝ կարելի է, — ըսաւ Փիլիպպոս:

— Կը հաւատամ թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է, — ըսաւ ներքինին ու հրամայեց կառքը կեցնել:

Փիլիպպոս ներքինին հետ միասին ջուրը մտաւ ու զայն մկրտեց: Երբ որ ջուրէն դուրս ելան, Սուրբ Հոգին իջաւ ներքինին վրայ եւ Տիրոջ հրեշտակը յափշտակեց Փիլիպպոսը ու ներքինին այլեւս չտեսաւ զայն:

Փիլիպպոս ինքզինք գտաւ Ազովտոսի մէջ, ուրկէ սկսաւ շարունակել իր աւետարանչութիւնը՝ պտրտելով բոլոր քաղաքները:

Կը պատմուի թէ Եթովպացի ներքինին իր երկիրը երթալով քարոզեց Յիսուս Քրիստոսը եւ շատեր իր միջոցաւ քրիստոնեայ դարձան:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Որեւէ ատեն երբ առիթ ներկայանայ, պէտք է ջամբենք Աստուծոյ խօսքը մեր ընկերներուն, քարեկամներուն եւ մեր շրջապատի մարդոց, ջանալով զանոնք Յիսուսի առաջնորդել:

2) Եթովպացի ներքինին նման յաճախ մենք ալ կըրնանք չհասկնալ Աստուածաշունչէն մեր կարդացած կարգ մը հատուածները: Այդպիսի պարագաներուն պէտք է դիմենք մեր եկեղեցւոյ հոգեւոր իշխանութեան՝ լուսաբանուելու համար:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Տիրոջ հրեշտակը ի՞նչ ըսաւ Փիլիպպոսի:
- 2) Փիլիպպոս որո՞ւ հանդիպեցաւ:
- 3) Եթովպացի ներքինին ո՞ր եկած էր եւ ապա ո՞ր կը վերադառնար:
- 4) Ներքինին ո՞ր գիրքը կը կարդար:
- 5) Փիլիպպոս ներքինին մօտենալով ի՞նչ հարցուց:
- 6) Ներքինին ի՞նչ պատասխանեց Փիլիպպոսի:
- 7) Փիլիպպոս որո՞ւ մասին խօսեցաւ ներքինին:
- 8) Երբ ջուրի մը քով եկան ներքինին ի՞նչ ըսաւ:
- 9) Ներքինին մկրտութենէն վերջ Աստուծոյ հրեշտակը ի՞նչ ըրաւ Փիլիպպոսը:

Ժ. Դաս

**Սօղոսի Դարձը**

(Գործք 9.1-30)

Մինչ առաքեալներն ու իրենց աշակերտները ամէն կողմ Յիսուսի Աւետարանը կը քարոզէին, չարամիտ հրեաներն ալ կը շարունակէին հալածել Յիսուսի հաւատացեալները:

Հալածող հրեաներուն մէջ կը գտնուէր Սօղոս կամ Սաւուղ անունով երիտասարդ մը, որ տունէ տուն մտնելով՝ այր թէ կին կը բռնէր ու կը բանտարկէր: Ան կատաղի հակառակորդ մըն էր Քրիստոսի հետեւորդներուն, եւ ուր որ անոնց հանդիպէր՝ կը հալածէր ու կը շարժարէր զանոնք, կարծելով թէ իր արարքը աստուածահաճոյ գործ մըն է: Սուրբ Ստեփանոսի արիւնը թափուելու ատեն ինք ալ կամակից էր անոր մահուան եւ զայն քարկոծողներուն հանդերձները կը պահէր:

Սօղոս իր հալածանքները սաստկացնելու համար օր մը ներկայացաւ հրեաներու քահանայապետին եւ անկէ յանձնարարական թուղթեր առաւ, որպէսզի երթար Դամասկոս եւ հոն գտնուող հաւատացեալներն ալ ձերբակալելով Երուսաղէմ բերէր:

Դամասկոս երթալու ատեն, երբ քաղաքին մօտեցած էր, յանկարծ երկինքէն մեծ լոյս մը փայլատակեց իր շուրջ: Սօղոս իսկոյն գետին ինկաւ եւ լսեց ձայն մը որ կ'ըսէր իրեն.

— Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ զիս կը հալածես:

— Ո՞վ ես դուն, Տէր, — հարցուց Սօղոս:

— Ես եմ Յիսուսը, զոր դուն կը հալածես, — ըսաւ Տէրը իրեն. — դժուար է քեզի՝ խթանի դէմ կից զարնել:

— Տէ՛ր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ, — ըսաւ Սօղոս դողով եւ ապշուեցաւ:

— Ելի՛ր ու քաղաքը մտիր եւ հոն քեզի պիտի ըսուի թէ ինչ պէտք է ընես, — ըսաւ Յիսուս:

Սօղոսին ընկերացող մարդիկը ապշած կեցեր էին: Անոնք միայն ձայնը կը լսէին եւ մէկը չէին տեսներ:

Սօղոս գետնէն ելաւ. սակայն իր աչքերը ալ չէին տեսներ: Իր ընկերները ձեռքէն բռնելով զինք Դամասկոս մտցուցին: Հոն կեցաւ երեք օր առանց տեսնելու, եւ ծոմապահուեցաւ աղօթեց իր մեղքերուն թողութեան համար:

Դամասկոսի մէջ կ'ապրէր բարեպաշտ մարդ մը, Անանիա անունով: Յիսուս տեսիլքի մէջ անոր ըսաւ.

— Անանիա, ելիր ու գնա այն փողոցը որ Ուղիղ կը կոչուի. հոն փնտռէ Սօղոս անունով Տարսոնացի մը որ դեռ աղօթք կ'ընէ: Տեսիլքի մէջ անոր երեւցաւ Անանիա անունով մարդ մը, որ իր տունը մտնելով՝ ձեռք դրաւ անոր վրայ որպէսզի տեսնէ:

— Տէր, — ըսաւ Անանիա, — շատերէ իմացայ թէ այդ մարդը որքա՛ն չարիքներ հասցուցած է քու սուրբերուդ, Երուսաղէմի մէջ, եւ հիմա հոս ալ եկած է քու անունդ կանչողները ձերբակալելու:

— Դուն գնա՛, — ըսաւ Յիսուս Անանիային, — ան ինծի համար ընտիր անօթ մըն է:

Անանիա հնազանդեցաւ ու գնաց Սօղոսի մօտ ու իր ձեռքերը անոր վրայ դնելով աղօթեց եւ ըսաւ.

— Սաւուղ եղբայր, վե՛ր նայէ, Տէ՛րը զրկեց զիս, այն Յիսուսը՝ որ ճամբուն վրայ քեզի երեւցաւ, որպէսզի տեսութիւնդ ստանաս եւ լեցուիս Ս. Հոգիով:

Անանիայի խօսքերէն ու աղօթքէն ետք Սօղոսի աչքերէն թփերու պէս բաներ ինկան եւ իսկոյն սկսաւ տեսնել: Սօղոս ուրախուեցաւ ոտքի ելաւ ու մկրտուեցաւ: Այնուհետեւ ան գնաց Արարիա եւ ապա վերադարձաւ Դամասկոս եւ սկսաւ քարոզել թէ Յիսուս Աստուծոյ Որդին է: Բոլոր

լսողները կը զարմանային եւ իրարու հարց կու տային ըսելով, «Այս չէ՞ր այն մարդը որ Երուսաղէմի մէջ կը հալածէր Յիսուսի հաւատացողները եւ հոս ալ եկեր էր զանոնք կապելով քահանայապետներուն տանելու համար»:

Չարամիտ հրեաներ Սօղոսին փոփոխութիւնը տեսնելով սկսան հակաճառել անոր դէմ: Բայց Սօղոս իր համարձակ պատասխաններով պապանձեցուց զանոնք: Ասոր վրայ անոնք սխտով ու ատելութեամբ լեցուեցան անոր դէմ եւ որոշեցին սպաննել: Սօղոս այս բանը իմանալով ուզեց հեռանալ Դամասկոսէն. սակայն հրեաները քաղաքի պարիսպներուն դռներուն առջեւ դարանակալ սպասեցին զինք բռնելու համար:

Այս կացութեան առջեւ հաւատացեալներ զիչեր ատեն, գաղտնօրէն պարիսպին վրայէն զամբիւղով վար իջեցուցին Սօղոսը որպէսզի փախչի եւ իր անձը ազատէ:

Ժամանակ մը ետք, երբ Սօղոս Երուսաղէմ դնաց, ջանաց աշակերտներուն յարիլ, բայց անոնք կը վախնային ու կը զգուշանային իրմէ: Ի վերջոյ օր մը Բառնարաս Սօղոսը տարաւ առաքեալներուն մօտ եւ անոնց պատմեց Դամասկոսի ճամբուն վրայ Յիսուսի երեւումը եւ Սօղոսին դարձը՝ իր մանրամասնութիւններով: Ասոր վրայ Երուսաղէմի եկեղեցին իր մէջ ընդունեց Սօղոսը: Բայց անիկա չկրցաւ երկար ատեն մնալ Երուսաղէմի մէջ, որովհետեւ տեղւոյն մոլեռանդ հրեաները ուզեցին զինք սպաննել. եւ այդ պատճառով հաւատացեալ եղբայրները զինք կեսարիա ղրկեցին եւ ապա անկէ ալ Տարսոն:

Հետագային Սօղոս եռանդով քարոզեց Քրիստոսի Աւետարանը. դարձաւ Քրիստոսի առաքեալ եւ կոչուեցաւ Պօղոս:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Սօղոս երկնային տեսիլքին ու Աստուծոյ ձայնին անհնազանդ չեղաւ: Ան խոնարհեցաւ եւ Տիրոջ հարցուց թէ ի՞նչ ընելու էր: Ապա իր ահաւոր մեղքերուն համար լացաւ ու Աստուծմէ թողութիւն խնդրեց:

2) Յաւատի մարդիկ, Սօղոսի նման, անգիտակցարար կը պայքարին հաւատացեալներու դէմ եւ մեծ վնասներ կը հասցնեն Քրիստոսի Սուրբ Եկեղեցիին եւ անոր ծառաներուն: Սակայն օր մըն ալ կ'անդրադառնան իրենց սխալին եւ դառնապէս կը զղջան:

3) Սօղոսին գոչումը օրինակ պէտք է ըլլայ բոլոր մեղաւորներուն: Անոր համար մենք ալ հնազանդելու ենք Աստուծոյ ձայնին որ ամէն ատեն մեզ կը զգուշացնէ մեղք գործել:

4) Աստուած ինչպէս որ Սօղոսը իր ձեռքին մէջ առնելով փոխակերպեց Պօղոս առաքեալի, նոյնպէս ալ կրնայ մեզ առնել իր ձեռքին մէջ եւ վերածել ընտիր անօթի մը՝ Սուրբ Եկեղեցոյ սպասաւորութեան համար, եթէ մեր սիրտերը իրեն նուիրենք:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Սօղոս ինչո՞ւ համար Դամասկոս կ'երթար:
- 2) Քաղաքին մօտենալու ատեն ի՞նչ պատահեցաւ:
- 3) Երկինքէն եկող ձայնը ի՞նչ կ'ըսէր Սօղոսին:
- 4) Սօղոս ի՞նչ ըսաւ Յիսուսի:
- 5) Սօղոսին աչքերը ի՞նչ եղան:
- 6) Սօղոս քանի՞ օր ծոմ պահելով աղօթեց:
- 7) Սօղոսին աչքերը որո՞ւ աղօթքով բացուեցան:
- 8) Սօղոս մկրտուելէ ետք ի՞նչ ըրաւ:
- 9) Չարամիտ հրեաներ ի՞նչ ուզեցին ընել Սօղոսը:
- 10) Սօղոս ինչպէ՞ս փախաւ Դամասկոսէն:
- 11) Հետագային Սօղոս ի՞նչ կոչուեցաւ:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Տէր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ»: Գործք 9.6:



## ԺԱ. Դաս

### Պետրոս Առաքեալ Կը Քարոզէ Եւ Հրաշքներ Կը Գործէ

(Գործք 9.31-43)

Պետրոս առաքեալ զանազան տեղեր կը պտըտէր ու կը քարոզէր Քրիստոսի Աւետարանը եւ նոյն ատեն կը բժշկէր հիւանդներն ու կերպ-կերպ ցաւեր ունեցողները: Օր մըն ալ այցելութիւն տուաւ Լիւզղայի հաւատացեալներուն: Հոն հանդիպեցաւ Ենէա անունով մարդու մը որ ութ տարիէ ի վեր անդամալոյծ էր:

— Ենէա՛, Յիսուս Քրիստոս քեզ կը բժշկէ, ելի՛ր ու շտկէ անկողինդ, — ըսաւ Պետրոս անոր:

Ենէա իսկոյն ոտքի ելաւ ու սկսաւ քալել: Լիւզղայի ու Սարոփնայի մարդիկը այս հրաշքը տեսնելով հաւատքի եկան:

Մինչ Պետրոս Լիւզղայի մէջ Աւետարանի քարոզութեամբ կը զբաղէր, մօտակայ Յոպպէ քաղաքէն երկու մարդիկ գալով իրեն լուր բերին թէ Տարիթան մեռած է:

Տարիթա (որ կը թարգմանուի Այծեմնիկ) շատ բարեպաշտ կին մըն էր եւ նշանաւոր էր իր բարեգործութիւններով, ու շատ սիրուած էր բոլորէն: Այդ օրերուն ան հիւանդանալով մեռած էր: Ժամանակի սովորութեան համեմատ Տարիթային մարմինը լուալով սենեակի մը մէջ դրած ու Յոպպէէն երկու մարդ զրկած էին Լիւզղա՝ Պետրոսին լուր տալու համար, եւ կ'աղաչէին որ առաքեալը Յոպպէ գար:

Պետրոս այս լուրը առնելով Յոպպէ գնաց: Մարդիկ զինք առաջնորդեցին Տարիթայի պառկած սենեակը: Բոլոր որբեւայրիները կու լային եւ Պետրոսին կը ցուցնէին այն

պատմութիւններն ու հազուատները զորս Տարիթան կարած իրենց նուիրած էր:

Պետրոս բազմութիւնը սենեակէն դուրս հանելով ծունկի եկաւ ու աղօթք ըրաւ, եւ դէպի մեռելը դառնալով, ըսաւ.

— Տարիթա, ելի՛ր կանգնէ՛ Յիսուս Քրիստոսի անունով:

Իսկոյն մեռելը աչքերը բացաւ եւ Պետրոսը տեսնելով՝ ելաւ շիտակ նստաւ: Պետրոս առաքեալ Տարիթային ձեռքէն բռնելով վերցուց զայն եւ սուրբերն ու որբեւայրիները կանչելով անոնց առջեւ ողջ կանգնեցուց:

Այս հրաշքին լուրը տարածուեցաւ ամբողջ Յոպպէի մէջ եւ շատեր հաւատքի եկան:

Պետրոս առաքեալ երկար օրեր մնաց Յոպպէի մէջ, Սիմոն անունով խաղախորդի մը տունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Աստուած կը լսէ իր արդար գաւակներուն աղօթքը եւ կը կատարէ անոնց խնդրանքները: Հաւատով եղած աղօթքը մեծ ազդեցութիւն կը գործէ հիւանդին վրայ: Պետրոս առաքեալ հաւատով աղօթեց եւ Աստուած կատարեց անոր խնդրանքը:

2) Մենք ալ երբ աղօթքի կենցաղով, հաւատով մատուցանելու ենք մեր խնդրանքները Աստուծոյ:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Պետրոս առաքեալ ո՞ր այցելեց:
- 2) Ենէա քանի՞ տարիէ ի վեր անդամալոյծ էր:
- 3) Պետրոս ի՞նչ ըսաւ Ենէայի:
- 4) Պետրոսի խօսքը լսելով Ենէա ի՞նչ ըրաւ:

5) Ենչայի բժշկութիւնը տեսնելէ ետք Լիւդրայի եւ Սարովնայի մարդիկը ի՞նչ ըրին:

6) Տարիթա ո՞ր քաղաքին մէջ կը բնակէր:

7) Տարիթա ինչպիսի՞ կին մըն էր:

8) Ի՞նչ պատահեցաւ Տարիթային:

9) Պետրոս Յոպպէ երթալով ի՞նչ ըրաւ:

10) Պետրոս աղօթելէ վերջ ի՞նչ ըսաւ մեռեալին:

11) Պետրոսի խօսքին վրայ մեռեալը ի՞նչ եղաւ:

12) Յոպպէի մէջ մարդիկ այս դէպքը իմանալով ի՞նչ ըրին:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Աղօթք ըրէք իրարու համար, որպէսզի բժշկուիք. արդարին ջերմեռանդ աղօթքը շատ ազդուութիւն ունի»: Յակոբոս 5.16:

### ԺԲ. Դաս

#### Պետրոս Առաքեալ Կոռնելիոսի Մօտ

(Գործք 10)

Կոռնելիոս անունով հարիւրապետ մը կը բնակէր Կեսարիա քաղաքին մէջ: Այս մարդը թէեւ հեթանոս էր, սակայն բարեպաշտութեամբ կ'ապրէր եւ առատ ողորմութիւն կ'ընէր ու միշտ կ'աղօթէր Աստուծոյ:

Օր մը Աստուծոյ հրեշտակը Կոռնելիոսին երեւելով ըսաւ.

— Կոռնելիոս, քու աղօթքներդ ու ողորմութիւններդ Աստուծոյ առջեւ բարձրացան եւ յիշատակուեցան: Հիմա մարդ զրկէ Յոպպէ եւ կանչել տուր Միմոն անունով մէկը որ կը կոչուի նաեւ Պետրոս: Ան հիւրաբար կը գտնուի Միմոն անունով խաղախորդի մը տունը որ մօտ է ծովուն:

Երբ հրեշտակը անբերելութեամբ, Կոռնելիոս իր ծանանքին երկուքը կանչեց եւ բարեպաշտ զինուորի մը հետ գանոնք Յոպպէ զրկեց: Հետեւեալ օրը, երբ անոնք քաղաքին մօտեցած էին, Պետրոս աղօթելու համար տանիք ելաւ: Աղօթքէն վերջ Պետրոս անօթեցաւ եւ կ'ուզէր ճաշել: Մինչ տնեցիները ճաշը կը պատրաստէին, յանկարծ Պետրոս մտքի յափշտակութիւն մը ունեցաւ: Տեսաւ երկինքը բացուած, եւ աման մը որ չորս ծայրերէն կապուած մեծ կտաւի մը նման երկինքէն կ'իջնէր: Անոր մէջ կային ամէն տեսակ չորքոտանիներ, սողուններ եւ թռչուններ: Նոյն միջոցին ճայն մը եկաւ իրեն, որ կ'ըսէր.

— Պետրոս, ելի՛ր, մորթէ՛ ու կե՛ր:

— Քա՛ւ լիցի, Տէր, ես ամենեւին պիղծ կամ անմաքուր բան կերած չեմ, — ըսաւ Պետրոս:

— Զայն որ Աստուած մաքրեց, դուն պիղծ մի՛ սնակեր, — ըսաւ ճայնը:

Այս բանը երեք անգամ կրկնուեցաւ եւ ամանը երկինք վերցուեցաւ: Պետրոս կը զարմանար թէ արդեօք ի՞նչ կը նշանակէր այս տեսիլքը: Նոյն միջոցին Կոռնելիոսին զրկած մարդիկը Սիմոնին զրան առջեւ կանգնելով հարցուցին թէ արդեօք Պետրոս կոչուած Սիմոնը հո՞ն էր:

Մինչ Պետրոս իր տեսիլքին մասին կը մտածէր, Տիրոջ Հոգին ըսաւ իրեն.

— Ահա երեք մարդիկ քեզ կը փնտռեն. ուստի ելի՛ր, իջի՛ր եւ անոնց հետ գնա առանց խղճահարութեան, վասընզի ես զրկեցի զանոնք:

Պետրոս տանիքէն վար իջնելով դիմաւորեց եկողները եւ ըսաւ.

— Ահաւասիկ ես եմ ան՝ զոր դուք կը փնտռէք: Ըսէ՛ք ինձի թէ ինչ բանի համար եկեր էք:

Կոռնելիոսին ծառաները յայտնեցին իրենց այցելութեան նպատակը եւ Պետրոսը Կեսարիա հրաւիրեցին:

Հետեւեալ օրը Պետրոս իրեն հետ մի քանի հաւատացեալ եղբայրներ առնելով ճամբայ ելաւ: Երբ Կեսարիա մտան, տեսան թէ Կոռնելիոս իր ազգականներն ու մտերիմ բարեկամները իր տունը կանչած՝ իրենց կը սպասէր: Կոռնելիոս Պետրոսը տեսնելով անոր ոտքը ինկաւ ու երկրպագեց: Բայց Պետրոս զայն կանգնեցուց ու ըսաւ.

— Ելի՛ր, կանգնէ՛, ես ինքս ալ մարդ եմ:

Պետրոս ներս մտաւ եւ հաւաքուած բազմութիւնը տեսնելով ըսաւ.

— Դուք գիտէք թէ ի՞նչպէս ապօրինի բան է հրեայ մարդու մը համար՝ հաղորդակցիլ օտարազգիի մը հետ: Բայց Աստուած ինձի ցոյց տուաւ որ ոեւէ մէկը պիղծ կամ անմաքուր չսեպեմ: Ես Աստուծոյ ձայնին հնազանդելով ձեր մօտ եկայ: Արդ, ըսէք ինձի թէ ի՞նչ բանի համար զիս կանչեցիք:

Կոռնելիոս պատասխանեց Պետրոսին.

— Չորս օր առաջ, երբ տանս մէջ կ'աղօթէի, սպիտակազգեստ մարդ մը կանգնեցաւ առջեւս եւ ըսաւ, «Կոռնելի-

իոս, քու աղօթքդ լսուեցաւ եւ ըրած ողորմութիւններդ յիշուեցան Աստուծոյ առջեւ: Ուստի մարդ զրկէ Յոպպէ ու կանչէ Պետրոս կոչուած Սիմոնը... Ան քովը գալով քեզի պիտի խօսի»: Ես ալ անմիջապէս մարդ զրկեցի քեզի. եւ դուն լաւ ըրիր որ եկար: Հիմա մենք բոլորս հոս ենք Աստուծոյ առջեւ՝ լսելու համար այն ամէն բաները որոնք Աստուծմէ հրամայուած են քեզի:

Պետրոս առաքեալ ներկաներուն խօսեցաւ թէ այլեւս խտիր չկայ հրեաներու եւ հեթանոսներու միջեւ. ուստի ով իր արդարութիւն գործէ՝ Աստուծոյ առջեւ ընդունելի է: Խօսեցաւ անոնց Յիսուսի մասին, թէ Ան աշխարհ եկած էր համայն մարդիկը իրենց մեղքերէն փրկելու համար եւ այդ նպատակով յանձն առած էր չարչարուիլ, խաչուիլ եւ իր սուրբ արիւնը թափել: Ապա անդրադարձաւ Յիսուսի փառաւոր յարութեան, եւ վկայութիւն տալէ ետք ըսաւ.

— Յիսուսի մասին կը վկայեն բոլոր մարգարէները, թէ ամէն իրեն հաւատացողները մեղքերու թողութիւն կ'առնեն անոր անունով:

Մինչ Պետրոս այս խօսքերը կը խօսէր, Սուրբ Հոգին իջաւ բոլոր ունկնդիրներուն վրայ: Պետրոսի հետ եկող հրեայ հաւատացեալները զարմացան, տեսնելով որ հեթանոսներուն վրայ ալ կը լեցուէր Սուրբ Հոգիին պարգեւը, քանզի կը լսէին որ անոնք ուրիշ լեզուներով կը խօսէին եւ զԱստուած կը փառաւորէին:

— Կրնա՞յ մէկը ջուրը արգիլել որ ասոնք չմկրտուին, որոնք Սուրբ Հոգին ալ ընդունեցան մեզի պէս, — ըսաւ Պետրոս եւ հրամայեց անոնց մկրտուիլ Յիսուս Քրիստոսի անունով:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Յիսուսի Յարութեան եւ առաքելութեան արձանագրութեան առաջ, հրեաներէն գատ միւս բոլոր ազգերը նշմարիտ Աստուծոյ մասին գաղափար չունէին, եւ հեթա-

նու ըլլալով կուտֆեր կը պաշտէին: Այս պատճառով հրեաներ պիղծ կը համարէին հեթանոսները եւ կը զգուշանային անոնց հետ յարաբերել:

2) Աստուած տեսիլքի մը մէջ Պետրոս առաքելին յայտնեց թէ արհամարհելու չէ հեթանոսները, զանոնք պիղծ սեպելով. այլ՝ անոնց ինչ որ հրեայով քարոզելու է փրկութեան Աւետարանը:

3) Աստուած խորութիւն չի դնէր ազգերու եւ ցեղերու միջեւ: Ան կ'ողորմի բոլորին եւ կը դրկէ իր պատգամները: Ուստի որպէս տիպար քրիստոնեաներ սիրելու եմք բոլոր մարդիկը՝ առանց ցեղի խորութեան, եւ անոնց տարածելու եմք Սուրբ Աւետարանին պատգամները:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞վ էր Կոռնելիոս:
- 2) Ո՞վ երեցաւ Կոռնելիոսին:
- 3) Հրեշտակը ի՞նչ ըսաւ Կոռնելիոսին:
- 4) Կոռնելիոս ո՞ր դրկեց իր մարդիկը
- 5) Պետրոս որո՞ւն տունը հիւր կը մնար:
- 6) Պետրոս աղօթելու ատեն ի՞նչ տեսաւ:
- 7) Երկինքէն եկող ձայնը ի՞նչ ըսաւ Պետրոսին:
- 8) Պետրոս ի՞նչ պատասխանեց:
- 9) Նոյն ձայնը ի՞նչ ըսաւ Պետրոսին:
- 10) Որո՞նք եկան Պետրոսը կանչելու:
- 11) Կոռնելիոս Պետրոսը տեսնելով ի՞նչ ըրաւ:
- 12) Պետրոս Կոռնելիոսին տեսիլքը լսելէ ետք ի՞նչ խօսեցաւ ներկայներուն:
- 13) Կոռնելիոսն ու իր բարեկամները Սուրբ Հոգին ընդունելով ի՞նչ կ'ընէին:
- 14) Պետրոս անոնց վրայ Սուրբ Հոգոյն զեղումը տեսնելով ի՞նչ ըսաւ:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Զայն որ Աստուած մաքրեց, դուն պիղծ մի՛ սեպեր»:  
Գործք 10.15:

Պետրոս Առաքեալ Բանտէն Կ'ազատի

(Գործք 12.1-23)

Երուսաղէմի եւ Հրէաստանի ամէն կողմերը Աստուծոյ խօսքը կ'աճէր եւ Յիսուսի հաւատացողներուն թիւը օրէ օր կը բազմանար: Հրեաներ լաւ աչքով չէին դիտեր այս երեւոյթը եւ միշտ հակամէտ էին Աստուծոյ եկեղեցին հալածելու:

Հերովդէս թագաւոր հրեաներուն գոհացում տալու համար ձերբակալել տուաւ Երուսաղէմի եկեղեցիին երեւելի անձերէն մի քանի հոգի եւ սկսաւ զանոնք շարչարել: Իսկ Յովհաննէս առաքեալին եղբայրը՝ Յակոբոսն ալ սուրով սպաննել տուաւ: Հերովդէս այսքանով չգոհացաւ. այլ հրեաները սիրաշահելու համար ձերբակալել տուաւ նաեւ Պետրոս առաքեալը եւ որոշեց Զատկի տօնէն վերջ զայն սպաննել: Սակայն եկեղեցին անդադար կ'ազօթէր Պետրոսին համար:

Պետրոս կրկնակի շղթաներով կապուած՝ երկու գինուորներու մէջտեղ կը քնանար այն գիշերը, որուն յաջորդօրը Հերովդէս կ'ուզէր դուրս բերել զայն բանտէն ու սպաննել տալ: Պահապաններն ալ կը հսկէին բանտին դրան առջեւ: Յանկարծ բանտին մէջ լոյս մը ծագեցաւ ու Տիրոջ հրեշտակը գալով Պետրոսին կողը խթեց եւ արթնցնելով ըսաւ.

— Շուտով ելի՛ր:

Իսկոյն Պետրոսին շղթաները քակուեցան ու ձեռքերէն վար ինկան:

— Գօտիդ կապէ, հողաթափներդ հագիր, հանդերձդ առ ու ետեւէ՛ս եկուր, — ըսաւ հրեշտակը իրեն:

Պետրոս հնազանդեցաւ ու հրեշտակին ետեւէն գնաց. սակայն չէր գիտեր թէ իր տեսածը իրականութի՞ւն էր թէ երազ: Առաջին եւ երկրորդ պահապանները անցնելով եկան մինչեւ երկաթէ դուռը որ ինքնիրեն բացուեցաւ: Անկէ դուրս ելլելով անցան փողոց մը, ուր հրեշտակը բաժնուեցաւ եւ անբերելոյթ եղաւ: Պետրոս առաքեալ սթափեցաւ եւ ըսաւ ինքնիրեն.

— Հիմա ճշմարտապէս գիտեմ որ Տէրը իր հրեշտակը դրկեց եւ ազատեց զիս Հերովդէսի ձեռքէն ու հրեաներու բոլոր ակնկալութիւններէն:

Այսպէս մտածելով Պետրոս գնաց Մարկոս կոչուած Յովհաննէսի մօր՝ Մարիամին տունը, ուր շատեր ժողվուած աղօթք կ'ընէին: Երբ դուրսի դուռը զարկաւ, Հոռոզէ անունով աղախին մը գնաց եւ ականջ դրաւ, հասկնալու համար թէ եկողը ով էր: Երբ Պետրոսին ձայնը առաւ, իսկոյն ճանչցաւ զայն. սակայն իր ուրախութենէն չուարած, առանց դուռը բանալու ետ ներս վազեց Պետրոս առաքեալին գալուստը աւետելու: Ներսը գտնուողները չկրցան հաւատալ եւ ըսին Հոռոզի, «Դուն խենթեցեր ես»: Բայց աղջիկը կը պնդէր թէ Պետրոսն է: Իսկ դուրսէն Պետրոս անդադար դուռը կը զարնէր: Երբ դուռը բացին ու գինք տեսան, զարմացան եւ ուրախացան: Պետրոս ձեռքով նշան ըրաւ որ լուռ կենան, եւ պատմեց անոնց թէ Տէրը գինք ի՛նչպէս ազատեց բանտէն:

Առաւօտեան պահապանները Պետրոսը բանտին մէջ չգտնելով խռովեցան: Հերովդէս Պետրոսի անբերելութանալը իմանալով, կասկածեցաւ պահապաններու հաւատարմութեան վրայ եւ զանոնք սպաննել տուաւ:

Հետագային Հերովդէս գտաւ իր արդար պատիժը: Օր մը, երբ իր թագաւորական շքեղ հագուստովն ու զարդարանքներով ատեանի մէջ նստած էր ու մեծամեծ մարդոց առջեւ ատենաբանութիւն կ'ընէր, ներկաները Հերովդէսի խօսքերը մտիկ ընելու ատեն աղաղակեցին եւ ըսին.

— Այս ձայնը մարդու ձայն չէ, այլ Աստուծոյ ձայն: Հերովդէս բազմութեան այս աղաղակը լսելով ուրախացաւ եւ հպարտացաւ. մինչդեռ փառքը Աստուծոյ պէտք էր տար եւ ոչ թէ ինք առնէր:

Տիրոջ հրեշտակը իսկոյն զարկաւ Հերովդէսը իր գոռոզութեան եւ ամբարտաւանութեան համար, ու որդնոտելով չարաչար մահով մը մեռաւ:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Աստուած իր գործին մէջ ծառայողներուն նեցուկ կ'ըլլայ: Ան չի թողուր որ անօրէնները խանգարեն իր ծրագիրները: Աստուած որոշած էր Պետրոս առաքեալի ձեռքով տակաւին մեծ գործեր կատարել. ուստի թոյլ չտուաւ Հերովդէսին որ կարենար զայն սպաննել:

2) Աստուած հակառակ կը կենայ հպարտներուն եւ ամբարտաւաններուն ու զանոնք իրենց աթոռներէն վար առնելով կը պատժէ, ինչպէս որ ըրաւ Հերովդէսին:

3) Հաւատացեալներուն պարտականութիւնն է աղօթել նեղութեան մէջ ինկող իրենց եղբայրներուն համար:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Հերովդէս ո՞ր առաքեալին եղբայրը սպաննեց:
- 2) Ի՞նչ էր անունը Յովհաննէս առաքեալին եղբոր:
- 3) Հերովդէս ինչո՞ւ համար ձերբակալեց Պետրոսը:
- 4) Գիշերը ո՞վ եկաւ Պետրոսին քով:
- 5) Հրեշտակը ի՞նչ ըսաւ Պետրոսին:
- 6) Պետրոս հրեշտակէն բաժնուելէ ետք որո՞ւն տունը գնաց:
- 7) Հոողէ աղախինը Պետրոսին ձայնը առնելով ի՞նչ ըրաւ:
- 8) Ներսը գտնուողները ի՞նչ ըսին Հոողէի:

9) Յաջորդ օր Հերովդէս Պետրոսը բանտին մէջ չգտնելով ի՞նչ ըրաւ:

10) Հերովդէս ինչպէ՞ս մեռաւ:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ»: Յակոբոս 4.6:

**Անտիոքի Եկեղեցին և Պողոսի  
Առաքելական Առաջին Ծամբորդութիւնը**

(Գործք 11.19-30, 13.1-52)

Ստեփանոսի նահատակութենէն ետք գործադրուած հալածանքին պատճառով Երուսաղէմի հաւատացեալներէն շատեր ցրուեցան Հրէաստանի եւ Սամարիայի այլեւայլ քաղաքներն ու գիւղերը: Անոնցմէ ոմանք գացին մինչեւ Փիւնիկէ, Կիպրոս եւ Անտիոք ու այդ վայրերուն մէջ քարոզեցին Աստուծոյ խօսքը. սակայն հրեաներէն զատ ուրիշ մարդոց չէին խօսեր. բայց կարգ մը հաւատացեալներ Անտիոքի մէջ յոյներուն ալ քարոզեցին եւ անոնցմէ շատերը Աստուծոյ առաջնորդեցին:

Երբ այդ լուրը Երուսաղէմի եկեղեցիին ականջը հասաւ, առաքեալներ Բառնաբասը Անտիոք ղրկեցին՝ տեղւոյն նորահաստատ եկեղեցին կազմակերպելու համար: Բառնաբասին աշխատանքն ու տուած քարոզները արդիւնաւոր եղան եւ Յիսուս Քրիստոսի հաւատացողներուն թիւը բազմացաւ:

Բառնաբաս Աստուծոյ խօսքին քարոզութիւնը աւելի զօրացնելու համար Տարսոն գնաց ու Սողոսը Անտիոք բերաւ եւ երկուքը միասին տարի մը ամբողջ եկեղեցիին մէջ դաստիարակեցին ժողովուրդը:

Յիսուս Քրիստոսի հաւատացողները առաջին անգամ Անտիոքի մէջ Քրիստոնեայ անուանուեցան:

Անտիոքի եկեղեցին հետզհետէ ծաղկեցաւ ու հոն յառաջ եկան նշանաւոր մարգարէներ եւ վարդապետներ, որոնք Աստուծոյ խօսքը կ'ուսուցանէին եւ ժողովուրդը կը

մղէին բարեպաշտութեան: Օր մը երբ անոնք աղօթքի ու պաշտամունքի մէջ էին, Սուրբ Հոգին ըսաւ իրենց.

— Զատեցէք ինծի Բառնաբասը եւ Սողոսը ա՛յն գործին համար որուն կոչած եմ զիրենք:

Այն ատեն անոնք ծոմապահութեամբ աղօթեցին ու ձեռնադրեցին զանոնք, որպէսզի այլ երկիրներ երթան ու քարոզեն Քրիստոսի աւետարանը:

Բառնաբաս եւ Սողոս (որ Պողոս ալ կը կոչուէր) Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ Անտիոքէն Սելւեւկիա գացին եւ անկէ նաւ առնելով անցան Կիպրոս՝ իրենց հետ օգնական ունենալով Մարկոս կոչուած Յովհաննէսը:

Կիպրոսի զանազան կողմերը քարոզելով հասան Պաֆոս քաղաքը որուն փոխանորդ բղջիխն էր Սերգիոս Պողոս անունով խելացի մարդ մը: Ասիկա Պողոսն ու Բառնաբասը իր մօտ հրաւիրելով խնդրեց լսել Աստուծոյ խօսքը: Սակայն անոր ընկերացող Եղիմաս անունով սուտ մարգարէն, որ հրեայ մոգ մըն էր, Պողոսի ու Բառնաբասի դէմ կեցաւ եւ ուզեց արգելք ըլլալ անոնց քարոզութեան: Պողոս առաքեալ Սուրբ Հոգիով լեցուած, իր աչքերը Եղիմասի վրան յառելով ըսաւ.

— Ո՛վ ամէն խաբեբայութեամբ ու ամէն խորամանկութեամբ լեցուած Սատանայի որդի եւ թշնամի ամէն արդարութեան, պիտի չդադրի՞ս Տիրոջ ուղիղ ճամբաները ծռելէ: Տիրոջ ձեռքը հիմա քու վրադ է եւ կոյր պիտի ըլլաս ատեն մը:

Պողոսի խօսքին վրայ իսկոյն Եղիմաս մոգին աչքերը կուրցան եւ սկսաւ խարխափել: Փոխանորդ բղջիխը այդ բանը տեսնելով հաւատաց Յիսուս Քրիստոսի:

Պողոս եւ Բառնաբաս Կիպրոս կղզին ձգելով անցան Պամփիլիայի Պերգէ քաղաքը: Հոն Մարկոս-Յովհաննէսը իրենցմէ զատուելով Երուսաղէմ գնաց: Իսկ իրենք գացին Պիսիդիայի Անտիոքը եւ Շարաթ օր մտան հրեաներուն ժողովարանը:

Տեղւոյն ժողովրդապետները Պողոսի եւ Բառնաբասի քով մարդ զրկեցին եւ առաջարկեցին յորդորական խօսքեր խօսիլ ժողովուրդին: Այն ատեն Պողոս ոտքի ելլելով քարոզեց եւ ցոյց տուաւ անոնց Աստուծոյ հոգածութիւնը Իսրայէլի ազգին եւ տուած խոստումը անոնց, թէ փրկիչ մը պիտի զրկէր իրենց: Անդրադարձաւ Յովհաննէս Մկրտիչի քարոզութեան եւ կատարած մկրտութեան մասին եւ ըսաւ թէ ան վկայած էր Յիսուսի համար, թէ Նա էր մեսիան՝ Քրիստոսը որ մարգարէական գիրքերու մէջ խոստացուած էր: Պողոս առաքեալ շարունակեց իր քարոզը եւ ըսաւ թէ Երուսաղէմի մէջ հրեաներ չհաւատացին Յիսուսի ու զԱյն Պիղատոսին մատնելով խաչին վրայ սպաննել տուին. սակայն Աստուած երրորդ օրը յարուցանեց զԱյն: Ապա Պողոս յորդորեց ներկաները որ հաւատան Յիսուս Քրիստոսի եւ անոր կատարած փրկագործութեան ու անոր անունով թողութիւն ստանան Աստուծմէ:

Քարոզէն ետք ներկաները Պողոսէն խնդրեցին յաջորդ Շարաթ նորէն գալ եւ խօսիլ իրենց:

Ժողովուրդը ցրուելէն ետք հրեաներէն եւ նորահաւատ բարեպաշտներէն շատեր հետեւեցան Պողոսի ու Բառնաբասի, որոնք կը խօսէին անոնց հետ եւ կը յորդորէին զանոնք հաստատ մնալ Աստուծոյ շնորհքին մէջ:

Յաջորդ Շարաթ օր գրեթէ ամբողջ քաղաքը հաւաքուեցաւ Պողոսը լսելու: Սակայն հրեաներ այդ մեծ բազմութիւնը տեսնելով նախանձեցան ու սկսան ընդդիմախօսել Պողոսի: Այն ատեն Պողոս եւ Բառնաբաս ըսին.

— Նախ եւ առաջ ձեզի՛ պէտք էր քարոզել Աստուծոյ խօսքը. բայց որովհետեւ դուք զայն կը մերժէք եւ դուք ձեզ արժանի չէք սեպեր յաւիտենական կեանքին, ահա մենք հեթանոսներուն կը դառնանք:

Հեթանոսները այդ խօսքը լսելով ուրախացան եւ Աստուծոյ խօսքը փառաւորեցին: Այդ քաղաքին մէջ շատեր հաւատացին Յիսուս Քրիստոսի: Պողոս եւ Բառնաբաս

յորդորեցին ու Աստուծոյ խօսքով դաստիարակեցին հաւատքի եկողները:

Բայց նենգամիտ հրեաներ քաղաքին մեծերը զրգուեցին եւ Պողոսն ու Բառնաբասը իրենց սահմաններէն դուրս ըրին: Անոնք ալ իրենց ոտքերուն փոչին թօթուելով քաղաքէն դուրս ելան եւ գացին Իկոնիոն:

### ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1) Աստուած Անտիոքի եկեղեցիին նման կը ծաղկեցնէ իր բոլոր եկեղեցիները, եթէ անոնք իրենց կոչումին տէրն ըլլալով քարոզեն Քրիստոսի փրկագործութեան աւետարանը ու երկինքի արքայութեան հրաւիրեն մեղաւոր մարդկութիւնը՝ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ:

2) Աստուած ձեռնադրուելու Պողոսի եւ Բառնաբասի ու անոնք կրցան հոգիներ շահիլ Քրիստոսի համար եւ զանոնք առաջնորդել երկինքի արքայութիւնը ժառանգելու:

3) Մենք ալ իւրացնելու ենք Պողոսի եւ Բառնաբասի իտէալը ու մեր կարելիութեան սահմաններուն մէջ ջանալու ենք մեր նմաններուն խօսիլ Քրիստոսի փրկագործութեան եւ անոր պատուիրաններուն մասին, որպէսզի ամէն ոք լսէ Աստուծոյ խօսքը:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1) Անտիոքի մէջ հրեաներէն զատ ուրիշ որո՞նց քարոզուած էր Աստուծոյ խօսքը:

2) Երուսաղէմէն ո՞վ դրկուեցաւ Անտիոք:

3) Առաջին անգամ ո՞ր քաղաքին մէջ Քրիստոնեայանուանուեցան Յիսուսի հաւատացողները:



4) Որո՞նք ձեռնադրուելով ղրկուեցան առաքելական քարոզութեան:

5) Սողոմի ի՞նչ անուն եւս կը տրուէր:

6) Պօղոս եւ Բառնաբաս Սելեւկիայէն ո՞ր անցան:

7) Ո՞վ էր Սերգիոս Պօղոս կոչուած անձը:

8) Պօղոս առաքեալ ինչո՞ւ յանդիմանեց Եղիմաս մոզր:

9) Պօղոսի խօսքին վրայ Եղիմասին աչքերը ի՞նչ եղան:

10) Պրսիդիայի Անտիոքին մէջ Պօղոս եւ Բառնաբաս Ծաբաթ օր ո՞ր գացին:

11) Հրեաներու ժողովարանին մէջ Պօղոս որո՞ւ մասին քարոզեց:

12) Քարոզէն ետք մարդիկ Պօղոսէն ի՞նչ խնդրեցին:

13) Յաջորդ Ծաբաթ օրը ի՞նչ պատահեցաւ:

14) Պօղոս եւ Բառնաբաս ի՞նչ ըսին ընդդիմացող հրեաներուն:

15) Նենգամիտ հրեաներ քաղաքին մեծերը գրգռելով ի՞նչ ըրին Պօղոսն ու Բառնաբասը:

16) Պօղոս եւ Բառնաբաս իրենց ոտքերուն փոշին թօթուելով ո՞ր գացին:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Գացէ՛ք բոլոր աշխարհի ու Աւետարանը քարոզեցէ՛ք բոլոր ստեղծուածներուն»: Մարկոս 16.15:

### ԺԵ. Դաս

#### Պօղոսի Առաքելական Առաջին Ծամբորդութիւնը

(Բ.)

#### Քարոզութիւններ Իկոնիոնի եւ Լիւստրայի մէջ

(Գործք 14, 15.1-35)

Պօղոս եւ Բառնաբաս Իկոնիոնի մէջ մտան Հրեաներուն ժողովարանը ու քարոզեցին Յիսուս Քրիստոսը: Մեծ թիւով Հրեաներ եւ յոյներ հաւատքի գալով յարեցան իրենց: Բայց չհաւատացող Հրեաներ սկսան գրգռել հեթանոսները հաւատացեալներուն դէմ:

Պօղոս եւ Բառնաբաս բաւական ժամանակ չըջեցան հոն եւ համարձակութեամբ քարոզեցին Աստուծոյ խօսքը եւ կատարեցին հրաշքներ ու նշաններ Սուրբ Հոգիին զօրութեամբ: Բայց չարամիտ Հրեաներուն գրգռութեամբ քաղաքին ժողովուրդը երկու մասի բաժնուեցաւ: Ոմանք առաքեալներուն կողքին կեցան, իսկ ոմանք Հրեաներուն հետ եղան:

Օր մըն ալ Հրեաներուն եւ հեթանոսներուն իշխանները յարձակեցան Պօղոսի եւ Բառնաբասի վրայ՝ զանոնք նախատելու եւ քարկոծելու համար: Սակայն Պօղոս եւ Բառնաբաս անոնց զաւազրութիւնը իմանալով Իկոնիոնէն փախան ու գացին Լիկայոնացւոց Լիւստրա եւ Դերբէ քաղաքները ու նաեւ գիւղաքաղաքները՝ Աւետարանը քարոզելու համար:

Լիւստրայի փողոցներուն մէջ նստած էր ի ծնէ կաղ մարդ մը որ երբեք չէր քալած: Ասիկա իր նստած տեղէն հիացումով ու հաւատքով մտիկ կ'ընէր Աստուծոյ խօսքը: Պօղոս առաքեալ իր աչքերը անոր յառելով տեսաւ անոր հաւատքը եւ բարձր ձայնով ըսաւ.

— Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով կ'ըսեմ քեզի, ոտքի՛ ելիր ու կանգնէ՛ ուղիղ:

Կազ մարդը իսկոյն իր տեղէն ցատկելով սկսաւ քալել: Մարդիկ այս հրաշքը տեսնելով զարմացան եւ լիկայուններէն աղաղակեցին եւ ըսին, «Աստուածները մարդկային կերպարանքի տակ մեր մօտ իջեր են»: Անոնք հեթանոս ըլլալով կարծեցին թէ այդ հրաշքը գործողները իրենց երկու կուռքերն են. ուստի անոնց անունով սկսան Բառնաբասը Դիոս կոչել եւ Պօղոսը՝ Հերմէս: Մինչ այդ քաղաքի մուտքին վրայ գտնուող Դիոսի տաճարին քուրմը ցուլեր ու պսակներ առած, բազմութեան հետ քաղաքի դրան առջեւ գալով կ'ուզէր զոհ մատուցանել Պօղոսի ու Բառնաբասի՝ զանոնք աստուածներ կարծելով:

Այս տեսարանին առջեւ Պօղոս եւ Բառնաբաս իրենց հանդերձները պատուեցին եւ ամբոխին մէջէն դուրս ելան բարձրաձայն աղաղակելով.

— Մարդիկ, ինչո՞ւ այդ բաները կ'ընէք. մենք ալ ձեզի պէս մարդիկ ենք՝ միեւնոյն բնութեամբ, եւ եկեր ենք ձեզի աւետարանելու որ այդպիսի ունայնութիւններէն դառնաք կենդանի Աստուծոյն, որ ստեղծած է երկինքն ու երկիրը եւ ծովը ու ամէն ինչ որ կայ անոնց մէջ...

Պօղոս եւ Բառնաբաս հազիւ կրցան արգիլել ժողովուրդը որ զոհ չմատուցանեն իրենց:

\*  
\*\*

Մինչ անոնք կը շրջէին ու կ'ուսուցանէին, Անտիոքէն եւ Իկոնիոնէն հրեաներ Լիւստրա եկան ու սկսան վիճիլ Պօղոսի եւ Բառնաբասի հետ: Ապա ժողովուրդէն շատերը զրգուեցին անոնց դէմ եւ Պօղոսը քարկոծելով քաղաքէն դուրս հանեցին՝ կարծելով թէ ան մեռած է: Բայց երբ քրիստոնեայ աշակերտները զինք չըջապատեցին, Պօղոս ոտքի ելաւ եւ քաղաք մտաւ:

Հետեւեալ օրը Պօղոս Բառնաբասի հետ մեկնեցաւ Դերբէ: Հոն ալ աւետարանեցին եւ շատերը իրենց աշակերտելէ ետք վերադարձան Լիւստրա, Իկոնիոն եւ Պիսիդիայի Անտիոքը. ու այսպէս այցելեցին այն բոլոր քաղաքները ուր նախապէս քարոզած էին: Ամէն կողմ դարձեալ քարոզեցին ու նորադարձ քրիստոնեաները յորդորեցին որ հաստատ մնան իրենց հաւատքին վրայ եւ համբերեն նեղութիւններու՝ արժանի ըլլալու համար երկինքի արքայութեան: Անոնց վրայ երէցներ ձեռնադրեցին եւ ծոմապահութեամբ աղօթելով նորակազմ եկեղեցիները յանձնեցին Տիրոջ խնամքին:

Այդ բոլոր կարգադրութիւնները ընելով ու քարոզելով հասան Ատալիա, ուրկէ նաւ առնելով վերադարձան Անտիոք՝ իրենց նախկին քաղաքը, ուր ձեռնադրուած էին առաքելական պաշտօնի համար:

Անտիոքի մէջ հաւատացեալներու բազմութիւնը իրենց գալուստը իմանալով՝ փութաց լսելու անոնց առաքելութեան արդիւնքները: Պօղոս եւ Բառնաբաս ժողովուրդին պատմեցին իրենց ձեռքով Աստուծոյ կատարած մեծամեծ գործերը այն քաղաքներուն մէջ ուր իրենք այցելած եւ քարոզած էին:

\*  
\*\*

Անտիոքի մէջ մեծ էր թիւը հեթանոսութենէ դարձած քրիստոնեաներուն, որոնք եռանդուն էին եւ ուրախութեամբ կը հետեւէին Աստուծոյ խօսքերուն: Սակայն կարգ մը հրեայ քրիստոնեաներ Հրէաստանէն Անտիոք երթալով սկսան քարոզել եւ ստիպել անոնց որ հրեաներու նման կէտ առ կէտ պահեն Մովսէս Մարգարէին օրէնքներն ու սովորութիւնները՝ մեղքերու թողութեան արժանանալու եւ երկինքի արքայութիւնը ժառանգելու համար: Անոնք իրենց

— Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով կ'ըսեմ քեզի, ոտքի՛ ելիր ու կանգնէ՛ ուղիղ:

Կաղ մարդը իսկոյն իր տեղէն ցատկելով սկսաւ քայել: Մարդիկ այս հրաշքը տեսնելով զարմացան եւ լիկայոնե-րէն աղաղակեցին եւ ըսին, «Աստուածները մարդկային կերպարանքի տակ մեր մօտ իջեր են»: Անոնք հեթանոս ըլլալով կարծեցին թէ այդ հրաշքը գործողները իրենց երկու կուռքերն են. ուստի անոնց անունով սկսան Բառնաբասը Դիոս կոչել եւ Պօղոսը՝ Հերմէս: Մինչ այդ քաղաքի մուտքին վրայ գտնուող Դիոսի տաճարին քուրմը ցուլեր ու պսակներ առած, բազմութեան հետ քաղաքի դրան առջեւ գալով կ'ուզէր զո՛հ մատուցանել Պօղոսի ու Բառնաբասի՝ զանոնք աստուածներ կարծելով:

Այս տեսարանին առջեւ Պօղոս եւ Բառնաբաս իրենց հանդերձները պատռեցին եւ ամբոխին մէջէն դուրս ելան բարձրաձայն աղաղակելով.

— Մարդիկ, ինչո՞ւ այդ բաները կ'ընէք. մենք ալ ձեզի պէս մարդիկ ենք՝ միեւնոյն բնութեամբ, եւ եկեր ենք ձեզի աւետարանելու որ այդպիսի ունայնութիւններէն դառնաք կենդանի Աստուծոյն, որ ստեղծած է երկինքն ու երկիրը եւ ծովը ու ամէն ինչ որ կայ անոնց մէջ...

Պօղոս եւ Բառնաբաս հազիւ կրցան արգիլել ժողովուրդը որ զո՛հ չմատուցանեն իրենց:

\*  
\*\*

Մինչ անոնք կը շրջէին ու կ'ուսուցանէին, Անտիոքէն եւ Իկոնիոնէն հրեաներ Լիւստրա եկան ու սկսան վիճիլ Պօղոսի եւ Բառնաբասի հետ: Ապա ժողովուրդէն շատերը զրգռեցին անոնց դէմ եւ Պօղոսը քարկոծելով քաղաքէն դուրս հանեցին՝ կարծելով թէ ան մեռած է: Բայց երբ քրիստոնեայ աշակերտները զինք չըջապատեցին, Պօղոս ոտքի ելաւ եւ քաղաք մտաւ:

Հետեւեալ օրը Պօղոս Բառնաբասի հետ մեկնեցաւ Դերբէ: Հոն ալ աւետարանեցին եւ շատերը իրենց աշակերտելէ ետք վերադարձան Լիւստրա, Իկոնիոն եւ Պիսիդիայի Անտիոքը. ու այսպէս այցելեցին այն բոլոր քաղաքները ուր նախապէս քարոզած էին: Ամէն կողմ դարձեալ քարոզեցին ու նորադարձ քրիստոնեաները յորդորեցին որ հաստատ մնան իրենց հաւատքին վրայ եւ համբերեն նեղութիւններու՝ արժանի ըլլալու համար երկինքի արքայութեան: Անոնց վրայ երէցներ ձեռնադրեցին եւ ծոմապահութեամբ աղօթելով նորակազմ եկեղեցիները յանձնեցին Տիրոջ խնամքին:

Այդ բոլոր կարգադրութիւնները ընելով ու քարոզելով հասան Ատալիա, ուրկէ նաւ առնելով վերադարձան Անտիոք՝ իրենց նախկին քաղաքը, ուր ձեռնադրուած էին առաքելական պաշտօնի համար:

Անտիոքի մէջ հաւատացեալներու բազմութիւնը իրենց գալուստը իմանալով՝ փութաց լսելու անոնց առաքելութեան արդիւնքները: Պօղոս եւ Բառնաբաս ժողովուրդին պատմեցին իրենց ձեռքով Աստուծոյ կատարած մեծամեծ գործերը այն քաղաքներուն մէջ ուր իրենք այցելած եւ քարոզած էին:

\*  
\*\*

Անտիոքի մէջ մեծ էր թիւը հեթանոսութենէ դարձած քրիստոնեաներուն, որոնք եռանդուն էին եւ ուրախութեամբ կը հետեւէին Աստուծոյ խօսքերուն: Սակայն կարգ մը հրեայ քրիստոնեաներ Հրէաստանէն Անտիոք երթալով սկսան քարոզել եւ ստիպել անոնց որ հրեաներու նման կէտ առ կէտ պահեն Մովսէս Մարգարէին օրէնքներն ու սովորութիւնները՝ մեղքերու թողութեան արժանանալու եւ երկինքի արքայութիւնը ժառանգելու համար: Անոնք իրենց

անտեղի քարոզութիւններով սկսան խրտչեցնել ժողովուրդը: Սակայն Պօղոս եւ Բառնաբաս այդ հրեայ քարոզիչներուն դէմ կեցան:

Երբ այդ վէճը սուր բնոյթ ստացաւ, Անտիոքի եկեղեցին մի քանի եղբայրներու հետ Երուսաղէմ զրկեց Պօղոսն ու Բառնաբասը՝ առաքեալներուն կարծիքը առնելու այդ հարցին մասին:

Երուսաղէմի մէջ առաքեալներն ու երէցները ժողով գումարեցին, եւ թեր ու դէմ կարծիքներու փոխանակումէն ետք յարմար դատեցին որ հեթանոսութենէ քրիստոնեայ դարձող հաւատացեալները զերծ կացուցուին մովսիսական օրէնքի արտաքին սովորութիւններէն, որոնք չուքն էին Յիսուս Քրիստոսի փրկագործութեան զոր կատարած էր Ան՝ խաչին վրայ իր սուրբ արիւնը թափելով:

Երուսաղէմի ժողովը շեշտը դրաւ հաւատքի ու վերանորոգեալ սրբութեան կեանքին վրայ, որուն պարտաւոր էին հետամտելու հեթանոսութենէ քրիստոնեայ դարձողները, հռու մնալով կուռքերու պղծութիւններէն եւ անբարոյութենէ: Ուստի առաքեալներն ու երէցները այդ ուղղութեամբ թուղթ մըն ալ գրեցին Անտիոքի եկեղեցիին եւ իրենց կողմէ Բարսաբա մականուանեալ Յուզան եւ Շիդան Անտիոք զրկեցին, Պօղոսին եւ Բառնաբասին հետ, որ հոն պարտն ու պատշաճը տնօրինեն:

Երուսաղէմի ժողովին կողմէ զրկուած թուղթը Անտիոքի եկեղեցիին մէջ կարդացուելով հանդարտեցուց հաւատացեալներուն միտքերը եւ դադրեցան վէճերը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Պօղոս եւ Բառնաբաս հաւատով, նուիրումով եւ համբերութեամբ կատարեցին իրենց առաքելութիւնը՝ միշտ նկատի ունենալով Աստուծոյ խօսքին տարածումը եւ մեղաւորներուն փրկութիւնը: Անոնց անձնուրացութիւնը

օրինակ դառնալու է բոլոր հաւատացեալներուն, մանաւանդ Քրիստոսի եւ անոր սուրբ եկեղեցւոյն նուիրեալ սպասարկուներուն:

2) Տարակարծութիւններ եւ վէճեր յաճախ կրնան պատահիլ եկեղեցիներէ ներս եւ վրդովել հաւատացեալները: Այդպիսի պարագաներուն պէտք է դիմել եկեղեցւոյ վերին իշխանութեան ու հնազանդիլ անոր որոշումին եւ հրահանգներուն: Անտիոքի եկեղեցիին վէճը կրնար սաստկանալ եւ կործանարար արդիւնքի յանգիլ, եթէ անոր պաշտօնէութիւնը Երուսաղէմ՝ առաքեալներու հեղինակութեան չդիմէր:

3) Երբ Յիսուս Քրիստոս խաչին վրայ իր սուրբ արիւնը թափեց աշխարհի փրկութեան համար, այլեւս կարիք չմնաց կատարելու Հին Ուխտի մովսիսական օրէնքներն ու ծէսերը եւ ճեւականութիւնները, որովհետեւ անոնք ստուերն էին մեր Տիրոջ փրկագործութեան: Հետեւաբար Յիսուսի խաչելութեան եւ թափած արեան շնորհիւ մեղաց թողութեան կրնային արժանանալ բոլոր մեղաւորները: Ով որ Յիսուսի անունը կանչէր՝ կրնար փրկուիլ իր մեղքերէն, որով այլեւս պայման էր միայն հաւատք ու մաքուր նկարագիր ունենալ Աստուծոյ շնորհքին արժանանալու եւ երկինքի արքայութիւնը ժառանգելու համար: Երուսաղէմի ժողովը շեշտը դրաւ այս երկու կէտերուն վրայ:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Լիւստրաչի մէջ Պօղոս ի՞նչ ըստ ի ծնէ կաղ մարդուն:
- 2) Կաղ մարդուն բժշկութիւնը տեսնելով մարդիկ ի՞նչ աղաղակեցին:
- 3) Դիոսի տանարին քորմը ի՞նչ ըրաւ:
- 4) Պօղոս եւ Բառնաբաս իրենց հանդերձները պատտելով ի՞նչ ըրին եւ ի՞նչ ըսին ժողովորդին:

5) Անտիոքէ եւ Իկոնիոնէ եկող շարամիտ հրեաները ի՞նչ ըրին:

6) Պօղոս ի՞նչ վիճակի մէջ քաղաքէն դուրս քաշկընտուեցաւ:

7) Պօղոս եւ Բառնաբաս իրենց առաքելական ճամբորդութիւնը վերջացնելէ ետք ո՞ր վերադարձան:

8) Կարգ մը հրեայ քրիստոնէաներ Հրէաստանէն Անտիոք երթալով ի՞նչ քարոզեցին քրիստոնէութիւնը ընդունող հեթանոսներուն:

9) Որո՞նք դէմ կեցան եւ հակաճանեցին այդ քարոզիչներուն:

10) Անտիոքի եկեղեցին ինչո՞ւ Երուսաղէմ դրկեց Պօղոսն ու Բառնաբասը:

11) Առաքեալները ինչո՞ւ ժողով գումարեցին Երուսաղէմի մէջ:

12) Երուսաղէմի ժողովը ի՞նչ որոշեց եւ ի՞նչ ըրաւ:

13) Երուսաղէմի ժողովէն դրկուած թուղթը ի՞նչ ազդեցութիւն գործեց Անտիոքի եկեղեցիին մէջ:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Կը հաւատանք թէ Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքով կը փրկուինք մենք, ինչպէս եւ անոնք»: Գործք 15.11:

### ԺԶ. Դաս

#### Պօղոսի Առաքելական Երկրորդ Ծամբորդութիւնը (Ա.)

(Գործք 15.36-41 եւ 16.1-40)

Պօղոս առաքեալ ժամանակ մը Անտիոք մնալէ վերջ Շիրալիին հետ ձեռնարկեց առաքելական երկրորդ ճամբորդութեան:

Անոնք Անտիոքէն ելլելով պտըտեցան Սիւրիոյ եւ Կիլիկիոյ մէջ ու քարոզեցին:

Պօղոս կ'այցելէր իր հիմնած նախկին եկեղեցիները եւ կը քաջալերէր հաւատացեալները: Անոնց կ'աւանդէր Երուսաղէմի ժողովին կողմէ իրեն ապսպրուած պատուէրները եւ ամենուն կը սորվեցնէր Աստուծոյ խօսքը:

Լիւստրայի մէջ հանդիպեցան Տիմոթէոս անունով բարեպաշտ երիտասարդի մը եւ զայն իրենց հետ առին: Հետագային Տիմոթէոս շատ օգտակար եղաւ Պօղոսին ու եպիսկոպոսութեան աստիճան ստանալով մեծ ծառայութիւն մատուցանեց Ալեստարանի քարոզութեան:

Պօղոս եւ Շիրա զանազան քաղաքներ պտըտելէ վերջ հասան Տրովադա: Այնտեղ, գիշերը Պօղոս տեսիլք մը ունեցաւ: Մակեդոնացի մարդ մը կանգնած՝ կ'աղաչէր իրեն եւ կ'ըսէր, «Մակեդոնիա անցիր եւ օգնէ՛ մեզի»:

Այդ տեսիլքէն վերջ Պօղոս եւ Շիրա Մակեդոնիա գացին եւ մտան Փիլիպպէ քաղաքը ուր կար հռոմէական գաղութ մը: Շարաթ օր քաղաքէն դուրս գետեզերք գացին, որ աղօթքի վայր համարուած էր եւ տեղւոյն հրեայ կիները սովորութիւն ունէին հոն հաւաքուելու: Պօղոս, Շիրա եւ իրենց հետ եղողները հաւաքուող կիներուն սկսան խօսիլ Աստուծոյ խօսքը: Ունկնդիր կիներուն մէջէն Լիդիա անունով ծիրանի զգեստներ ծախող կին մը Պօղոսի խօսքերէն ազդուելով հաւատքի եկաւ եւ իր տունով մկրտը-

ւեցաւ: Ապա իր տունը հրաւիրելով հիւրասիրեց Պօղոսն ու Շիղան:

Օր մը աղօթքի երթալու ատեն հանդիպեցան աղախինի մը որ հարցուկ ոգի ունէր եւ բախտազուշակութիւն ընելով իր տէրերուն մեծ շահ կը բերէր: Այս աղախինը Պօղոսին եւ անոր ընկերներուն ետեւէն իյնալով կ'աղաղակէր ու կ'ըսէր, «Այս մարդիկը բարձրեալ Աստուծոյ ծառաներն են, որ կը ծանօթացնեն ձեզի փրկութեան ճամբան»:

Այսպէս շատ օրեր այս աղախինը նոյն բանը կ'ընէր: Օր մըն ալ Պօղոս նեղանալով՝ դարձաւ ու անոր ներսիդին եղող ոգիին ըսաւ.

— Յիսուս Քրիստոսի անունով կը պատուիրեմ քեզի, ելի՛ր ատկէ:

Նոյն ժամուն ոգին ելաւ ու աղախինը հանգստացաւ: Սակայն անոր տէրերը այս բանը տեսնելով նեղուեցան, քանի որ իրենց վաստակին յոյսը կտրեցաւ: Ուստի Պօղոսն ու Շիղան բռնեցին ու քաղաքին հրապարակը՝ իշխաններուն եւ զօրագլուխներուն առջեւ հանելով ամբաստանեցին եւ ըսին.

— Այս մարդիկը մեր քաղաքը իրար կ'անցընեն. իրենք հրեայ են եւ այնպիսի սովորութիւններ կը քարոզեն, որոնք մեզի՝ հռոմայեցիներու համար անընդունելի եւ անգործադրելի են:

Բազմութիւնը հաւաքուեցաւ անոնց շուրջ: Իսկ քաղաքին զօրագլուխները առանց դատաստան տեսնելու ծեծել տուին Պօղոսն ու Շիղան եւ զանոնք խոշտանգելէ վերջ բանտ նետեցին, ու բանտապետին պատուիրեցին որ զգուշութեամբ պահէ: Բանտապետն ալ զանոնք դրաւ ներքին բանտը եւ անոնց ոտքերը կոճղի մէջ ամրապնդեց:

Կէս գիշերին Պօղոս եւ Շիղա կ'աղօթէին ու զԱստուած կ'օրհնէին բանտին մէջ. իսկ միւս բանտարկեալներն ալ զիրենք մտիկ կ'ընէին: Յանկարծ մեծ շարժ մը եղաւ եւ բանտին հիմերը սասանեցան: Իսկոյն բոլոր դռները բացուեցան ու բանտարկեալներուն կապերը քակուեցան:

Երբ բանտապետը արթնցաւ ու բանտին դռները բացուած տեսաւ, կարծեց թէ բոլոր բանտարկեալները փախած են եւ այդ պատճառով ալ ինք ծանր պատիժի պիտի ենթարկուի՝ որպէս անպարտաճանաչ պաշտօնեայ: Ուստի անմիջապէս իր սուրը քաշեց ինքզինք սպաննելու համար: Պօղոս առաքեալ այս բանը տեսնելով բարձրաձայն կանչեց եւ ըսաւ.

— Քու անձիդ մի՛ վնասեր, որովհետեւ բոլորս ալ հոս ենք:

Բանտապետը ճրագ մը ուզեց եւ ներս վազելով ինկաւ Պօղոսի եւ Շիղայի առջեւ: Ապա զանոնք բանտէն դուրս հանելով իր տունը տարաւ եւ ըսաւ.

— Տէրեր, ի՞նչ պէտք է ընեմ որ փրկուիմ:

— Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսի ու պիտի փրկուիս դուն եւ քու տունդ, — ըսին Պօղոս ու Շիղա եւ Տիրոջ պատգամը խօսեցան անոր ու ամէն անոնց որոնք անոր տան մէջ կը գտնուէին:

Բանտապետը Պօղոսին եւ Շիղային վէրքերը լուաց ու Յիսուս Քրիստոսի հաւատալով մկրտուեցաւ իր բոլոր տունով: Ապա անոնց առջեւ սեղան դրաւ, հիւրասիրեց եւ ուրախացաւ իր ընտանեկան պարագաներով միասին:

Առաւօտուն, քաղաքին զօրագլուխները իրենց սպասաւորներուն հետ լուր ղրկեցին բանտապետին եւ յանձնարարեցին որ ազատ արձակէ Պօղոսն ու Շիղան:

Երբ բանտապետը այս լուրը հաղորդեց, Պօղոս ըսաւ.

— Առանց դատաստան տեսնելու մեզ յայտնապէս ծեծեցին ու հիմա գաղտո՞ւկ կ'ուզեն արձակել: Մենք հռոմայեցի\* ենք, թող իրենք զան ու մեզ հանեն:

\*) Առաքեալներու ժամանակ Միջերկրական ծովուն եզերքները գտնուող բոլոր երկիրները մաս կը կազմէին հռոմէական կայսրութեան: Այս հսկայ կայսրութեան տարածքին վրայ կային բացառիկ քաղաքներ, որոնց մէջ ծնած անձերը կը ստանային Հռոմի Քաղաքացիութիւն եւ կը կոչուէին Հռոմայեցի: Այս բացառիկ քաղաքներէն մէկն էր Աստի Տարսոն, որ ծնած էր Պօղոս Առաքեալ: Հռոմի քաղաքացիութիւն կրնային ստանալ նաեւ այն անձերը որոնք կայսրութեան մեծ ծառայութիւն մը կը մատուցանէին: →

Զօրագլուխները երբ անոնց հոռմայեցի ըլլալը իմացան, շատ վախցան, քանի որ օրէնքին առջեւ պատասխանատու էին իրենց անարդար ու կոշտ վարմունքին համար: Ուստի եկան Պօղոսին եւ Շիղային քով ու քաղցրութեամբ խօսեցան անոնց հետ՝ խնդրելով որ այդ քաղաքէն մեկնին:

Պօղոս եւ Շիղա բանտէն ելլելով զացին Լիզիայի տունը: Ապա Փիլիպպէի նորադարձ քրիստոնեաները յորդորելէ եւ խրախուսելէ ետք մեկնեցան քաղաքէն՝ ուրիշ տեղեր եւս աւետարանելու:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Քրիստոսի սերը ստիպեց Պօղոսն ու Շիղան ձեռնարկելու առաքելական երկրորդ ֆամբորդութեան մը: Անոնք սիրալոյսով յանձն առին ամէն տեսակ նեղութիւններ ու չարչարանքներ, աւետարանի լոյսը տարածելու եւ մեղաւոր մարդոց սիրտերը Աստուծոյ դարձնելու համար:

2) Պօղոսի եւ Շիղայի բանտարկութիւնը պատճառ դարձաւ որ հեթանոս բանտապետը իր տունով հաւատայ Յիսուս Քրիստոսի եւ մկրտուելով փրկուի իր մեղքերէն:

3) Քրիստոսի անուան համար հաւատացեալներուն կրած հալածանքներն ու նեղութիւնները բեղմնաւոր կը դարձնեն ենթականերուն հաւատքը եւ անոնք պատճառ կը դառնան մեղաւորներուն առ Աստուած դարձին: Հետեւաբար երբ քրիստոնէական հաւատքի համար հալածանք կամ նեղութիւն հասնի, վիատելու չենք. այլ աղօթքով խնդրելու ենք Աստուծմէ որ մեզ հաւատքի մէջ գորացնէ, ընկրկումէ փրկէ եւ մեզ հալածողներն ալ հաւատքի բերէ:

Որեւ իշխանութիւն իրաւունք չունէր առանց դատաստանի հոռմայեցի մը պատճելու կամ խոշտանգելու. այլապէս՝ իր արարքին համար պատասխանատու կը մնար Հոռմի կայսեր առջեւ:

Պօղոս եւ Շիղա Հոռմի քաղաքացիութիւն ունէին, եւ եթէ ուզէին՝ կրնային բողոքել Հոռմի կայսեր ու պատճել տալ այն զօրագլուխները, որոնք խոշտանգած եւ բանտ նետած էին զիրենք՝ առանց դատաստանի:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1) Պօղոս իր առաքելական երկրորդ ֆամբորդութիւնը որո՞ւն հետ կատարեց:

2) Պօղոս գիշերը տեսիլքի մէջ ի՞նչ տեսաւ:

3) Ո՞ր կիներ Պօղոսի խօսքերէն ազդուելով Յիսուսի հաւատաց եւ իր տունովը մկրտուեցաւ:

4) Հարցուկ ոգի ունեցող աղախիներ ի՞նչ կ'աղաղակէր:

5) Պօղոս ի՞նչ ըսաւ հարցուկ ոգիին եւ աղախիներ ի՞նչ եղաւ:

6) Աղախիներն տէրերը ինչո՞ւ զայրացան Պօղոսի եւ Շիղայի դէմ եւ ի՞նչ ըրին անոնց:

7) Քաղաքին զօրագլուխները Պօղոսն ու Շիղան ի՞նչ ըրին:

8) Կէս գիշերին Պօղոս եւ Շիղա բանտին մէջ ի՞նչ կ'ընէին:

9) Յանկարծ ի՞նչ պատահեցաւ:

10) Բանտապետը ինչո՞ւ կ'ուզէր ինքզինք սպաննել:

11) Պօղոս առաքեալ ի՞նչ ըսաւ բանտապետին:

12) Բանտապետը Պօղոսին ձայնը առնելէ ետք ի՞նչ ըրաւ:

13) Բանտապետը ի՞նչ հարցուց Պօղոսի եւ Շիղայի:

14) Պօղոս եւ Շիղա ի՞նչ պատասխանեցին անոր:

15) Բանտապետը ո՞ր տարաւ զանոնք եւ ի՞նչ ըրաւ:

16) Բանտապետը Յիսուսի հաւատալէ ետք ի՞նչ ըրաւ:

17) Առաւօտուն զօրագլուխները իրենց սպասարները դրկելով ի՞նչ յանձնարարեցին բանտապետին:

18) Պօղոս առաքեալ ի՞նչ պատասխանեց զօրագլուխներուն, բանտապետին միջոցաւ:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսի ու պիտի փրկուիս դուն եւ քու տունդ»: Գործք 16.31:

## ՓԷ. Դաս

### **Պօղոսի Առաքելական Երկրորդ Ճամբորդությունը (Բ.)**

#### **Աւետարանչութիւն Թեսաղոնիկէի եւ Բերիայի Մէջ (Գործք 17.1-34, 18.1-22)**

Պօղոս եւ Շիղա Փիլիպպէէն ելան եւ զանազան տեղեր պտըտելէ ու քարոզելէ ետք հասան Թեսաղոնիկէ: Պօղոս առաքեալ ըստ իր սովորութեան զնաց հրեաներուն ժողովարանը եւ երեք Շաբաթ օրեր ժողովուրդին խօսեցաւ Յիսուս Քրիստոսի փրկագործութեան մասին: Աստուածաշունչի մարգարէական զիրքերը մեկնելով կը բացատրէր անոնց եւ ցոյց կու տար թէ Քրիստոս պէտք էր չարչարուէր ու յարութիւն առնէր:

Հրեաներէն ոմանք հաւատալով յարեցան Պօղոսի եւ Շիղայի: Յոյներէն ալ մեծ թիւով մարդիկ եւ երեւելի յոյն կիներ հաւատացին, բայց չհաւատացող հրեաները նախանձեցան ու աղմուկ հանելով քաղաքը խռովեցին: Յարձակեցան Յասոն անունով հաւատացեալ մարդու մը տան վրայ՝ Պօղոսն ու Շիղան ձեռք անցընելու յոյսով. սակայն զանոնք հոն չգտնելով՝ Յասոնը բռնեցին եւ անոր հետ մի քանի բարեպաշտ քրիստոնեաներ քաջբռնելով տարին քաղաքապետներուն առջեւ ու կանչուրուտելով ըսին.

— Անոնք որ աշխարհը խռովեցին հո՛ս հասեր են եւ Յասոնն ալ զանոնք իր տունը ընդուներ է: Ասոնք ամէնքը կայսեր հրամաններուն հակառակ կը գործեն՝ ըսելով թէ ուրիշ թագաւոր մը կայ, Յիսուս անունով:

Քաղաքապետները այս խօսքերը լսելով խռովեցան, սակայն Յասոնէն ու միւս քրիստոնեաներէն երաշխաւորութիւն առնելով՝ ազատ արձակեցին զանոնք:

Այս դէպքին վրայ քրիստոնեայ եղբայրները գիշերով Բերիա ուղարկեցին Պօղոսն ու Շիղան, որոնք հոն հասնելով գացին հրեաներուն ժողովարանը ու քարոզեցին Աստուծոյ խօսքը:

Բերիայի հրեաները Թեսաղոնիկէի մէջ եղողներէն աւելի ազնիւ ըլլալով՝ կատարեալ յօժարութեամբ ընդունեցին Աստուծոյ խօսքը եւ սկսան քննել Հին Կտակարանի զիրքերը՝ տեսնելու համար թէ արդեօք ստո՞յգ էին Պօղոսի խօսքերը:

Անոնցմէ շատեր հաւատացին. միեւնոյն ատեն մեծ թիւով յոյներ ալ հաւատքի գալով քրիստոնեայ դարձան: Բայց Թեսաղոնիկէի հրեաները երբ իմացան թէ Բերիայի մէջ ալ Պօղոս քարոզած է, հոն ալ գացին եւ ժողովուրդը գրգռեցին: Այն ատեն հաւատացեալ եղբայրները անմիջապէս Պօղոսը Աթէնք տարին ու խոստացան Շիղան եւ Տիմոթէոսը շուտով իր քով զրկել:

### **Քարոզութիւն Աթէնքի Մէջ**

Պօղոս առաքեալ Աթէնքի մէջ Շիղային ու Տիմոթէոսին սպասելով հանդերձ կը քարոզէր Քրիստոսի փրկութեան աւետարանը, եւ բոլոր քաղաքը կոպաչատութեան մէջ ընկըղմած տեսնելով հոգիով անհանգիստ կ'ըլլար: Ուստի հրեաներուն կը խօսէր իրենց ժողովարանին մէջ, իսկ հրապարակներու վրայ ալ ամէն օր կը քարոզէր Աստուծոյ խօսքը որո՛նց որ հանդիպէր:

Եպիկուրեան\* եւ Ստոյիկեան\*\* փիլիսոփաներէն ո-

\*) Եպիկուրեանները հեթանոս փիլիսոփայական մտածողութեան մը հետեւողներն էին, որոնք նիստապաշտ ըլլալով կ'ուրանային Աստուծոյ նախախնամութիւնը, հոգիի անմահութիւնն ու մեռելոց յարութիւնը: Անոնք երջանկութիւնը կը փնտռէին հաճոյքի մէջ. սակայն կը դատապարտէին մոլութիւնները՝ այն պատճառով որ անոնք կը նուագեցնէին մարդոց իմացական երջանկութիւնը: Բայց Պօղոս առաքելի ժամանակ Եպիկուրեանները իրենց



մանք Պօղոսի խօսքերը լսելով կը հակաճառէին անոր: Անոնցմէ ոմանք իրարու հարց կու տային ըսելով, «Այս սերմանաքաղը\*\*\* ի՞նչ ըսել կ'ուզէ»: Ուրիշներ ալ կ'ըսէին, «Կ'երեւի թէ օտար աստուածներու քարոզիչ է»: Ուստի Պօղոսը տարին Արիսպագոս\*\*\*\* եւ ըսին.

— Կրնա՞նք իմանալ թէ ինչ է քու քարոզած այս նոր վարդապետութիւնդ:

Պօղոս առաքեալ անոնց առջեւ կանգնելով ըսաւ.

— Ո՛վ Աթենացիներ, կը տեսնեմ որ ամէն տեսակէտով խիստ կրօնասէր մարդիկ էք դուք: Վասնզի երբ կը պտըտէի եւ կը դիտէի ձեր պաշտամունքները, գտայ բազին մը, որուն վրայ գրուած էր՝ «Անճաճօթ Աստուծոյն»: Արդ, ես ձեզի կը քարոզեմ Այն՝ զոր դուք կը պաշտէք առանց ճանչնալու:

Այսպիսի նախաբանով մը սկսաւ Պօղոս իր ատենաբանութիւնը եւ ներկաներուն բացատրեց թէ Աստուած ստեղծած է երկինքն ու երկիրը: Ան մարդոց ձեռքով չի նուաճ տաճարներու մէջ չի բնակիր, եւ ոչ ալ՝ իբրեւ բանի մը կարօտ՝ կը պաշտուի մարդկային ձեռքերով: Ի՛նքն է որ ամենուն կու տայ կեանք եւ շունչ: Բոլոր ազգերը ստեղ-

ըմբռնումին հակառակ՝ անձնատուր եղած էին ճշտութիւններու եւ մոլութիւններու:

\*\*) Ստոյիկեաններն ալ ուրիշ փիլիսոփայական հոսանք մը կը կազմէին, որոնք կը սորվեցնէին բնութեան օրէնքներուն համաձայն կեանք մը ապրիլ, արհամարհել փորձանքները, ձախորդութիւններն ու ցատրը եւ չլլանալ, չխանդավատուիլ յաջողութիւններէն: Պօղոս առաքեալի օրերուն այս աղանդը բաւական տարածուած էր Աթէնքի մէջ:

\*\*\*) Սերմանաքաղ կը նշանակէ ուրիշներուն կարկտան խօսքերով քարոզութիւն ընող:

\*\*\*\*) Կարգ մը աղբիրներու համաձայն Արիսպագոսը նշանատր ատեան մըն էր Աթէնքի մէջ, ուր կը դատուէին զանազան յանցապարտներու կարգին նաեւ կուրքերու դէմ խօսողներն ու հայհոյութիւն ընողները: Իսկ ոմանց համաձայն Արիսպագոսը ատեան մը չէր, այլ՝ փիլիսոփաներու ակումբ մը, ուր ամէն մարդ ազատ էր ատենաբանելու կամ ճառախօսելու: Արիսպագոսը միշտ լեցուն կ'ըլլար ճետաքրքիր ունկնդիրներով, որովհետեւ Աթենացիներն ու օտար այցելուները կը սիրէին նոր բաներ ըսել ու լսել:

ծած է մէկ արիւնէ եւ անոնց համար հաստատած է ժամանակաշրջաններ եւ բնակութեան սահմաններ, որպէսզի անոնք զինք փնտոեն ու գտնեն: Աստուած հեռու չէ մեզմէ, քանի որ մենք Անով կ'ապրինք եւ Անով կը շարժինք: Մենք ցեղակից ենք Աստուծոյ, հետեւաբար սխալ է կարծել թէ Աստուածութիւնը նման եղած ըլլայ մարդկային արուեստով եւ հնարամտութեամբ քանդակուած ոսկիին, արծաթին կամ քարին: Այժմ Աստուած ամէն տեղ մարդոց կը պատուիրէ որ ապաշխարեն իրենց մեղքերուն համար, քանի որ Ան սահմանած է օր մը՝ որուն մէջ պիտի դատէ աշխարհը արդարութեամբ՝ այն Մարդուն (Յիսուս Քրիստոսի) ձեռքով զոր նշանակած է այդ բանին:

Այս բոլոր բաները պատմելէ ետք Պօղոս առաքեալ խօսեցաւ Աստուծոյ Որդւոյն՝ Քրիստոսի մարդեղութեան, յայտնութեան, փրկագործութեան եւ յարութեան մասին, ու շեշտը դրաւ մեռելոց յարութեան եւ յաւիտենական կեանքի վրայ:

Մտիկ ընողներէն ոմանք երբ «Մեռելոց յարութիւն» խօսքը լսեցին, սկսան Պօղոսը ծաղրել: Ոմանք ալ ըսին.

— Այդ բանին համար ուրիշ անգամ քեզի մտիկ պիտի ընենք:

Պօղոսի ատենաբանութիւնը մտիկ ընողներուն մէջ գտնուեցան նաեւ մի քանի անձեր, որոնք հաւատացին Յիսուս Քրիստոսի եւ յարեցան Պօղոսի: Այդ փոքրաթիւ խումբը եղաւ կորիզը Աթէնքի եկեղեցիին, որուն անդամները հետզհետէ բազմացան:

## Քարոզութիւններ Կորնթոսի Մէջ

Պօղոս առաքեալ Աթէնքէն անցաւ Կորնթոս: Հոն գտաւ Ակիւղաս անունով հրեայ վրանագործ մը, որ իր կնոջ՝ Պրիսկիլայի հետ հալածական՝ նոր եկեր էր Իտալիայէն:

Պօղոս ինք ալ վրանագործ ըլլալով անոնց քով կեցաւ եւ միասին աշխատեցան:

Պօղոս Շարաթ օրերը ժողովարանին մէջ կը խօսէր ու կը համոզէր հրեաներն ու յոյները: Երբ Շիղա եւ Տիմոթէոս Մակեդոնիայէն Կորնթոս եկան, Պօղոս սկսաւ աւելի եռանդով քարոզել ու համոզել հրեաները թէ Յիսուսն է մարգարէական գիրքերուն մէջ խոստացուած մեսիան՝ Աստուծոյ Որդին:

Երբ հրեաները չուզեցին հաւատալ ու դէմ կենալով հայհոյեցին, Պօղոս իր զգեստները թօթուելով ըսաւ անոնց.

— Զեր արիւնը ձեր գլխուն. ես անպարտ եմ: Ասկէ վերջ կ'երթամ հեթանոսներուն:

Աստուած Պօղոսը զօրացնելու համար գիշեր մը տեսիլքով յայտնուեցաւ եւ ըսաւ, «Մի՛ վախճար, այլ խօսէ եւ լուռ մի՛ կենար, վասնզի ես քեզի հետ եմ եւ ոեւէ մէկը քեզի դէմ պիտի չելլէ՝ քեզի վնաս մը հասցնելու, քանզի ես շատ ժողովուրդ ունիմ այս քաղաքին մէջ»:

Պօղոս Կորնթոսի մէջ մնաց մէկուկէս տարի եւ շատերուն քարոզեց Աստուծոյ խօսքը եւ զանոնք դաստիարակեց:

Օր մը հրեաները միաբանութեամբ յարձակեցան Պօղոսի վրայ եւ զայն բռնելով տարին քաղաքին ատենը եւ փոխանորդ բռնչիւն՝ Գալիոնի առջեւ հանելով ամբաստանեցին եւ ըսին.

— Այս մարդը խաբերայ մըն է եւ մարդոց կը սորվեցընէ օրէնքէ դուրս՝ զԱստուած պաշտել:

Երբ Պօղոս խօսելու կը պատրաստուէր, Գալիոն հրեաները ատենանէն դուրս վռնտելով ըսաւ.

— Եթէ ձեր ամբաստանութիւնը անիրաւութեան կամ չար գործի մը համար ըլլար, ձեզի մտիկ կ'ընէի: Իսկ եթէ խնդիրը ձեր կրօնքին շուրջ կը դառնայ, դուք ձեզի տեսէք այդ դատը, որովհետեւ ես այդպիսի բաներու դատաւոր ըլլալ չեմ ուզեր:

Այս դէպքէն վերջ Պօղոս առաքեալ Կորնթոսի մէջ ատեն մը եւս մնալէ ետք, Ակիւղասի եւ Պրիսկիլայի ընկերակցութեամբ Եփեսոս գնաց: Հոն ալ քարոզեց հրեաներու ժողովարանին մէջ եւ ապա իր ընկերակիցները Եփեսոս ձգելով ինք նաւով գնաց Պաղեստինի Կեսարիա քաղաքը եւ անկէ անցաւ Երուսաղէմ: Հոն ողջունեց տեղւոյն եկեղեցիին առաջնորդներն ու ժողովուրդը եւ ապա գնաց Անտիօք:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Պօղոս եւ Շիղա Աստուծոյ ապաւինեցան եւ չընկրկեցան իրենց դէմ ցցուող նեղութիւններուն եւ հալածանքներուն առջեւ: Անոնք անդադար քարոզեցին Քրիստոսի աւետարանը եւ յաջողեցան մարդոց սիրտերը Աստուծոյ դարձնել ու հիմնել եկեղեցիներ իրենց այցելած վայրերուն մէջ:

2) Պօղոս թէ՛ համարձակ էր եւ թէ՛ ալ իմաստուն՝ իր խօսքերուն մէջ: Ան նախ կը գնահատէր մարդոց լաւ յատկութիւնները եւ ապա իր խօսքը կ'ուղղէր անոնց: Պօղոս առաքեալի նման մեկն ալ ջանալու ենք իմաստուն ըլլալ ու տեղին համեմատ գնահատել մարդոց լաւ յատկութիւնները եւ ապա խօսիլ Աստուծոյ խօսքը:

3) Հրեաներ մերժեցին Աստուծոյ խօսքը եւ իրենց կամակորութեան պատճառով դուրս մնացին Աստուծոյ թագաւորութենէն: Մինչդեռ հեթանոս ժողովուրդներ հաւատքի գալով Աստուծոյ որդիներ կոչուեցան եւ արժանի եղան երկինքի արքայութիւնը ժառանգելու:

4) Մեկն ալ կրնանք դուրս մնալ Աստուծոյ թագաւորութենէն, եթէ մերժենք Աւետարանին խօսքերը ու թաւալինք մեղքի տիղմին մէջ: Ազգեր, ժողովուրդներ, ընտանիքներ եւ անհատներ եթէ Աստուծոյ խօսքէն հեռանալով մեղսալից կեանք ապրին, կը կործանին:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Պօղոս եւ Ծիդա Թեսաղոնիկէ հասնելով ի՞նչ ըրին:
- 2) Որո՞նք յարձակեցան Յասոնի տան վրայ. ինչո՞ւ համար:
- 3) Ամբոխը Յասոնը ո՞ր տարաւ:
- 4) Քրիստոնէականեր գիշերով ո՞ր դրկեցին Պօղոսն ու Ծիդան:
- 5) Պօղոս եւ Ծիդա Բերիայի մէջ ի՞նչ ըրին:
- 6) Հաւատացեալ եղբայրները ինչո՞ւ Պօղոսը Աթէնք տարին:
- 7) Արիսպագոսի մէջ Պօղոս ի՞նչ խօսեցաւ:
- 8) Պօղոսի քարոզը ի՞նչ ազդեցութիւն գործեց ունկնդիրներուն վրայ:
- 9) Պօղոս Աթէնքէն մեկնելով ո՞ր գնաց:
- 10) Պօղոս Կորնթոսի մէջ որո՞նց քով կեցաւ:
- 11) Ի՞նչ էր Պօղոսի արհեստը:
- 12) Տեսիլքի մէջ Աստուած ի՞նչ ըսաւ Պօղոսի:
- 13) Կորնթոսի հրեաները Պօղոսը բռնելով ո՞ր տարին:
- 14) Գալիոն ի՞նչ ըսաւ հրեաներուն եւ ի՞նչ ըրաւ:
- 15) Պօղոս առաքեալ Կորնթոսէն ո՞ր անցաւ եւ այնտեղէն նաւ առնելով ո՞ր գնաց:

## ԺԸ. Դաս

### Պօղոսի Առաքելական Երրորդ Ծամբորդութիւնը

(Ա.)

(Գործք 18.23-28, 19.1-20)

Պօղոս առաքեալ ժամանակ մը Անտիոք մնալէ ետք, ձեռնարկեց ճամբորդութեան մը եւս, Աւետարանի քարոզութեան համար: Նախ շրջեցաւ Գաղատացւոց երկիրը ու անկէ անցաւ Փոիւզիա՝ միշտ քարոզելով: Եկեղեցիներ հիմնելով եւ հաւատքի մէջ հաստատելով նախապէս քրիստոնեայ դարձողները:

Այդ օրերուն Ապողոս անունով ուսեալ եւ ճարտասան հրեայ մը Եփեսոս գնաց: Այս մարդը Սուրբ Գրոց հմուտ էր եւ նոյն ատեն Տիրոջ ճամբուն տեղեակ ըլլալով՝ եռանդով կը խօսէր ու կ'ուսուցանէր Յիսուսի մասին: Սակայն Ապողոս զիտէր միայն Յովհաննէսի մկրտութիւնը:

Պօղոս առաքեալի արհեստակից ու բարեկամ՝ Ակիլղաս եւ անոր կինը՝ Պրիսկիլա իրենց մօտ առին Ապողոսը եւ աւելի ճիշդ կերպով բացատրեցին Աստուծոյ ճամբան:

Ապողոս Եփեսոսի քրիստոնեայ եղբայրներէն յանձնարարական թուղթեր առնելով Աքայիա գնաց եւ ապա Կորնթոս անցնելով մեծապէս օգտակար եղաւ իր քարոզներով եւ ուսուցումներով:

Մինչ Ապողոս Կորնթոսի մէջ էր, Պօղոս առաքեալ եկաւ Եփեսոս: Հոն գտաւ մի քանի աշակերտներ եւ անոնց հարցուց.

— Երբ հաւատացիք, Սուրբ Հոգին առի՞ք արդեօք: Անոնք պատասխանեցին.

— Բայց մենք լսած իսկ չենք թէ Սուրբ Հոգի կայ:

— Հապա ի՞նչ անուևնով մկրտուեցաք, — ըսաւ Պօղոս:

— Յովհաննէսի մկրտութեամբ, — ըսին անոնք:

Պօղոս առաքեալ ըսաւ անոնց.

— Յովհաննէս մկրտեց ապաշխարութեան մկրտութեամբ եւ ժողովուրդին պատուիրեց որ իրմէ ետքը եկողին՝ այսինքն Յիսուս Քրիստոսի՝ հաւատան:

Պօղոսի խօսքերուն վրայ այդ մարդիկը մկրտուեցան Յիսուսի անուևնով. եւ երբ Պօղոս անոնց վրայ իր ձեռքերը դրաւ, Սուրբ Հոգին իջաւ անոնց վրայ եւ սկսան զանազան լեզուներ խօսիլ ու մարգարէանալ:

Պօղոս առաքեալ Եփեսոսի ժողովարաններուն մէջ քարոզեց եւ շատ շատեր դարձի բերաւ: Սակայն կարգ մը հրեաներ երբ իրեն դէմ կեցան, ինք անոնցմէ հեռացաւ եւ զատեց իր աշակերտները ու Տիւրան անուևնով մէկու մը դպրատան մէջ սկսաւ անոնց խօսիլ եւ բացատրել Աստուծոյ խօսքը: Ասիկա տեւեց երկու տարի, եւ Ասիայի հրեայ եւ յոյն բնակիչները լսեցին Աստուծոյ խօսքը:

Աստուած Պօղոսի ձեռքով շատ հրաշքներ կը գործէր, այնպէս որ անոր քրտինքով թաթաւուն թաշկինակներ ու վարչամակներ հիւանդներուն կը տանէին եւ անոնք կը բժշկուէին իրենց ախտերէն եւ չար ոգիները կ'ելլէին այսահարներէն:

Սկեաւ անուևնով հրեայ քահանայապետի մը եօթը որդիները երդմնեցուցիչ\* էին: Անոնք Պօղոս առաքեալի ձեռքով կատարուած հրաշքները տեսնելով՝ յանդգնեցան այսահարները բժշկելու համար կանչել Յիսուսի անուևը եւ ըսել, «Ձեզ կ'երդմնեցնեմ Յիսուսով, զոր Պօղոս կը քարոզէ»: Իսկ չար ոգին պատասխանեց անոնց.

— Յիսուսը գիտեմ, Պօղոսն ալ կը ճանչնամ. բայց դուք ո՞վ էք:

\*) Երդմնեցուցիչ կը կոչուէին անոնք որոնք իշխանութիւն ունէին Աստուծոյ անունը կանչելով այսահարներէն հանելու եւ հալածելու չար ոգիները կամ դէտերը: Առաքեալներ դէտերը կը հանէին Յիսուս Քրիստոսի անունով: Կային նաեւ սուտ եւ խաբէքայ մարդիկ որոնք կը պնդէին թէ դէտեր հանելու զօրութիւն ունին եւ կը դիմէին կախարդական միջոցներու:

Այս խօսքէն ետք այսահարը ցատկեց քահանայապետին որդիներուն վրայ եւ սկսաւ խոշտանգել զանոնք. որոնք հազիւ կրցան խոյս տալ դիւահարին ձեռքէն եւ իրենց հազուստները հոն ձգելով վիրաւորուած վիճակով փախան:

Այս դէպքը իմացան Եփեսոսի մէջ բնակող բոլոր հրեաներն ու յոյները եւ մեծ վախ մը ինկաւ անոնց մէջ: Բոլոր հաւատացեալները սկսան զԱստուած փառաւորել: Շատ շատեր հաւատքի գալով քրիստոնեայ մկրտուեցան: Նոյնպէս կախարդութեան հետեւողներէն շատեր քրիստոնեայ դառնալով իրենց կախարդական գիրքերը այրեցին, ոչինչ սեպելով անոնց դրամական մեծ արժէքը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Աստուած միշտ ձեռնադրու է իր հաւատարիմ գաւակներուն եւ անոնց ձեռքով մեծ գործեր կը կատարէ, ինչպէս որ ըրաւ Պօղոս առաքեալի ձեռքով:

2) Սկեաւ քահանայապետի երդմնեցուցիչ գաւակները իշխանութիւն չունէին Յիսուսի անունով դեւեր հանելու, եւ երբ յանդգնեցան, պատժուեցան: Անոնք Յիսուսի անունը օգտագործելու ուզեցին ցուցամոլութեամբ եւ իրենց փառամոլութեամբ մղուած: Աստուած իր մեծամեծ գործերը եւ հրաշքները կը կատարէ միայն իր ծառաներուն եւ զինք սրտանց պաշտողներուն ձեռքով:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1) Պօղոս իր երրորդ ճամբորդութիւնը ո՞ր քաղաքէլ սկսաւ:

2) Ո՞վ էր Ապողոս:

3) Ապողոս ի՞նչ կ'ընէր Եփեսոսի մէջ:

- 4) Որո՞նք Ապողոսը իրենց քով առին:
- 5) Ապողոս նախապէս որո՞ւ մկրտութիւնը միայն գիտէր:
- 6) Հաւատացեալները Պօղոսի քրտինքին թաշկինակ ու վարշամակ քսելով ի՞նչ կ'ընէին:
- 7) Սկեւա քահանայապետին եօթը որդիները ի՞նչ կ'ընէին:
- 8) Չար ոգին ի՞նչ ըստ անոնց:
- 9) Դիւահարը ի՞նչ ըրտ անոնց:
- 10) Եփեսոսի մէջ շատեր Բրիստոսի հաւատալէ ետք իրենց կախարդական գիրքերը ի՞նչ ըրին:

## ԺԹ. Դաս

### Պօղոսի Առաքելական Երրորդ Ճամբորդութիւնը (Բ.)

#### Դեմետրիոս Արծաթագործին Սարքած Խոռվութիւնը

(Գործք 19.23-40, 20.1)

Երբ Պօղոս առաքեալի քարոզութիւնները մեծ ալ դիւնք կու տային Եփեսոսի մէջ եւ շատեր քրիստոնեայ կ'մկրտուէին, Դեմետրիոս անունով արծաթագործ մը մէ խոռվութիւն հանեց ընդդէմ Պօղոսի եւ քրիստոնեաներու:

Եփեսոսի մէջ կը գտնուէր Արտեմիս դիցուհիին հսկա մեհեանը եւ ուրիշ երկիրներէ հեթանոսներ կու գայլ գայն տեսնելու: Դեմետրիոս բազմաթիւ վարպետ արհեւ տաւորներու ձեռքով շինել կու տար Արտեմիսի մեհեանը արծաթէ փոքրիկ նմոյշները եւ զանոնք սուղ գիներով կ'ծախէր օտար այցելուներուն:

Դեմետրիոս քրիստոնէութեան աճումին մէջ տեսաւ ի գործին նուազումը, քանի որ քրիստոնէութիւնը ընդունու նախկին հեթանոսները այլեւս չէին այցելել Եփեսոս մեհեանը եւ ինք չէր կրնար անոնց ծախել իր շինել տու արծաթեայ մեհեանիկները: Ուստի օր մը իր արհեստաւորները ժողվելով ըսաւ անոնց.

— Մարդիկ, դուք գիտէք որ այս գործէն է մեր շահը կը տեսնէք ու կը լսէք որ այս Պօղոսը ո՛չ միայն Եփեսոսացիներուն, այլ նաեւ Ասիայի մէջ շատերուն միտքեր դարձուց եւ անոնք այլեւս կարեւորութիւն պիտի չընծայէ կուռքերուն եւ անոնց տաճարներուն, ու նաեւ Արտեմիս

մեհեանն ալ ոչինչ պիտի համարուի: Իսկ մեր շահն ալ այս ձեւով պիտի վտանգուի:

Արհեստաւորները Դեմետրիոսի խօսքերը լսելով բարկութեամբ լեցուեցան եւ սկսան պոռալ, «Մեծ է Եփեսացւոց Արտեմիսը»: Անոնց պոռչտուքը լսելով ուրիշներ ալ միացան իրենց եւ մեծ բազմութեամբ ուղղուեցան քաղաքին բացօթեայ թատրոնը: Ամբոխավարները ճամբու ընթացքին բռնեցին Պօղոսի ուղեկիցներէն Գայիոսն ու Արիստարքոս Մակեդոնացին եւ զանոնք ալ իրենց հետ թատրոն տարին: Պօղոս առաքեալ այս բանը տեսնելով ուզեց ամբոխին մէջ մտնել, բայց իր բարեկամները չթողուցին, նկատելով որ կրնար վտանգի ենթարկուիլ: Այդ միջոցին խուռն բազմութեան մէջէն դուրս կանչուեցաւ Աղեքսանդրոս անունով մարդ մը զոր հրեաները յառաջ քշած էին: Աղեքսանդրոս իր ձեռքը շարժեց եւ ուզեց ամբոխին խօսիլ. սակայն անոնք երբ իմացան թէ ան հրեայ մըն է եւ կուռքերու հակառակ մէկը, շուրջ երկու ժամ անընդհատ պոռացին. «Մեծ է Եփեսացւոց Արտեմիսը»: Ամբոխին միացողներէն շատեր չէին գիտեր թէ ի՞նչ բանի համար հաւաքուեր էին հոն, սակայն կ'աղաղակէին ուրիշներու հետ:

Այս խառնաշփոթ բազմութիւնը հանդարտեցնելու համար առջեւ անցաւ քաղաքին դպրապետը (հեթանոսներու կրօնապետը) եւ ըսաւ.

— Ո՛վ Եփեսացիներ, ո՞վ է այն մարդը որ չի գիտեր թէ Եփեսոս քաղաքը մեհեանավայրն է մեծ Արտեմիս դիցուհիին... Դուք պէտք է հանդարտիք եւ բան մը չընէք յանդուժութեամբ: Հոս բերած էք այդ մարդիկը, որոնք ո՛չ մեհեան կողոպտած են եւ ոչ ալ հայհոյած մեր աստուածներուն: Եթէ Դեմետրիոս եւ իր վարպետները մէկու մը դէմ բան մը ունին, թող դատարան երթան: Իսկ եթէ խընդիրը կը դառնայ այլ բաներու շուրջ, օրինաւոր ժողովով թող որոշուի: Այս դէպքին համար կրնանք մենք ալ իբրեւ խոռվարար ամբաստանուիլ եւ որեւէ կերպով չենք կրնար արդարացնել մենք մեզ:

Ամբոխը դպրապետին խօսքերուն վրայ ցրուեցաւ: Իսկ աղմուկին դադրելէն վերջ Պօղոս իր քով կանչեց քրիստոնեայ եղբայրներն ու աշակերտները եւ անոնց հրաժեշտի ողջոյն տալով մեկնեցաւ Մակեդոնիա:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Աստուծոյ դաշտին մէջ աշխատող մշակներուն առջեւ խոչընդոտներ, նեղութիւններ եւ հալածանքներ միշտ անպակաս են: Դեմետրիոսի նման մարդիկ յաճախ իրենց անձնական շահերուն վտանգուիլը տեսնելով կրնան ուրիշներն ալ ոտքի հանել ու պայքարիլ Աստուծոյ խօսքին տարածման դէմ: Սակայն հաւատքի մէջ զօրաւոր մշակները չեն ընկրկիր դժուարութիւններու առջեւ, այլ աղօթքով ու յարատեւ աշխատանքով կը շարունակեն իրենց պաշտօնը մինչեւ ի մահ:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ի՞նչ էր Դեմետրիոսի զբաղումը:
- 2) Դեմետրիոս ինչո՞ւ համար իր արհեստակիցները ոտքի հանեց:
- 3) Ամբոխը ի՞նչ ըսելով կը պոռար:
- 4) Ո՞ր դիցունիին մեհեանը կար Եփեսոսի մէջ:
- 5) Պօղոս առաքեալ ամբոխը տեսնելով ի՞նչ ընել ուզեց:
- 6) խոռվարարները Պօղոսին ընկերները ո՞ր տարին:
- 7) Զաղաքին հեթանոս դպրապետը ի՞նչ ըսաւ հաւաքուած բազմութեան:
- 8) Դպրապետին խօսքերը լսելէ ետք ժողովուրդը ի՞նչ ըրաւ:
- 9) Աղմուկին դադրելէն ետք Պօղոս առաքեալ ի՞նչ ըրաւ:

Պօղոսի Առաքելական Երրորդ  
Ճամբորդութիւնը  
(Գ.)

Վերադարձ Դէպի Երուսաղէմ  
(Գործք 20, 21.1-19)

Պօղոս առաքեալ Մակեդոնիայի զանազան շրջանները պտըտելով քարոզեց եւ յորդորեց քրիստոնեաները որ հաստատ մնան իրենց հաւատքին մէջ: Պտըտեցաւ նաեւ այլ վայրեր եւ ապա հասաւ Տրովադա ու եօթը օր կեցաւ այնտեղ: Վերջին գիշերը բոլոր հաւատացեալները հաւաքուեցան սրահի մը մէջ հաց բեկանելու (Յիսուսի վերջին ընթրիքին յիշատակութիւնը կատարելու):

Պօղոս առաքեալ կատարեց հացին բեկանումը եւ քարոզեց: Այդ պահուն Եւտիքոս անունով երիտասարդ մը պատուհանին վրայ նստած կը հետեւէր քարոզին: Երբ քարոզը երկարեցաւ, Եւտիքոս սկսաւ մրափել ու յանկարծ իր հաւասարակշռութիւնը կորսնցնելով երրորդ յարկէն վար ինկաւ: Մարդիկ վրայ հասնելով տեսան որ երիտասարդը մեռած էր:

Պօղոս առաքեալ իր քարոզը ընդհատելով վար իջաւ, Եւտիքոսը գրկեց եւ ըսաւ բազմութեան.

— Մի՛ խոռվիք, որովհետեւ ասոր հոգին իր մէջ է:

Այս խօսքին վրայ երիտասարդը իսկոյն վերակենդանացաւ եւ բոլոր ներկաները ուրախացան: Պօղոս առաքեալ վեր ելլելով շարունակեց իր խօսքը մինչեւ առաւօտ:

Առաւօտուն Պօղոս առաքեալ Տրովադայէ ելաւ եւ զնաց Ասոն եւ ապա Միլետոս, ուրկէ նաւ առնելով որոշեց շուտով Երուսաղէմ երթալ, որովհետեւ կը փափաքէր Պենտէկոստէի օրը հոն ըլլալ:

Երբ նաւը Միլետոս հանդիպեցաւ, Պօղոս այնտեղէն լուր զրկեց Եփեսոսի եկեղեցիի երէցներուն եւ զանոնք իր մօտ կանչեց: Երէցները փութացին եւ ողջագուրուեցան իրեն հետ: Պօղոս անոնց յորդորներ տուաւ եւ պատուիրեց որ խղճմտօրէն հովուեն իրենց հօտը՝ բարի օրինակ ըլլալով հաւատացեալներուն: Անոնց յայտնեց թէ իրեն կը սպասեն կապեր ու նեղութիւններ, եւ ինք այլեւս պիտի չկարենայ տեսնել իրենց երեսը: Բոլոր երէցները Պօղոսի պարանոցը իյնալով համբուրեցին զայն ու լացին: Պօղոս առաքեալ ամենուն հետ ծունկի եկաւ, աղօթեց եւ զանոնք Աստուծոյ խնամքին յանձնելով շարունակեց իր ծովային ճամբորդութիւնը:

Երբ նաւը Տիւրոս հասաւ, Պօղոս իր ուղեկիցներով քաղաք իջաւ եւ եօթը օր մնաց հաւատացեալ քրիստոնեաներուն քով, որոնք իրեն կը թելադրէին Երուսաղէմ չերթալ: Եօթը օր վերջ Տիւրոսի քրիստոնեաները իրենց կիներով ու տղաներով Պօղոսը ճամբու դրին: Մովեզբերքին վրայ բոլորը ծունկի եկան, աղօթեցին եւ Պօղոս առաքեալին օրհնութիւնը առնելով վերադարձան իրենց տուները:

Երբ նաւը Պտղոմայիս հասաւ, Պօղոս իր ծովային ճամբորդութիւնը վերջացնելով իջաւ նաւէն ու այնտեղ գտնուող քրիստոնեաները ողջունելէ ետք անցաւ Կեսարիա եւ իջեւանեցաւ Փիլիպպոս սարկաւազին տունը ու ժամանակ մը հոն կեցաւ:

Այդ օրերուն Ագաթոս անունով մարգարէ մը Հրէաստանէն Կեսարիա եկաւ: Ասիկա Պօղոսի գօտին առնելով՝ անով կապեց իր իսկ ձեռքերն ու ոտքերը եւ ըսաւ.

— Այսպէս կ'ըսէ Սուրբ Հոգին, «Հրեաներ Երուսաղէմի մէջ այսպէս պիտի կապեն այն մարդը՝ որուն գօտին է այս, եւ զայն պիտի մատնեն հեթանոսներուն ձեռքը»:

Ներկաները երբ այս խօսքը լսեցին, աղաչեցին որ Պօղոս Երուսաղէմ չերթայ: Բայց անիկա պատասխանեց.

— Ի՞նչ կ'ընէք եւ ինչո՞ւ կու լաք՝ իմ սիրտս ալ ճմլե-  
լով: Ես Երուսաղէմի մէջ ո՛չ միայն կապուելու, այլ մեռ-  
նելու ալ պատրաստ եմ Տէր Յիսուս Քրիստոսի անուան  
համար:

Պօղոսի պատասխանէն վերջ ամէնքն ալ լուռ կեցան եւ  
ապա ըսին:

— Տիրոջ կամքը թող ըլլայ:

Այնուհետեւ Պօղոս Երուսաղէմ զնաց եւ հետեւեալ օրը  
ներկայացաւ Տեառնեղբայր Յակոբոսին, որ Երուսաղէմի  
եկեղեցիին Տեսուչն էր: Բոլոր երէցները ժողվուեցան  
Պօղոսին քով եւ ան իւրաքանչիւրը բարեւելէ ետք անոնց  
պատմեց իր առաքելական ճամբորդութիւններու ընթաց-  
քին Աստուծոյ կատարած սքանչելի գործերը եւ հեթանոս-  
ներուն դարձը:

Բոլոր լսողները ուրախացան եւ Աստուծոյ փառք  
տուին:

### ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1) Պօղոս առաքեալ եղաւ անվեհեր ւստարանիչ մը:  
Ան իր հանդիպած վայրերուն մէջ ցանց Աստուծոյ խօսքը՝  
միշտ փարոզելով, ուսուցանելով, դաստիարակելով, յոր-  
դորելով եւ խրատելով բոլորը որ Աստուծոյ դառնան, հա-  
ւատան Յիսուս Քրիստոսի, ամուր մնան հաւատքի մէջ եւ  
պահեն Աստուծոյ պատուիրանները:

2) Պօղոս առաքեալին փափաքն ու իղձն էր որ բոլոր  
մարդիկ հաւատային Քրիստոսի եւ փրկուէին իրենց մեղ-  
քերէն: Ան իր նպատակին հասնելու համար որեւէ սիգ  
չխնայեց ու կուրծք տուաւ իրեն դէմ ցցուող նեղու-  
թիւններուն եւ հալածանքներուն: Նոյնիսկ չվարանցաւ  
Երուսաղէմ երթալու, ուր իրեն կը սպասէին հալածանք,  
բանտարկութիւն եւ կապանք:

3) Պօղոս առաքեալի նման ոմեւ էր քրիստոնեայ պէտք է  
հետամուտ ըլլայ Աստուծոյ խօսքը ցանելու եւ մարդոց  
հոգիներու փրկութեան համար աշխատելու:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Պօղոս առաքեալ քանի՞ օր կեցաւ Տրովպայի մէջ:
- 2) Պօղոս առաքեալ վերջին գիշերը ի՞նչ ըրաւ:
- 3) Զարոզի պահուն երիտասարդ մը ո՞րն նատած էր:
- 4) Ի՞նչ էր անունը այդ երիտասարդին:
- 5) Եւտիքոս մրափելու ատեն ի՞նչ եղաւ:
- 6) Մարդիկ Եւտիքոսի մօտ երթալով ի՞նչ վիճակի մէջ  
գտան զայն:
- 7) Պօղոս Եւտիքոսը գրկելով ի՞նչ ըսաւ բազմութեան:
- 8) Պօղոս Եփեսոսի երէցները կանչելով ի՞նչ ըսաւ:
- 9) Կեսարիայի մէջ Պօղոս որո՞ւն տունը իջեւանեցաւ:
- 10) Ագաբոս Պօղոսի գօտին առնելով ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ  
ըսաւ:
- 11) Ներկաները Ագաբոսին խօսքերը լսելով ի՞նչ ըսին  
Պօղոսի:
- 12) Պօղոս ի՞նչ պատասխանեց անոնց:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Ես Երուսաղէմի մէջ ոչ թէ միայն կապուելու, հապա նաեւ  
մեռնելու ալ պատրաստ եմ Տէր Յիսուս Քրիստոսի անուան հա-  
մար»: Գործք 21.13:



## ԻԱ. Դաս

### Հրեաներուն Յարձակումը Պողոսի Վրայ

(Գործք 21.20-40, 22.1-29)

Երուսաղէմի հրեայ քրիստոնեաներուն մէջ տարածայնուած էր թէ Պողոս առաքեալ իր առաքելական ճամբորդութիւններուն ընթացքին հեթանոս երկիրներու մէջ գտնուող հրեաները կ'ապստամբեցնէր Մովսէս մարգարէի օրէնքներուն եւ կանոններուն դէմ:

Պողոս առաքեալ երբ Երուսաղէմ եկաւ, տեղւոյն եկեղեցիին երէցները ժողովուրդին մէջէն այդ թիւրիմացութիւնը փարատելու համար իրեն ըսին.

— Կը տեսնե՞ս, եղբա՛յր, քանի՛ բիւրաւոր հաւատացեալ հրեաներ կան ու ամէնքն ալ օրէնքին նախանձաւոր են: Անոնք քու մասիդ իմացած են թէ այլ երկիրներու մէջ գտնուող հրեաներուն կը սորվեցնես Մովսէսի օրէնքին դէմ ապստամբիլ: Հիմա մեր քով կան չորս ուխտադիր մարդիկ: Ա՛ռ զանոնք եւ անոնց հետ օրինական մաքրութիւնդ կատարէ ու անոնց հետ տաճար երթալով եօթը օր զոհ մատուցանէ, որպէսզի ամէն ոք տեսնէ թէ դուն Մովսէսի օրէնքներուն համեմատ կը քալես:

Պողոս առաքեալ համակերպեցաւ անոնց ու այդ չորս մարդոց հետ օրինական մաքրութիւնը կատարելով տաճար գնաց եւ անոնցմէ իւրաքանչիւրին անունով զոհ մատուցանել տուաւ:

Եօթը օրերը լրանալու վրայ էին, երբ Ասիացի հրեաներ Պողոսը տաճարին մէջ տեսնելով՝ զրգռեցին ամբոխը անոր դէմ եւ բռնեցին զայն՝ աղաղակելով.

— Ո՛վ իսրայելացի մարդիկ, օգնութեան հասէք. այս այն մարդն է որ ամէն տեղ օրէնքին ու այս տաճարին հա-

կառակ բաներ կը սորվեցնէ, եւ նաեւ տաճարին մէջ յոյներ (հեթանոսներ) ալ մտցուց ու պղծեց այս սրբավայրը:

Հրեաներ նախապէս քաղաքին մէջ Պողոսի հետ տեսած էին հեթանոսութենէ քրիստոնեայ դարձած Եփեսացի Տրոֆիմոսը եւ կը կարծէին թէ զայն տաճար մտցուցած է:

Այս ժխտորին վրայ մարդիկ բռնեցին Պողոսը եւ տաճարէն դուրս հանելով սկսան անինայ ծեծել եւ ջանացին սպաննել զայն: Այս իրարանցումին վրայ բոլոր քաղաքը ոտքի ելաւ եւ բազմահազար մարդիկ խռնուեցան դէպքին վայրը:

Քաղաքին հազարապետը իրարանցումին լուրը առնելով կարծեց թէ Երուսաղէմը խռովութեան մէջ է: Ուստի անմիջապէս իր զինուորները առնելով փութաց ամբոխը ցրուելու: Պողոսը ծեծողները զինուորները տեսնելով փախան, իսկ հազարապետը մօտենալով բռնեց Պողոսը եւ հրամայեց կրկնակի շղթաներով կապել զայն ու զօրանոց տանիլ:

Ամբոխը զինուորներուն ետեւէն երթալով կը պոռար, «Այդ մարդը մէջտեղէն վերցուր»: Զօրանոցէն ներս մտնելու ատեն, Պողոս ըսաւ հազարապետին.

— Կրնա՞մ բան մը խօսիլ քեզի:

Հազարապետը հարցուց Պողոսին.

— Դո՞ւն ես արդեօք այն եգիպտացին՝ որ օրեր առաջ չորս հազար աւազակաբարոյ մարդիկ ապստամբեցուցիր եւ անապատը տարիր:

Պողոս պատասխանեց.

— Ես հրեայ եմ եւ Կիլիկիոյ Տարսոն քաղաքէն: Կ'աղաչեմ քեզի, հրաման տուր որ ժողովուրդին խօսիմ:

Հազարապետին հրամանին վրայ, Պողոս աստիճաններուն վրայ կանգնելով ձեռքը ժողովուրդին շարժեց եւ ըսաւ.

— Մարդիկ, եղբայրներ եւ հայրեր, մտի՛կ ըրէք: Ես հրեայ մարդ մըն եմ, Կիլիկիոյ Տարսոն քաղաքին մէջ ծնած եւ այս քաղաքին մէջ Գամաղիէլի ձեռքին տակ մեծցած,

եւ մեր հայրենի օրէնքին ճշմարտութեամբ կրթուած: Նախանձախնդիր էի Աստուծոյ եւ կը հալածէի այն ամէնքը որ այս ճամբուն (քրիստոնէութեան) կը հետեւէին: Օրին մէկն ալ քահանայապետներէն թուղթեր առած Դամասկոս կ'երթայի՝ հոն գտնուող հաւատացեալներն ալ կապելու եւ Երուսաղէմ բերելու, որ պատժուին:

«Երբ Դամասկոսի մօտեցեր էի, կէսօրուան դէմ, յանկարծ երկինքէն մեծ լոյս մը փայլատակեց իմ բոլորտիքս եւ ես գետին ինկայ ու լսեցի ձայն մը որ ինծի կ'ըսէր. «Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ զիս կը հալածես»: Ես ալ հարցուցի, «Ո՞վ ես, Տէր»: Եւ Տէրը ինծի ըսաւ, «Ելի՛ր, գնա՛ Դամասկոս ու հոն քեզի պիտի գրուցուի ինչ որ սահմանուած է քեզի համար»:

«Այս դէպքին վրայ երբ ա՛լ չէի տեսներ, հետս եղողները ձեռքէս բռնած զիս Դամասկոս մտցուցին: Հոն Անանիա անունով աստուածավախ մարդ մը քովս գալով ըսաւ, «Սաւո՛ւղ եղբայր, վե՛ր նայէ... մեր հայրերուն Աստուածը առաջուրնէ քեզ ընտրեց որպէսզի իր կամքը ճանչնաս ու այն Արդարը (Յիսուսը) տեսնես եւ անոր բերնէն ձայն լսես: Վասնզի դո՛ւն պիտի ըլլաս անոր վկան բոլոր մարդոց առջեւ այն ամէն բաներուն համար՝ զորս տեսար ու լսեցիր: Եւ հիմա ինչո՞ւ կը դանդաղիս. ելի՛ր, մկրտուէ ու լուացուէ քու մեղքերէդ՝ Անոր (Յիսուսի) անունը կանչելով»:

«Այնուհետեւ, երբ ես Երուսաղէմ դարձայ ու տաճարին մէջ կ'աղօթէի, մտքի յափշտակութիւն մը եկաւ վրաս եւ զի՛նք (Յիսուսը) տեսայ որ ինծի կ'ըսէր, «Աճապարէ՛, եւ շուտով Երուսաղէմէն ելի՛ր, վասնզի ինծի համար քու ըրած վկայութիւնդ պիտի չընդունին»: Ես ալ ըսի, «Տէր, իրենք ալ գիտեն թէ ե՛ս էի որ Քեզի հաւատացողները բանտ կ'առաջնորդէի եւ ժողովարաններու մէջ կը ծեծէի: Ու երբ քու Ստեփանոս վկայիդ արիւնը կը թափուէր, ես ինքս ալ ներկայ էի հոն եւ անոր սպանման կամակից ըլլալով, զայն սպաննողներուն հանդերձները կը պահէի»:

Տէրը ինծի ըսաւ, «Գնա՛, ես քեզ հեռաւոր հեթանոսներուն պիտի ղրկեմ»:

Մինչեւ հոս մարդիկ լուռ մտիկ ըրին Պօղոսին խօսքերը. ապա իրենց ձայները բարձրացուցին եւ ըսին.

— Վերցո՛ւր աշխարհէ այդպիսի մարդը, որովհետեւ չի՛ վայելեր ատոր ողջ մնալ:

Երբ անոնք այսպէս կ'աղաղակէին եւ իրենց հանդերձներն ալ վեր նետելով օդին մէջ փոշի կը ցանէին, հազարապետը հրամայեց որ Պօղոսը զօրանոց մտցնեն ու ծեծով հարցուփորձ ընեն՝ եւ հասկնան թէ ի՛նչ տեսակ յանցանք գործած է:

Երբ զինուորները Պօղոսը կապեցին ու ծեծելու պատրաստուեցան, ան վերակացու հարիւրապետին յայտնեց թէ ինք հոռմայեցի մըն է եւ չեն կրնար զինք ծեծել առանց դատաստան տեսնելու եւ վրան յանցանք գտնելու:

Հարիւրապետը Պօղոսին խօսքերը փոխանցեց հազարապետին: Վերջինը Պօղոս առաքեալին հոռմայեցի ըլլալը իմանալով շատ վախցաւ, քանի որ հոռմայեցիի մը հետ կոշտ վարուելով եւ առանց դատաստան տեսնելու ծեծել տալով կրնար պատասխանատու նկատուիլ Հռոմի կայսեր առջեւ: Ուստի Պօղոսին կապերը քակել տուաւ եւ որոշեց յաջորդ օր զայն ատեանի առջեւ հանել ու հրեաներու քահանայապետներն ալ կանչելով անոնց առջեւ խօսեցնել՝ դէպքին ստուգութիւնը իմանալու համար:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1) Պօղոս առաքեալ իր կրած տառապանքներուն ընթացքին իսկ չվարանցաւ քարոզելու Քրիստոսը, այլ զԱյն դաւանեցաւ Տէր եւ Փրկիչ: Հալածանք, բանտարկութիւն, ծեծ, խոշտանգում եւ պէս պէս նեղութիւններ, չկրցան ընկնել ու տկարացնել զայն: Որքան հալածուէր, այնքան աւելի կ'աւելնար անոր եռանդը եւ քաջարար կը քարոզէր ու կը վկայէր:

2) Պօղոս առաքելի նման մե՛նք ալ ամուր բռնելու ե՛նք մեր հաւատքը, համբերելով ամէն տեսակ նեղութիւններու: Անոր նման մե՛նք ալ դաւանելու ե՛նք թէ Յիսուս Քրիստոս մեր Տէրն ու Փրկիչն է:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Երուսաղէմի մէջ ի՞նչ տեսակ խօսքեր տարածայնուած էին Պօղոս առաքելի մասին:
- 2) Երուսաղէմի եկեղեցիին երէցները ի՞նչ ընել թելադրեցին Պօղոսին:
- 3) Տաճարին մէջ որո՞նք յարձակեցան Պօղոսին վրայ:
- 4) Որո՞նք ազատեցին Պօղոսը ամբոխին ձեռքէն:
- 5) Պօղոս առաքել ի՞նչ խնդրեց հազարապետէն:
- 6) Պօղոս իր ձեռքը ժողովորդին շարժել էտք ի՞նչ ըստ:
- 7) Հրեաներ Պօղոսը մտիկ ընելէ էտք ի՞նչ աղաղակեցին:
- 8) Հազարապետը ինչո՞ւ կապել տուաւ Պօղոսը:
- 9) Պօղոս ի՞նչ ըստ հարիւրապետին:
- 10) Հազարապետը Պօղոսին հոռմայեցի ըլլալը իմանալէ էտք ի՞նչ ըրտ:

### ԻՔ. Դաս

#### Պօղոս Առաքելին Դատաւարութիւնը

(Գործք 22.30, 23 եւ 24)

Յաջորդ օր հազարապետը Պօղոսը ատեան իջեցուց եւ կանչեց հրեաներու քահանայապետներն ու գլխաւորներն ալ, որպէսզի լսէ Պօղոսին դէմ եղած ամբաստանութիւնը:

Պօղոս նայուածքը դարձուց ժողովին եւ ըսաւ.

— Մարդիկ, եղբայրներ, ես բոլորովին բարի խղճմբտանքով կեանք վարեի եմ մինչեւ այսօր:

Նոյն միջոցին Անանիա քահանայապետը իր քով կանգնողներուն հրամայեց որ Պօղոսի բերնին զարնեն: Իսկ Պօղոս առանց գիտնալու թէ ան քահանայապետ է, ըսաւ անոր.

— Աստուած քեզի պիտի զարնէ, ծեփած պատ. դուն որ օրէնքին համեմատ զիս դատելու նստեր ես, ապօրինի կերպով հրամա՞ն կ'ընես որ ինձի զարնեն:

Շուրջը գտնուողները ըսին Պօղոսի.

— Աստուծոյ քահանայապետը կը նախատես:

— Եղբայրներ, չէի գիտեր թէ քահանայապետ է, — պատասխանեց Պօղոս:

Ատեանին մէջ նստող հրեաներուն մէկ մասը Սադուկեցի եւ միւս մասն ալ Փարիսեցի էին: Պօղոս առաքել այս բանը գիտնալով աղաղակեց.

— Մարդիկ, եղբայրներ, ես փարիսեցի եմ, փարիսեցիի որդի: Ես մեռելներու յարութեան յոյսին համար կը դատուիմ:

Պօղոսին այս խօսքը իրարանցում յառաջ բերաւ ժողովականներուն մէջ, որովհետեւ Սադուկեցիները մեռելներու յարութեան եւ հրեշտակներու գոյութեան չէին հա-

ւատար. իսկ Փարիսեցիները երկուքն ալ կը դաւանէին. ուստի փարիսեցի դպիրներէն ոմանք ոտքի ելլելով ընդ-դիմացան Սաղուկեցիներուն եւ ըսին.

— Մենք այս մարդուն վրայ չարութիւն մը չենք գտներ. բայց եթէ հոգի մը կամ հրեշտակ մը խօսեցաւ իրեն, Աստուծոյ հետ չմարտնչինք:

Սաղուկեցիներու եւ Փարիսեցիներու միջեւ երկպա-ռակութիւնը ա՛յնքան սաստկացաւ, որ հազարապետը վախցաւ որ կրնան Պօղոսը պատառել: Ուստի հրամայեց իր զինուորներուն որ զայն զօրանոց տանին:

Հետեւեալ գիշեր Տէրը երեւցաւ Պօղոսի եւ ըսաւ.

— Քաջասի՛րտ եղի՛ր Պօղոս, ինչպէս որ Երուսաղէմի մէջ ինձի համար վկայեցիր, այնպէս պէտք է վկայես նաեւ Հռոմի մէջ:

Յաջորդ առաւօտ քառասունէ աւելի հրեաներ իրենք զիրենք նզովեցին եւ որոշեցին ո՛չ ուտել եւ ոչ ալ խմել մինչեւ որ Պօղոսը սպաննեն: Անոնք իրենց այս երդումն ու դիտաւորութիւնը յայտնեցին քահանայապետներուն եւ անոնցմէ խնդրեցին երթալ հազարապետին քով եւ Պօղոսը նորէն ատեան բերել տալ: Սակայն Պօղոսի քեռորդին անոնց այս դաւաճանութիւնը իմանալով զօրանոց գնաց եւ Պօղոսին պատմեց. ապա անոր ցուցմունքով ներկա-յացաւ հազարապետին ու լուր տուաւ հրեաներու դա-ւադրութեան մասին:

Հազարապետը հրեաներուն դաւադրութիւնը իմանա-լով գիշերանց Պօղոսը զրկեց Կեսարիա՝ Փելիքս կուսա-կալին՝ ձիաւոր զինուորներու հսկողութեան ներքեւ: Նամակ մըն ալ գրեց կուսակալին, ըսելով. — «Փելիքս կուսակալիդ ողջոյն: Այս մարդը հրեաներէն բռնուեր էր եւ անոնցմէ պիտի սպաննուէր. իսկ ես զինուորներովս վրայ հասնելով, ազատեցի զինք, իմանալով որ հռոմա-յեցի է: Եւ ուզելով գիտնալ թէ ի՛նչ յանցանքի համար կ'ամբաստանէին զինք՝ իջեցուցի անոնց ատեանը, եւ գտայ որ ան ամբաստանուած է իրենց օրէնքին վերա-

բերեալ ինդրի մը համար, եւ մահուան կամ կապանքի արժանի յանցանք մը գործած չէ: Երբ տեղեկացայ թէ հրեաները այդ մարդուն որոգայթ պիտի լարեն, իսկոյն գայն քեզի զրկեցի, հրաման ընելով ամբաստանողներուն ալ՝ որ բու առջելդ խօսին անոր մասին: Ողջ եղիր»:

Հինգ օր յետոյ Անանիա քահանայապետը իր հետե-ւորդներով եւ Տերտիլղոս անունով ճարտասանի մը հետ Կեսարիա գնաց ու ներկայացաւ կուսակալին՝ Պօղոսը ամբաստանելու համար: Փելիքս կուսակալ հրեաներուն ներկայութեան իր առջեւ հանել տուաւ Պօղոսը եւ նախ լսեց հրեաներու ամբաստանութիւնը: Անոնք Պօղոսը ներկայացուցին որպէս խռովարար եւ տաճարը պղծող: Կուսակալը զանոնք մտիկ ընելէ ետք աչք ըրաւ Պօղոսին որ խօսի: Պօղոս առաքեալ ըսաւ թէ ինք տասներկու օր-ուան եկած էր Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագութիւն ընելու. երբ զինք տաճարին մէջ բռնեցին, ոեւէ մէկուն հետ վիճարանութիւն չէր ընել եւ ոչ ալ իր շուրջը բազ-մութիւն հաւաքած էր: Պօղոս առաքեալ խոստովանեցաւ թէ ինք զԱստուած կը պաշտէ այն ճամբուն համեմատ զոր հրեաներ հերձուած կը կոչեն: Ըսաւ նոյն ատեն, թէ ինք որեւէ անիրաւութիւն կամ յանցանք չէ գործած, այլ պար-զապէս զինք կ'ամբաստանեն քանի որ ինք կը հաւատայ մեռելներու յարութեան:

Փելիքս կուսակալը քրիստոնէութեան մասին բաւա-կան ծանօթութիւն ունէր: Ուստի երկու կողմերը մտիկ ընելէ վերջ հրեաներուն ըսաւ.

— Երբ Լիւսիաս հազարապետը հոս իջնէ, պիտի քննեմ ձեր խնդիրը:

Այնուհետեւ կուսակալը յաճախ տեսակցութիւններ ունեցաւ Պօղոսի հետ եւ զայն իր առջեւ կանչելով լսեց անկէ Յիսուս Քրիստոսի մասին. սակայն ճշմարտութեան հետամուտ չեղաւ, այլ Պօղոսէն կաշառք ակնկալելով զայն չարձակեց, հակառակ անոր որ ստուգեց անոր անմեղու-թիւնը:

Երկու տարի ետք Փելիքսին տեղ կուսակալ նշանակուեցաւ Փետտոս: Իսկ Փելիքս հրեաներուն շնորհք ընելու համար Պողոսը բանտին մէջ թողուց:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Պօղոս առաքեալ Քրիստոսի անուան համար իր կրած նախատիճեցներն ու կապանքները իրեն պատիւ համարեց եւ սիրով կրեց զանոնք:

2) Մենք ալ երբ նշմարտութեան համար նախատուելու ըլլանք, տրտնջալու չենք, այլ Պօղոս առաքեալի նման ուրախ պէտք է ըլլանք, քանի որ արդարութեան համար հալածուողներուն եւ նախատուողներուն վարձքը շատ պիտի ըլլայ երկինքի մէջ:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1) Պօղոս իր նաշուածքը ժողովին դարձնելով ի՞նչ ըսաւ:

2) Անանիա քահանայապետը ի՞նչ հրամայեց իր քովը կանգնողներուն:

3) Պօղոս առաքեալ գիտէ՞ր անոր քահանայապետ ըլլալը:

4) Պօղոս առաքեալ ի՞նչ ըսաւ Անանիա քահանայապետին:

5) Փարիսեցիները ի՞նչ բաներու կը հաւատային:

6) Սադուկեցիները մտնելոց յարութեան կը հաւատայի՞ն:

7) Պօղոս առաքեալ ի՞նչ ըսելով աղաղակեց ատեանին մէջ:

8) Փարիսեցի դպիրներէն ոմանք ի՞նչ ըսելով պաշտպանեցին Պօղոսը:

9) Քառասունէ աւելի հրեաներ ի՞նչ ընել կ'ուզէին Պօղոսը:

10) Հազարապետը ինչն՞ է համար գիշերով Կեսարիա դրոկեց Պօղոսը:

11) Փելիքս կուսակալը ինչն՞ է համար Պօղոսը արձակել չուզեց:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Քաջասիրտ եղիք, Պօղոս, վասնզի ինչպէս Երուսաղէմի մէջ ինձի համար վկայեցիր, այնպէս պետք է որ դուն Հոռոմի մէջ ալ վկայես»: Գործք 23.11:

## ԻԳ. Դաս

### Պօղոս Փետոս Կուսակալին Եւ Ազրիպպաս Արքային Առջեւ (Գործք 25 եւ 26)

Փետոս կուսակալը իշխանութեան գլուխ անցնելէ ետք, երբ Կեսարիայէ Երուսաղէմ գնաց, հրեաներու քահանայապետն ու գլխաւորները անոր ներկայանալով յայտնեցին իրենց ամբաստանութիւնը Պօղոսի դէմ, եւ խնդրեցին որ զայն Երուսաղէմ բերել տայ դատելու համար: Հրեաներու նպատակն էր Պօղոսին դէմ դարան լարել ու սպաննել:

Փետոս ընթացք չտուաւ հրեաներու խնդրանքին. բայց խոստացաւ Կեսարիա վերադառնալուն Պօղոսը ատեանի առջեւ հանել: Նոյն ատեն արտօնեց հրեաներուն որ իրեն հետ Կեսարիա իջնեն Պօղոսի դէմ իրենց ամբաստանութիւնները ընելու համար:

Իր խոստումին համաձայն, երբ Փետոս Կեսարիա վերադարձաւ, յաջորդ օրն իսկ ատեանը նստաւ եւ Պօղոսը իր առջեւ կանգնեցուց: Նախ մտիկ ըրաւ հրեաները, որոնք շատ ծանր ամբաստանութիւններ կ'ընէին Պօղոսի դէմ՝ զայն խռովարար ու մահուան արժանի մէկը ներկայացնելով. սակայն չէին կրնար ապացուցանել իրենց ամբաստանութիւնները, որովհետեւ Պօղոս համարձակօրէն կը ջրէր անոնց զրպարտութիւնները եւ կ'ըսէր.

— Ես ո՛չ հրեաներու օրէնքին, ո՛չ տաճարին եւ ոչ ալ կայսրին դէմ յանցանք մը գործած եմ:

Փետոս թէեւ հասկցաւ Պօղոսի անմեղութիւնը, սակայն հրեաները սիրաշահելու համար Պօղոսին առաջարկեց Երուսաղէմ երթալ եւ հոն դատուիլ:

Պօղոս հրեաներուն նենգամտութեան վերահասու ըլլալով մերժեց եւ ըսաւ.

— Կայսրին ատեանին առջեւ կանգնած եմ, ուր պէտք է դատուիմ: Ես հրեաներուն դէմ յանցանք մը չեմ գործած: Եթէ անիրաւութիւն մը կամ մահուան արժանի բան մը ըրած եմ, ես մեռնելէ չեմ վախնար: Իսկ եթէ սուտ են այն ամբաստանութիւնները՝ զորս ատոնք կ'ընեն ինծի դէմ՝ ո՛չ ոք կրնայ զիս ատոնց յանձնել. կայսրին կը բողոքեմ\*:

— Քանի որ կայսրին բողոքեցիր, անոր քով պիտի երթաս, — ըսաւ Փետոս եւ հրամայեց որ Պօղոս զինուորներու հսկողութեան ներքեւ պահուի մինչեւ կայսրին քով ղրկուիլը:

\*  
\*\*

Մի քանի օր ետք Գալիլիայի Ազրիպպաս թագաւորը իր քրոջ՝ Բերինիկէի հետ Կեսարիա եկաւ Փետոս կուսակալը ողջունելու համար: Այդ առիթով կուսակալը թագաւորին խօսեցաւ Պօղոս առաքեալի հանդէպ հրեայ իշխանաւորներուն ամբաստանութեանց մասին:

Ազրիպպաս թագաւորը Մեծն Հիրովդէսի շառաւիղէն ըլլալով բաւական հմուտ էր հրէական կրօնքին եւ օրէնքներուն, ուստի հետաքրքրուած՝ ըսաւ Փետոսին.

— Ես ալ կ'ուզէի մտիկ ընել այդ մարդը:

— Վաղը մտիկ կ'ընես, — ըսաւ Փետոս:

\*) Հոռուական կայսրութեան օրէնքով Հոռուայեցի մը երբ ստաջարկէր իր դատը կայսեր ատեանին առջեւ հանել, ոեւէ կուսակալ կամ դատաւոր չէր կրնար անոր դէմ կեանալ. այլ պարտաւոր էր զայն Հոռու դրկել՝ կայսրին ատեանին առջեւ դատուելու:

Հետեւեալ օրը Ազրիպպաս թագաւոր եւ Բերինիկէ մեծ հանդէսով ատեանը մտան քաղաքին երեւելի անձնաւորութիւններուն հետ:

Երբ Պօղոսն ալ ատեան բերին, Փեստոս ըսաւ.

— Ազրիպպաս արքայ, եւ դուք բոլորդ՝ որ մեզի հետ էք. կը տեսնէ՞ք այս մարդը: Ասոր դէմ հրեաներու ամբողջ բազմութիւնը ամբաստանութիւն ներկայացուց ինծի Երուսաղէմի մէջ եւ հոս, աղաղակելով թէ «Ատիկա պէտք չէ ապրի»: Բայց ես վերահասու եղայ որ ան մահուան արժանի բան մը չէ ըրած. եւ ինքն ալ կայսրին բողոքած ըլլալով՝ որոշեցի զինք զրկել անոր: Ասոր համար զինք բերի ձեր առջեւ, մանաւանդ քու առջեւդ, ո՛վ Ազրիպպաս արքայ, որպէսզի վերստին քննելով կարենամ բան մը գրել կայսրին իր մասին: Որովհետեւ ինծի անպատեհ կը թուի իրեն զրկել բանտարկեալ մը, առանց որեւէ յանցանք մը մատնանշելու անոր մասին:

Փեստոս կուսակալին խօսքէն ետք, Ազրիպպաս թագաւորը հրաման տուաւ Պօղոսին խօսելու:

— Ո՛վ Ազրիպպաս արքայ, — ըսաւ Պօղոս, — նախապէս ես ինծի պարտք կը սեպէի Յիսուս Նազովրեցիի անուան դէմ գործել: Երուսաղէմի մէջ քահանայապետներէն իշխանութիւն առնելով սուրբերէն շատերը կը բանտարկէի եւ անոնց սպանութեան համամիտ կը գրտնրէի... Անոնց դէմ սաստիկ կատղած՝ մինչեւ օտար քաղաքները կը հալածէի: Այսպէս երբ Դամասկոս կ'երթայի, կէսօրին, ճամբուն վրայ, երկինքէն արեւէն աւելի փայլուն լոյս մը ծագեցաւ իմ եւ ուղեկիցներուս բոլորտիքը: Ու երբ մենք ամէնս գետին ինկանք, ձայն մը լսեցի որ ինծի կ'ըսէր, «Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչու՞ զիս կը հալածես...»: Ես ալ ըսի, «Դուն ո՞վ ես, Տէ՛ր»: Եւ Տէրը պատասխանեց, «Ես Յիսուսն եմ, զոր դուն կը հալածես: Բայց ելի՛ր, կանգնէ, վասնզի ես քեզի երեւցայ այն նպատակով որ քեզ ինծի պաշտօնեայ ընեմ, վկայելու համար այն բաներուն զոր տեսար եւ այն տեսիլներուն զոր

պիտի ունենաս իմ մասիս, որպէսզի քեզ ազատեմ այդ ժողովուրդէն եւ այն հեթանոսներէն որոնց պիտի զրկեմ քեզ, բանալու անոնց աչքերը, դարձնելու զանոնք խաւարէն լոյսին ու սատանայի իշխանութենէն՝ Աստուծոյ, որպէսզի անոնք մեղքերու թողութիւն առնեն եւ վիճակակից ըլլան սուրբերուն՝ հաւատալով ինծի»:

«Ո՛վ Ազրիպպաս արքայ, այն երկնային տեսիլքին անհնազանդ չեղայ ես. այլ նախ Դամասկոսի եւ Երուսաղէմի մէջ եղողներուն, եւ ապա բոլոր Հրէաստանի բնակիչներուն եւ հեթանոսներուն քարոզեցի որ զղջան ու Աստուծոյ դառնան՝ ապաշխարութեան արժանի գործեր կատարելով: Այս պատճառով հրեաները զիս տաճարին մէջ բռնելով կ'ողզէին սպաննել: Սակայն Աստուծոյ օգնութիւն հասնելով մինչեւ այսօր ողջ մնացի՝ պատիկին ու մեծին վկայութիւն տալով. բան մը չգրուցելով այն խօսքերէն դուրս որոնք մարգարէները եւ Մովսէս խօսեցան թէ պիտի ըլլային. թէ Քրիստոս պիտի չարչարուէր, եւ թէ Ան ամենէն առաջ յարութիւն առնելով լոյս պիտի քարոզէր մեր ժողովուրդին եւ հեթանոսներուն»:

Երբ Պօղոս այսպէս խօսեցաւ, Փեստոս կուսակալը բարձրաձայն ըսաւ.

— Կը խելագարիս, Պօղոս, շատ կարդացած ըլլալդ քեզ կը յիմարացնէ:

Պօղոս առաքեալ պատասխանեց.

— Ես չեմ խելագարիր, ո՛վ պատուական Փեստոս, այլ զգաստութեան եւ ճշմարտութեան խօսքեր կը զրուցեմ: Այս բաները թագաւորը գիտէ. չեմ կարծեր որ ասոնցմէ բան մը ծածկուած ըլլայ, որովհետեւ այս բանը անկիւնի մը մէջ պատահած չէ: Մարգարէներուն կը հատատա՞ս, Ազրիպպաս արքայ. գիտեմ որ կը հաւատաս:

— Քիչ կը մնայ որ զիս ալ համոզես քրիստոնեայ ըլլալու, — ըսաւ թագաւորը Պօղոսին:

Պօղոս առաքեալ ըսաւ անոր․

— Կը խնդրէի Աստուծմէ, զիչով թէ շատով, որ ո՛չ միայն դուն, այլ բոլոր հոս գտնուողները ըլլան այնպէս՝ ինչպէս ես եմ, բացի կապանքներէս:

Պօղոսին խօսքերը մտիկ ընելէ ետք, ոտքի ելան թագաւորը, կուսակալը ու բոլոր հոն նստողները եւ դուրս ելլելով իրարու հետ խօսակցեցան եւ ըսին, «Այս մարդը մահուան ու բանտի արժանի բան մը չէ ըրած»: Իսկ Ագրիպպաս թագաւորը ըսաւ․

— Կարելի էր այս մարդը ազատ արձակել, եթէ կայսրին բողոքած չըլլար:

#### ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1) Հրեաներ Պօղոս առաքեալին վրայ յարձակելով եւ անոր դէմ դաւեր լարելով կարծեցին թէ կրնային արգելիք ըլլալ Աւետարանի փարոզութեան․ սակայն իրենց այդ արարքներով պատճառ դարձան որ Պօղոս առաքեալ կարեւոր փարոզի բազմահազար ժողովուրդին, հազարապետին, կուսակալներուն, թագաւորին եւ բոլոր անոնց որոնք շփում ունեցան իրեն հետ: Տիրոջ հաւատարիմ պաշտօնեաները որքան հալածուին, այնքան աւելի կը տարածուի Աստուծոյ խօսքը եւ կը գորանայ Սուրբ Եկեղեցին:

2) Յանախ կը պատահի որ Աւետարանի թշնամիները անհիմն գրպարտութիւններ ընեն Աստուծոյ պարկեշտ ծառաներուն դէմ եւ նոյնիսկ գանձնիք որպէս խռովարար ամբաստանելով մատնեն ու դատարաններու առջեւ հանեն: Այդպիսի պարագաներուն հաւատացեալները պէտք չէ յուսահատին, այլ վստահ ըլլալու են որ Աստուած իրենց կու տայ բերան եւ իմաստութիւն՝ իրենց հակառակորդներուն անտեղի ամբաստանութիւնները հերքելու եւ նշարտութիւնը երեւան բերելու:

#### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1) Հրեաներ Փետոս կուսակալին քով երթալով ի՞նչ խնդրեցին:

2) Ի՞նչ էր հրեաներուն ամբաստանութիւնը Պօղոսի դէմ:

3) Ինչո՞ւ համար Պօղոս չուզեց Երուսաղէմի մէջ դատուիլ եւ որո՞ւ բողոքեց:

4) Ո՞ր թագաւորը այցելութեան եկաւ Փետոս կուսակալին:

5) Ատեանի մէջ՝ Ագրիպպաս թագաւորին առջեւ Պօղոսին տուած վկայութիւնը ի՞նչ բանի մասին էր: Կրնա՞ս համառօտ կերպով տալ զայն:

6) Փետոս կուսակալը Պօղոսի խօսքերը մտիկ ընելէ ետք ի՞նչ ըսաւ անոր:

7) Պօղոս ի՞նչ պատասխանեց Փետոսի:

8) Ագրիպպաս թագաւորը ի՞նչ ըսաւ Պօղոսին:

9) Թագաւորը, կուսակալն ու ատեանի մէջ նստողները ի՞նչ եզրակացութեան եկան Պօղոսի մասին եւ իրարու ի՞նչ ըսին:



Պօղոսի Ուղեորութիւնը Դեպի Հռոմ  
Եւ Նաւաբեկութիւն  
(Գործք 27)

Փեստոս կուսակալ Պօղոսը ուրիշ բանտարկեալներու հետ յանձնեց Յուլիոս հարիւրապետին եւ ուղարկեց Հռոմ:

Յուլիոս մեծ մարդասիրութիւն ցոյց տուաւ Պօղոսին: Երբ իրենց նաւը Սիրոն հասաւ, արտօնեց քաղաք երթալ եւ իր բարեկամներուն մօտ իր պէտքերը հոգալ:

Նաւը Կիպրոսի վարի կողմէն անցաւ Կիլիկիայի եւ Պամփիլիայի ծովուն մէջտեղէն եւ հասաւ Լիկիայի Միւռա քաղաքը: Հարիւրապետը Միւռայի մէջ Իտալիա գացող ուրիշ նաւ մը վարձեց եւ իրեն հետ եղողները անոր մէջ փոխադրեց: Նաւը դանդաղօրէն յառաջանալով հասաւ Գեղեցիկ կոչուած նաւահանգիստը: Ժամանակը ձմեռ ըլլալուն ծովային ճամբորդութիւնը վտանգաւոր էր: Սակայն նաւապետն ու նաւավարը կ'ուզէին ճամբան շարունակել եւ Կրետէ հասնիլ: Պօղոս առաքեալ գալիք վտանգները կուսէլով զգուշացուց զանոնք եւ ըսաւ.

— Մարդիկ, ես կը տեսնեմ որ մեր նաւարկութիւնը վտանգաւոր պիտի ըլլայ ո՛չ միայն նաւուն ու անոր մէջ գտնուող ապրանքներուն, այլ նաեւ մեր անձերուն:

Սակայն հարիւրապետը աւելի նաւապետին եւ նաւավարին խօսքերուն կարեւորութիւն տուաւ, քան Պօղոսին:

Շատեր խորհեցան շարունակել ճամբան եւ հասնիլ Փիւնիկէ կոչուած նաւահանգիստը եւ հոն ձմեռել: Ու երբ հարաւային մեղմ հով մը փչեց՝ կարծելով թէ հասեր են իրենց նպատակին՝ ճամբայ ելան:

Երբ Կրետէի մօտերէն կ'անցնէին ու նաւը հանդարտօրէն կը սուրար, յանկարծ մեծ փոթորիկ մը ելաւ ու նաւը

սկսաւ տարուբերիլ ծովուն հսկայ ալիքներէն: Հետեւեալ օրը փոթորիկը սաստկանալով նաւուն մէջ գտնուող ապրանքները ծով թափեցին: Երրորդ օրը նաւը թեթեւցնելու համար անոր գործիքներն ալ դուրս նետեցին:

Երկար օրեր ամպամած երկնակամարին վրայ ո՛չ արեւ եւ ո՛չ ալ աստղեր կ'երեւէին, ու փոթորիկը կը շարունակուէր կատաղօրէն, այնպէս որ փրկութեան ամէն յոյս կտրած էին: Այն ատեն Պօղոս առաքեալ բոլորին մէջտեղ կանգնելով ըսաւ.

— Ո՛վ մարդիկ, դուք ինծի մտիկ ընելով Կրետէէն դուրս ելլելու չէիք, որպէսզի այս տառապանքէն ու վնասէն զերծ մնայինք: Հիմա ձեզ կը յորդորեմ որ սիրտ առնէք, որովհետեւ ձեզմէ ոեւէ մէկուն անձին վնաս մը պիտի չըլլայ, բացի նաւէն: Այս գիշեր իմ պաշտած Աստուծոյս հրեշտակը ինծի երեւցաւ եւ ըսաւ. «Մի՛ վախնար, Պօղոս, դուն պէտք է կայսրին ալ ներկայանաս: Եւ ահա Աստուած քեզի շնորհեց այն ամէնքը որոնք քեզի հետ նաւուն մէջ են»: Ուստի քաջալերուեցէք, վասնզի ես կը հաւատամ Աստուծոյ՝ թէ այսպէս պիտի ըլլայ՝ ինչպէս որ ինծի զրուցուեցաւ: Միայն թէ կարենանք կղզի մը հասնիլ:

Տասնչորրորդ գիշերը, երբ նաւը Ադրիական ծովուն մէջ կը տարուբերէր, նաւավարները ծովուն խորութիւնը չափելով հաստատեցին թէ ցամաքի մը մօտն են: Քիչ մը եւս առաջանալէ ետք նաւուն ետեւի կողմէն չորս խարիսխներ ձգեցին եւ սպասեցին լուսնալուն: Սակայն նաւավարները մտածեցին նաւէն փախչիլ եւ ծովը մակոյկ մը իջեցուցին, այն պատրուակով թէ առաջակողմէն ալ խարիսխ պիտի նետեն: Պօղոս առաքեալ անոնց նպատակը հասկնալով հարիւրապետին եւ զինուորներուն ըսաւ.

— Եթէ այս մարդիկը նաւէն հեռանան՝ դուք չէք կրնար ազատիլ:

Պօղոսի խօսքին վրայ զինուորները կտրեցին մակոյկին չուանները:

Լուսաբացին Պօղոս առաքեալ աղաչեց բոլորին եւ ըսաւ .

— Տասնչորս օրերէ ի վեր անօթի սպասեր ենք առանց բան մը ճաշակելու . ուստի կը խնդրեմ ձեզմէ որ կերակուր ուտէք : Այդ ալ կարեւոր է ձեր ազատութեան համար . վասընզի ձեզմէ ոեւէ մէկը մազ մը անգամ պիտի չկորսնցնէ իր գլխէն :

Այս ըսելով Պօղոս հաց առաւ , ամենուն առջեւ գոհութիւն տուաւ Աստուծոյ եւ կտրելով սկսաւ ուտել : Նաւուն մէջ գտնուողները Պօղոսի խօսքերէն սիրտ առին եւ իրենք ալ կերան :

Առաւօտուն , ցամաքին վրայ ծովախորշ մը նշմարելով նաւը ուղղեցին այն կողմը : Սակայն երբ բաւական գացին , նաւը աւազի մէջ խրեցաւ ու առջեւի մասը անշարժ մնաց , իսկ ետեւի կողմը ալիքներէ զարնուելով սկսաւ քակուիլ : Զինուորները այս վտանգաւոր կացութեան առջեւ ուղեցին բանտարկեալները սպաննել , որպէսզի անոնք առիթէն օգտուելով չփախչին : Բայց հարիւրապետը խափանեց անոնց խորհուրդը , որովհետեւ ազատել կ'ուզէր Պօղոսը : Ապա հրամայեց բոլորին որ աշխատին ցամաք ելլել :

Այս հրամանին վրայ ոմանք լողալով , իսկ լողալ չգիտցողներն ալ փայտի կտորներ առնելով ծով նետուեցան ու նաւուն մէջ գտնուող 276 անձերը ցամաք ելլելով ազատեցան :

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Աստուած Պօղոս առաքելին հետ էր միշտ ու պատրաստ էր գայն ազատելու ամէն տեսակ վտանգներէ , եւ նաեւ անոր պատճառով ուրիշներուն կեանքն ալ խնայելու : Աստուած միշտ կը հոգայ իր ծառաները ու անոնց սիրոյն կ'ողորմի նաեւ անոնց ընկերակիցներուն եւ շրջապատին :

2) Եթէ հարիւրապետը նախապէս նկատի առնէր Պօղոսին տուած խորհուրդը , նաւաբեկութեան պիտի չեմքարկուէին : Իմաստուն մարդոց խորհուրդին հետեւելով մարդիկ գերծ կրնան մնալ գալիք փորձութիւններէն ու վտանգներէն :

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Փետտոս կուսակալը որո՞ւ հսկողութեան լսաննեց Պօղոս առաքելը եւ ո՞ր դրկեց :
- 2) Հարիւրապետը ինչպիսի՞ վերաբերում ցոյց տուաւ Պօղոսին :
- 3) Պօղոս առաքեալ ինչո՞ւ չէր ուզեր որ նաւը շարունակէր իր ճամբան :
- 4) Հարիւրապետը մտիկ ըրա՞ւ Պօղոսին խորհուրդը :
- 5) Կրեւէի մօտերը նաւարկելու ատեն ի՞նչ պատահեցաւ :
- 6) Քանի՞ օր փոթորիկի բռնուած մնացին :
- 7) Տասնչորրորդ օրը Պօղոս ի՞նչ ըսաւ բոլորին :
- 8) Նաւաւարկները գիշեր ատեն ինչո՞ւ մակոյկը ծով իջեցուցին :
- 9) Նաւուն առջեւի մասը աւազին մէջ խրելով ի՞նչ եղաւ :
- 10) Զինուորները ի՞նչ ընել ուզեցին բանտարկեալները :
- 11) Հարիւրապետը ի՞նչ հրամայեց բոլորին :
- 12) Նաւաբեկեալները ինչպէ՞ս ազատեցան :

Պօղոս Մալթայի եւ Հռոմի Մէջ

Երբ բոլոր նաւաբեկեալները ազատեցան, հասկցան թէ Մալթա կղզին ելած են: Տեղւոյն բարբարոս բնակիչները մեծ մարդասիրութիւն ցոյց տուին անոնց ու խարոյկ վառեցին սաստիկ անձրեւին եւ ցուրտին համար: Երբ Պօղոս չորցած փայտեր ժողվելով խարոյկին վրայ դրաւ, յանկարծ կրակին տաքութենէն իժ մը ելաւ ու ձեռքը խայթեց: Բարբարոսները այս տեսնելով իրարու ըսին.

— Անշուշտ այս մարդը ոճրագործ մըն է, որ թէպէտ ծովէն ազատեցաւ, բայց արդարութիւնը չթողուց որ ան սպրի:

Իսկ Պօղոս իժը թօթուելով կրակին մէջ նետեց եւ իրեն վնաս մը չեղաւ: Բարբարոսները կը սպասէին որ Պօղոս թունաւորուած ըլլալով գետին իյնար ու մեռնէր: Բայց երկար ատեն սպասելէ ետք երբ տեսան թէ անոր վնաս մը չհասաւ, իրենց կարծիքը փոխեցին եւ ըսին.

— Այս մարդը աստուած մը պէտք է ըլլայ:

Կղզիին գլխաւոր մարդը՝ Պոպլիոս երեք օր հիւրասիրեց նաւաբեկեալները: Պոպլիոսի հայրը ջերմատէ եւ թանչքէ հիւանդացած՝ անկողին ինկած էր: Պօղոս առաքեալ անոր տունը գնաց, հիւանդին վրայ իր ձեռքերը դնելով աղօթեց ու բժշկեց զայն: Կղզիին բնակիչները այս բանը իմանալով սկսան ամէն կողմէ իրենց հիւանդները բերել Պօղոսին առջեւ, որ իր ձեռքերը անոնց վրայ դնելով աղօթեց ու բժշկեց զանոնք:

Մալթա կղզիին մէջ երեք ամիս մնալէ ետք նաւ մը գտնելով ճամբայ ելան, ու մի քանի տեղեր հանդիպելէ ետք հասան Հռոմ: Հարիւրապետը միւս բանտարկեալները

յանձնեց զօրապետին. իսկ Պօղոսին արտօնուեցաւ մնալ առանձին, իր պահապան գինուորին հետ:

Երեք օր յետոյ, Պօղոս իր մօտ կանչեց Հռոմի հրեաներուն գլխաւորները եւ անոնց ըսաւ.

— Մարդիկ, եղբայրներ, ես իմ ժողովուրդիս կամ հայրենի սովորութիւններուն դէմ բան մը չեմ ըրած. սակայն Երուսաղէմէն ձերբակալուելով մատնուեցայ Հռոմայեցիներուն ձեռքը: Անոնք երբ զիս դատեցին՝ ուզեցին ազատ արձակել՝ վրաս մահուան արժանի յանցանք մը չգտնելով: Բայց երբ հրեաները հակառակեցան, հարկ եղաւ բողոքել կայսրին, սակայն ո՛չ թէ ազգիս դէմ ամբաստանութիւն ընելու դիտաւորութեամբ: Այս պատճառով ուզեցի ձեզ տեսնել եւ խօսիլ, որովհետեւ Իսրայէլի յոյսին համար ես կը գտնուիմ այս շղթաներուն մէջ:

Անոնք ալ Պօղոսին ըսին.

— Մենք քու մասիդ Հրէաստանէն թուղթեր չստացանք եւ ոչ ալ եղբայրներէն ոեւէ մէկը գալով քեզի դէմ չար բան մը խօսեցաւ: Բայց կ'աղաչենք լսել քեզմէ թէ դուն ի՞նչ կը մտածես, որովհետեւ այդ հերձուածին (քրիստոնէութեան) մասին մենք տեղեկութիւն ունինք, թէ ամէն տեղ հակառակութիւն կայ անոր դէմ:

Ապա օր մը որոշեցին եւ մեծ բազմութեամբ եկան Պօղոսին քով, որ անոնց խօսեցաւ Աստուծոյ թագաւորութեան մասին եւ Հին Կտակարանի մարգարէական գիրքերէն վկայութիւններ բերելով ապացուցանեց թէ Յիսուս Քրիստոս Միածին Որդին եւ սպասուած Մեսիան (Քրիստոսն) էր, որ եկաւ ու իր արեամբ քաւութիւն ըրաւ համայն աշխարհի: Ապա զանոնք հրաւիրեց որ հաւատքի գան: Հրեաներէն ոմանք հաւատացին Պօղոսի ըսածներուն եւ ոմանք ալ չհաւատացին:

Պօղոս առաքեալ անոնց սրտին խստութիւնը տեսնելով՝ յանդիմանեց անոնց յամառութիւնը եւ ըսաւ.

— Թող յայտնի ըլլայ ձեզի, որ Աստուծոյ փրկութիւնը հեթանոսներուն զրկուեցաւ եւ անոնք մտիկ պիտի ընեն:

Ատկէ ետք Պօղոս առաքեալ երկու տարի կեցաւ Հռոմ եւ իրեն եկողներուն սորվեցուց Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնը: Ներկայացաւ կայսեր ատեանին եւ իր անմեղութիւնը փաստուելով ազատ արձակուեցաւ:

Կը կարծուի թէ Պօղոս առաքեալ հետագային գնաց եւ քարոզեց նաեւ Սպանիա: Ի վերջոյ Հռոմի մէջ գլխատուեցաւ ներոն կայսեր հալածանքներուն օրով:

Պօղոս կոչուեցաւ Հեթանոսաց Առաքեալ, քանի որ հեթանոս երկիրներուն մէջ քարոզեց եւ իր միջոցաւ բիւրաւոր հեթանոսներ քրիստոնեայ դարձան:\*

Պօղոս առաքեալ Սուրբ Հոգիին ներշնչումով գրած է 14 թուղթեր (= նամակներ), որոնք ուղղուած են զանազան քաղաքներու մէջ իր հիմնած եկեղեցիներուն եւ Աւետարանի նշանաւոր պաշտօնեաներուն: Այս թուղթերը մաս կը կազմեն Նոր Կտակարանին:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Աստուած ամէն բան բարիի գործակից կը դարձնէ իր ծառաներուն ձեռքով: Պօղոս առաքեալ թէն հալածուեցաւ, բանտարկուեցաւ ու շղթաներով կապուեցաւ, սակայն Տիրոջ ձեռքը միշտ անոր վրայ եղաւ ու անոր միջոցաւ յուսարեց հեթանոս աշխարհը:

2) Պօղոսի եւ իր ընկերակիցներուն նաւարկութիւնն անգամ պատճառ դարձաւ որ Մալթայի բարբարոսները լսեն Աստուծոյ խօսքը եւ անոր հրաշքները տեսնելով դարձի գան:

\*) Յիսուսի տասներկու առաքեալներն ալ միայն Երուսաղէմի մէջ քարոզելով չսահմանափակուեցան: Անոնք աշխարհի ամէն կողմերը երթալով քարոզեցին եւ եկեղեցիներ հիմնեցին:

Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս առաքեալներն ալ, այլեայլ տեղեր քարոզելէ ետք, գացին Հայաստան եւ հոն էս քարոզեցին, ատարանի լոյսը տարածեցին եւ հիմնեցին Հայաստանեայց սուրբ եկեղեցին ու նահատակուեցան հայոց Սանատրուկ թագաւորին կողմէ:

3) Մեր կեանքի ընթացքին երբ նեղութիւններու գրկանքներու եւ անիրաւութիւններու հանդիպելու ըլլանք, պէտք չէ յուսահատինք, որովհետեւ անոնք չ'կրնար կասեցնել Աստուծոյ խօսքին տարածումը եւ ոչ արգելք ըլլալ Աստուծոյ ծրագիրներուն: Այդպիսի պարագաներուն աղօթքով ու աղաչանքով սպասելու ենք Աստուծոյ ցուցմունքներուն, զորս Ան կու տայ իր հաւատարկ գաւակներուն, Աղօթքի եւ Ս. Գրոց ընթերցումներու եկեղեցւոյ միջոցաւ:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Նաւաքեալները ո՞ր կղզին ինկած էին:
- 2) Կրակ վառելու ատեն ի՞նչ պատահեցաւ Պօղոսին:
- 3) Պօղոս ի՞նչ թօթուելով ի՞նչ ըրաւ:
- 4) Բարբարոսները առաջին անգամ ի՞նչ գաղափար կա մեզին Պօղոսի մասին:
- 5) Բարբարոսները երկրորդ անգամ ի՞նչ ըսին Պօղոս մասին:
- 6) Պօղոս առաքեալ կղզիին մէջ որո՞նք հայրը բժշկեց:
- 7) Պօղոս Հռոմի մէջ հրեաներուն գլխաւորները կանչելով ի՞նչ ըսաւ:
- 8) Հրեաներ հաւատացի՞ն Յիսուսի:

**Ս. Կոյս Աստուածածին Եւ Անոր Վերափոխումը**

(Ղուկ. 1.26-38, 2.1-40, Մատթ. 1.18-25, 2.1-23)

Ս. Կոյս Մարիամ զաւակն էր նազարէթ քաղաքի բնակիչներէն Յովակիմի եւ Աննայի, որոնք յայտնի էին իրենց սրբակեաց կեանքով, սակայն զաւակ չունէին, ու ատոր համար ալ միշտ կ'աղօթէին Աստուծոյ որ իրենց զաւակ մը շնորհէ, ուխտելով իրենց շնորհուելիք զաւակը նուիրել տաճարին՝ Աստուծոյ սպասաւորութեան համար:

Աստուած լսեց անոնց աղօթքը եւ իր հրեշտակին միջոցաւ անոնց յայտնեց թէ պիտի ունենային զաւակ մը, որուն անունը պիտի տարածուէր համայն աշխարհին մէջ:

Ժամանակ մը ետք Աննա աշխարհ բերաւ աղջիկ զաւակ մը: Յովակիմ եւ Աննա փառք տուին Աստուծոյ եւ զայն անուանեցին Մարիամ եւ դաստիարակեցին աստուածապատուութեան ու սրբութեան ճամբուն մէջ:

Աստուած սկիզբէն օրհնեց եւ սրբեց ուխտի զաւակ Մարիամը ու զայն սահմանեց մայր ըլլալու աշխարհի փրկչին՝ Բրիստոսի:

Երբ Մարիամ երեք տարեկան եղաւ, Յովակիմ եւ Աննա իրենց խոստումին համաձայն զայն տարին Երուսաղէմ ու նուիրեցին տաճարին, որպէսզի միանայ տեղւոյն նուիրեալ կոյսերու խումբին եւ սպասաւորէ Աստուծոյ տան մէջ: Սակայն տաճարին պատասխանատու քահանայապետը Մարիամը շատ դեռատի գտնելով առաջարկեց որ ետ տանին եւ քիչ մը եւս մեծնալէ ետք բերեն: Որով ծնողքը հաւանութիւն յայտնելով իրենց դեռատի դուստրը տուն տարին:

Երբ Մարիամ եօթը տարեկան եղաւ, վերջնականապէս նուիրուեցաւ Աստուծոյ տաճարին սպասաւորութեան:

Աւանդութեան համաձայն ան տաճարին մէջ մնաց եօթը տարի Փանուելի աղջկան՝ Աննա մարգարէուհի ձեռքին տակ եւ բոլոր սրտով ինքզինքը ընծայեց Աստուծոյ:

Տասնչորս տարեկանին Մարիամ նշանուեցաւ Յովսէփ անունով արդար մարդու մը, որ Դաւիթ թագաւորին սերունդէն էր:

Մինչ Մարիամ կը սպասէր իրենց ամուսնութեան, Աստուծոյ հրամանով Գաբրիէլ հրեշտակը երեւցաւ իրեն եւ զայն ողջունելով ըսաւ.

— Ուրախ եղի՛ր, բերկրեալդ, Տէրը քեզի հետ է:

Մարիամ շփոթեցաւ ու վախցաւ. սակայն հրեշտակը ըսաւ իրեն.

— Մի՛ վախնար, Մարիամ. վասնզի Աստուծմէ շնորհք գտար: Ահա պիտի յղանաս եւ որդի մը ծնիս ու՛ անոր անունը Յիսուս (փրկիչ) պիտի դնես. Ան պիտի կոչուի Բարձրեալի Որդի:

Մարիամ զարմացած պատասխանեց.

— Ինչպէ՞ս պիտի ըլլայ այդ ինծի, քանի որ ես տակաւին ամուսնացած չեմ:

Հրեշտակը ըսաւ անոր.

— Սուրբ Հոգին պիտի զայ վրադ եւ Բարձրեալին զօրութիւնը հովանի պիտի ըլլայ քեզի, քանզի Ան որ քեզմէ պիտի ծնի՝ սուրբ է, եւ Աստուծո՛յ Որդի պիտի կոչուի:

— Ես Տիրոջ աղախինն եմ, — ըսաւ Մարիամ, — թող իր կամքը ըլլայ:

Տիրոջ հրեշտակը երազի մէջ երեւցաւ նաեւ Յովսէփի եւ անոր ալ յայտնեց Աստուծոյ ծրագիրը, թէ իր նշանածը՝ Մարիամ պիտի դառնայ մայր այն օճեալ փրկչին, որուն մասին գրուած էր մարգարէական գիրքերուն մէջ, թէ կոյսէ մը պիտի ծնէր ու փրկէր աշխարհը մեղքի գերութենէն:

Յովսէփ Տիրոջ հրեշտակին տուած պատգամին վրայ իր նշանած Մարիամը օրինաւորապէս իրեն կին առաւ, որպէսզի իր խնամակալութեան տակ պահէր զայն եւ անկէ ծնելիք Օճեալ փրկիչը:

Սուրբ Կոյս Մարիամ Աստուածորդոյն մայր դառնալով իր անարատ կաթով սնուցանեց զԱյն եւ լրիւ կատարեց իր մայրական պարտականութիւնները: Գիտակից էր իր վեհ կոչումին եւ երանութեան: Սակայն միշտ խոնարհ մնաց ու ինքզինք կոչեց աղախին Տետուն եւ սրբութեան օրինակ դարձաւ բոլոր կիներուն:

Իր սրտին մէջ պահեց Յիսուսի ծննդեան առթիւ եւ հետագայ օրերուն ու տարիներուն մէջ պատահած դէպքերն ու աստուածային յայտնութիւնները:

Որպէս մայր գործվալից եղաւ Յիսուսին հանդէպ եւ որպէս աղախին կատարեց անոր կամքը եւ ուրիշներուն ալ թելադրեց ըսելով, «Ի՛նչ որ ձեզի ըսէ, ըրէ՛ք»:

Ականատես եղաւ իր Որդւոյն՝ Յիսուսի կատարած բազմաթիւ հրաշքներուն եւ Մեսիական գործունէութեան: Հետեւեցաւ Անոր մինչեւ Գողգոթա: Իր Միածին Որդւոյն խաչելութեան դիմաց իր սիրտն ալ խոցոտուեցաւ ու ցաւակից դարձաւ անոր իր չարչարանքներուն մէջ: Ինք խորապէս տառապեցաւ ու լացաւ. սակայն չյուսահատեցաւ, այլ սպասեց իր Որդւոյն փառապանծ յարութեան աւետիսին:

Յիսուս իր հոգին չաւանդած՝ խաչին վրայէն իր մօրը՝ Սուրբ Կոյս Մարիամին հոգածութիւնը յանձնեց իր սիրելի աշակերտին՝ Յովհաննէսի, եւ այնուհետեւ ան մնաց Յովհաննէս առաքելի հոգածութեան ներքեւ: Մարիամ գործակցեցաւ միւս առաքելներուն հետ: Վայելեց անոնց եւ բոլոր հաւատացեալներուն համակրութիւնն ու յարգանքը, ցուցաբերեց մայրական սէր ամենուն հանդէպ: Մասնակցեցաւ անոնց հաւաքոյթներուն, պաշտամունքներուն եւ աղօթքներուն: Հոգեզալստեան օրը ինք եւս ներկայ եղաւ վերնատան մէջ, եւ առաքելներուն հետ միասին ստացաւ Սուրբ Հոգին:

Յիսուսի յարութենէն տասներկու տարի ետք կը վերջանան Սուրբ Կոյս Մարիամին երկրաւոր կեանքին օրերը եւ յարուցեալ Տէրը կ'ուզէ իր մայրը երկրէն երկինք փոխադրել:

Սուրբ Կոյսին ննջումին լուրը առնելով ամէն կողմ առաքելներ, սուրբեր եւ քրիստոնեայ հաւատացեալներ կը հաւաքուին Երուսաղէմ: Անոնք երգերով, սաղմոսներով ու աղօթքներով Սուրբ Կոյսին մարմինը կը դնեն գերեզմանին մէջ: Թաղումէն վերջ երեք օր՝ գիշեր ոցերեկ՝ գերեզմանին վերեւ կը լսուին հրեշտակայի՛ երգերու քաղցր ձայներ:

Սուրբ Կոյսին թաղման չի կրնար ներկայ ըլլալ Բարթողոմէոս առաքել, որ Երուսաղէմ կը հասնի երեք օր ետք: Ան կը խնդրէ առաքելներէն Սուրբ Կոյսին գերեզմանը բանալ եւ իրեն առիթ շնորհել վերջին անգամ անոյ դէմքը տեսնելու: Առաքելները կ'ընդառաջեն Բարթողոմէոսի խնդրանքին: Սակայն երբ գերեզմանը կը բանան դայն պարապ կը գտնեն: Իսկոյն կը հասկնան որ յարուցեալ Տէրը հրեշտակներու խումբով եկած ու իր մայրը երկինք փոխադրած է, եւ երեք օրուան ընթացքին լսուած հրեշտակային ձայներն ալ ինքնին կը հաստատեն կատարուած մեծ դէպքը:

Բարթողոմէոս եւ միւս առաքելները շատ կը զգացուին այս հրաշալի իրողութեան առջեւ եւ Աստուծոյ փառք կու տան իր մեծամեծ գործերուն համար:

Առ ի մի թարութիւն Բարթողոմէոս առաքելին իրեն կը յանձնեն Սուրբ Կոյսին կենդանագիր պատկերը գոր ինք իր կենդանութեան ատեն յանձնած էր Յովհաննէս առաքելին: Հետագային Բարթողոմէոս առաքել Ս. Կոյսին պատկերը կը տանի Հայաստան:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Ս. Կոյս Մարիամ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոս մայրն ըլլալով ինքնաբերաբար մայր դարձած է բոլոր քրիստոնեայ հաւատացեալներուն: Ան երկինքի մէջ կ'աղօթէ ու կը բարեխօսէ իր Որդւոյն՝ երկրի հաւատացեալներուն համար:

2) Ան ամենօրինեալ է բոլոր կիներուն մէջ եւ ամէն ազգեր երանի կու տան անոր: Սուրբ եկեղեցին գայն կոչած է Աստուածածին, որովհետեւ Աստուածորդին իրմէ ծնաւ եւ անոր կաթով սնաւ:

3) Հայաստանեայց եկեղեցին կը յարգէ ու կը պատուէ Ս. Աստուածածինը եւ կը խնդրէ անոր բարեխօսութիւնը:

Մարիամ Աստուածածնի Վերափոխման տօնը հայ եկեղեցին կը կատարէ Օգոստոս 15-ի ամենամօտիկ Կիրակին:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1) Որո՞նց աղջիկն էր Ս. Կոյս Մարիամ:

2) Իր ծնողքը գայն որո՞ւ նուիրեց:

3) Որո՞նք նշանուեցաւ ան:

4) Աստուած ի՞նչ ընելու համար որոշեց Ս. Կոյս Մարիամը:

5) Գաբրիէլ հրեշտակը ի՞նչ ըսաւ իրեն:

6) Մարիամ ի՞նչ պատասխանեց:

7) Յիսուս որո՞նք յանձնեց իր մօր հոգածութիւնը:

8) Յիսուսի յարութենէն քանի՞ տարի ետք Մարիամ Աստուածածին երկրէ երկինք փոխադրուեցաւ:

9) Ո՞ր առաքեալը չկրցաւ անոր թաղման ներկայ ըլլալ:

10) Ս. Աստուածածնի գերեզմանին վերեւ երեք օր գիշեր եւ ցերեկ ի՞նչ լսուեցաւ:

11) Ո՞ր առաքեալին խնդրանքով Սուրբ Կոյսին գերեզմանը բացուեցաւ:

12) Ո՞վ երկինք փոխադրած էր Սուրբ Կոյսը:

13) Ս. Աստուածածնի կենդանագիր պատկերը ո՞ր առաքեալին յանձնուեցաւ:

14) Բարթողոմէոս առաքեալ ո՞ր տարաւ Ս. Աստուածածնի պատկերը:

15) Հայ եկեղեցին ե՞րբ կը կատարէ Ս. Աստուածածնի վերափոխման տօնը:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Փառատրեալ եւ օրհնեալ միշտ Սուրբ Կոյս Աստուածածին Մարիամ, Մա՛յր Քրիստոսի, մատո՛ գաղաշանս մեր Որդոյ թո, եւ Աստուծոյ մերոյ:

Յիսուս Քրիստոսի Ա. Խաչը  
(Յովհ. 19.17-42)

Քրիստոսի խաչելութենէն առաջ խաչը որպէս մահ-  
ուան գործիք սոսկում կը պատճառէր զիտողներուն. սա-  
կայն անոր վրայ աշխարհի փրկչին զոհաբերութիւնը սըր-  
բագործեց զայն: Խաչը դարձաւ մարդ արարածին հանդէպ  
Աստուածորդւոյն սիրոյն եւ զոհաբերութեան խորհրդա-  
նիչը ու Անոր փրկագործութեան եւ յողթանակին դրօշը:

Սուրբ Խաչը Յիսուս Քրիստոսի զոհագործութեան  
սեղան եղած ըլլալով արժանացաւ քրիստոնեայ հաւա-  
տացեալներու յարգանքին ու մեծարանքին: Բազմութիւն-  
ներ անոր առջեւ երկրպագեցին ու պաշտեցին Ամենասուրբ  
Երրորդութիւնը ու զեռ. եւս անոր նշանին առջեւ կը շա-  
րունակեն խոնարհիլ ու փառաբանել իրենց փրկիչը՝ հետե-  
ւելով սաղմոսերգուի պատուէրին որ կ'ըսէ, «Բարձրացու-  
ցէք Տէրը, մեր Աստուածը, ու երկրպագութիւն ըրէք անոր  
ոտքերուն պատուանդանին. Անիկա սուրբ է» (Սաղմոս 98.  
[99] 5):

Սուրբ Խաչը Քրիստոսի ներկայութիւնը կը խոր-  
հրդանչէ քրիստոնեաներուն համար:

Հաւատացեալներ խաչակնքելով դաւանած կ'ըլլան  
Ամենասուրբ Երրորդութիւնը եւ խաչին վրայ իրենց  
Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի զոհագործութեան խորհուրդը.  
միեւնոյն ատեն խնդրած կ'ըլլան Աստուծոյ օգնութիւնն  
ու պահպանութիւնը իրենց համար:

Առաքեալներու ժամանակէն սկսեալ Երուսաղէմի  
քրիստոնեաներէն շատեր սկսած են ուխտի երթալ Գողգո-  
թա՝ տեսնելու համար Յիսուսի Խաչն ու գերեզմանը եւ  
երկրպագելու անոնց առջեւ իրենց Տիրոջ: Սակայն չարա-

նենգ հրեաներ նախանձէ դրդուած, Քրիստոսի խաչա-  
փայտը կը նետեն աղբակոյտերու մէջ եւ քրիստոնեա-  
ներուն կ'արգիլեն Գողգոթա երթալ ու մօտենալ սուրբ գե-  
րեզմանին:

Այդ օրերուն Հռոմի Կղոզիոս կայսեր (41-54 թուա-  
կան) կինը՝ Պատրոնիկէ թագուհին՝ քրիստոնէութիւնը  
ընդունած ըլլալով Երուսաղէմ ուխտի կ'երթայ եւ կը փա-  
փաքի այցելել Գողգոթա ու տեսնել Քրիստոսի խաչն ու  
գերեզմանը: Երուսաղէմի եկեղեցիին առաջին հայրա-  
պետը՝ Յակոբոս Տեառնեղբայր կը յայտնէ անոր թէ հրեա-  
ներ չեն արտօներ քրիստոնեաներուն հոն մօտենալ եւ խա-  
չափայտին տէր դառնալ:

Պատրոնիկէ թագուհին անմիջապէս կը միջամտէ իշ-  
խանութեան մօտ, եւ Քրիստոսի խաչափայտը քրիստոն-  
եաներուն շնորհուելով կը վերահաստատուի Գողգոթայի  
վրայ: Այդ առիթով Յակոբոս Տեառնեղբայր Ս. Խաչի նշա-  
նով կ'օրհնէ հաւատացեալները ու կ'երգէ իր յօրինած  
«Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ, որ  
խաչեցար վասն մեր» եւ «Խաչի քո Քրիստոս երկիրպա-  
գանեմք» երգերը:

Պատրոնիկէ թագուհին իր ուխտը կատարելէ ետք՝  
Երուսաղէմէն մեկնելու ատեն՝ կը փափաքի Քրիստոսի  
խաչափայտէն մասունք մը ունենալ իրեն հետ: Յակոբոս  
Տեառնեղբայր սիրով կ'ընդառաջէ եւ փոքրիկ կտոր մը կը  
պոկէ խաչափայտէն ու կը նուիրէ անոր:

Թագուհին այդ մասունքը Հռոմ կը տանի եւ յետ  
մահու ժառանգ կը ձգէ զայն քրիստոնէութեան յարած իր  
ազգականներուն: Երրորդ դարուն վերջերը այդ մասունքը  
կ'անցնի Սուրբ Գայիանէի ձեռքը, որ մեծաւորուհին էր  
Հռոմի մէջ Ս. Պօղոս Առաքեալի անունով հաստատուած  
կղւսաստանին: Ս. Գայիանէ իր կարգին այդ թանկագին  
մասունքը կը նուիրէ ու կը կախէ իր սանուհիներէն Հռիփ-  
սիմէ կոյսին վիզը: Հռիփսիմէ կայսերական ընտանիքէ  
սերած օրիորդ մըն էր:



Պատրոնիկէ թագուհիին Երուսաղէմէն մեկնելէն ետք քրիստոնեաներուն ղէմ եղած հալածանքներու ատեն հրեաները դարձեալ կը նեղեն հաւատացեալները եւ արգելք կը հանդիսանան անոնց որ չկարենան այցելութիւն տալ ղէպի Գողգոթա ու սուրբ գերեզմանը: Իսկ խաչափայտը անարգելու եւ անոր յիշատակը մոռցնելու համար զայն դարձեալ կը նետեն մեկուսի վայր մը ու աղբակոյտերով կը ծածկեն:

Երուսաղէմի կործանումին յարակից ղէպքերն ու քաղաքին ժամանակաւոր ամայացումն ալ պատճառ կը դառնան որ անյայտ մնայ Քրիստոսի խաչափայտին վայրը մինչեւ չորրորդ դարու սկիզբը:

\*  
\*\*

Առաքեալներու քարոզութեան ընթացքին եւ անկէ ետք քրիստոնեաներ յաճախ կը հալածուին իրենց սուրբ հաւատքին համար թէ՛ հրեաներէն եւ թէ՛ հեթանոսներէն՝ աշխարհի ամէն կողմերը. սակայն, հակառակ այդ նեղութիւններուն, անոնց թիւը օրէ օր կը բազմանայ ու Քրիստոսի Աւետարանին լոյսը կը տարածուի: Առաջին անգամ հայոց Տրդատ թագաւորը 301 թուականին քրիստոնէութիւնը պետական կրօնք կը հռչակէ Հայաստանի մէջ: Իսկ անկէ քսաներեք տարի ետք, 324 թուականին, Մեծն Կոստանդիանոս կայսրը քրիստոնէութիւնը պետական կրօնք կը հռչակէ հռոմէական կայսրութեան:

Կոստանդիանոսի մայրը՝ Հեղինէ թագուհին քրիստոնէութիւնը ընդունելէ ետք կը դառնայ շատ բարեպաշտ կին մը: Ան 326-ին ուխտի կ'երթայ Երուսաղէմ եւ կ'որոշէ գտնել Յիսուսի խաչափայտը: Փնտռողներ կը կատարէ եւ անոր վայրը իմանալու համար կը ղիմէ նաեւ տեղւոյն հրեաներուն, որոնք չեն ուզեր յայտնել: Թագուհին ճնշումներ կը բանեցնէ անոնց վրայ: Ի վերջոյ Յուդա

անունով հրեայ մը տեղեկութիւններ կը հաղորդէ իրեն եւ ցոյց կու տայ այն աղբակոյտը որուն տակ թաղուած էր խաչափայտը:

Թագուհիին հրամանով պեղումներ կը կատարուին եւ մէջտեղ կ'ելլեն երեք խաչափայտեր եւ յայտնի չ'ըլլար թէ անոնցմէ ո՛րն է Յիսուսի խաչափայտը: Պատահամբ այն կողմերէն կ'անցնի մեռեալ պատանիի մը յուղարկաւորներուն թափօրը: Հեղինէ թագուհիին հրամանով մեռելը կը բերեն խաչափայտերուն վրայ կը պառկեցնեն: Երբ մեռեալը երրորդ խաչափայտին վրայ կը դրուի, իսկոյն կը կենդանանայ ու ոտքի կ'ելլէ: Այդ հրաշքը տեսնելով բոլոր քրիստոնեաները ցնծութեան աղաղակներ կը բարձրացնեն ու Աստուծոյ փառք կու տան: Ուաչափայտը կը գետեղուի Գողգոթայի վրայ մեծ յարգանքներով ու հոգեւոր հանդիսութիւններով:

\*  
\*\*

356 թուականին Երուսաղէմի Կիւրեղ պատրիարքին օրով քաղաքի բոլոր բնակիչներուն կ'երեւի լուսաւոր խաչի շող մը որ արեւի լոյսէն աւելի պայծառ կ'ըլլայ: Ան կը տարածուի Գողգոթայէն մինչեւ Զիթենեաց լեռ: Այդ երեւոյթը մեծ ցնծութիւն եւ ուրախութիւն կը պատճառէ քրիստոնէութեան: Այդ առիթով Կիւրեղ պատրիարք նամակ կը գրէ Կոստանդ կայսեր (Մեծն Կոստանդիանոսի որդին) եւ մանրամասն կը բացատրէ լուսաւոր Ուաչին երեւման պարագաները:

\*  
\*\*

614 թուականին պարսիկները Երուսաղէմը գրաւելով Քրիստոսի խաչափայտը կը տանին Պարսկաստան եւ սուգի կը մատնեն բոլոր քրիստոնեաները:

Յունաց Հերակլ կայսրը 622-ին պատերազմ կը մղէ պարսիկներու դէմ եւ եօթը տարուն մէջ մեծ յաղթանակներ տանելով ի վերջոյ կը գրաւէ պարսից մայրաքաղաքը եւ 628-ին կ'ազատագրէ Յիսուսի խաչափայտը: Այդ ճակատամարտներուն մէջ հայ զինուորներ մեծ քաջագործութիւններ կ'ընեն Մժէժ Գնունի հայ զօրավարին առաջնորդութեամբ:

Քրիստոնեայ զինուորներ մեծ ցնծութեամբ Յիսուսի խաչափայտը կը վերցնեն: Անոնք Հայաստանէն անցնելով գայն կը տանին Կոստանդնուպոլիս եւ ապա Երուսաղէմ: Հերակլ կայսրը Յիսուսի Խաչափայտը ուսին առած, բուկոտն կը քալէ Երուսաղէմի փողոցներէն ու կը տանի Գողգոթայի բարձունքը եւ հոն կը կանգնէ գայն 629-ին:

Պարսկաստանէն մինչեւ Երուսաղէմ, ճամբու ընթացքին քաղաքներու եւ գիւղերու մէջ մեծահանդէս թափօրներով կը դիմաւորուի Քրիստոսի խաչափայտը ու քրիստոնեաներ երգերով, շարականներով, սաղմոսներով ու աղօթքներով զԱստուած կը փառաւորեն:

\*  
\*\*

Հռիփսիմէ կոյսը իր ընկերներով երբ Հայաստան կը հաստատուի, իր նահատակութենէն առաջ իր վիզէն կախուած Քրիստոսի խաչափայտին մասունքը կը յանձնէ իրենց խումբին հոգեւոր մատակարար երկու քահանաներու, որոնք կը ճգնէին Վարագ լեռան վրայ: Քահանաները զգուշութեամբ կը պահեն սուրբ աւանդը իրենց քարայրին մէջ, մինչեւ իրենց մահը: Անոնց վախճանումէն ետք անոնց ճգնարանին վայրը անյայտ կը մնայ հանրութեան: Հետագայ դարերուն շատեր կը փորձեն գտնել այս ճգնարանն ու հոն պահուած խաչափայտի մասունքը եւ չեն յաջողիր:

Եօթներորդ դարուն՝ Ներսէս Շինող կաթողիկոսին օրով՝ սրբակեաց Թողիկ ճգնաւոր եւ իր աշակերտը՝ Յովէլ, Վարագայ լեռան կողերուն վրայ կ'ապրին ու շարունակ կ'աղօթեն: Գիշեր մը Թողիկ տեսիլք մը կ'ունենայ. — Վարագայ լեռան գագաթին վրայ կը տեսնէ տասներկու սիւներով տաճար մը՝ մէջտեղը լուսատու խաչով. քիչ ետքը այդ լուսաւոր խաչը կը փոխադրուի վարագայ վանքի սեղանին վրայ: Թողիկ եւ Յովէլ անմիջապէս կը փութան եկեղեցի եւ կ'երկրպագեն այդ լուսափայլ խաչափայտի մասունքին առջեւ: Ներսէս կաթողիկոսը այդ տեսիլքին լուրը առնելով՝ հայոց իշխանապետ Վարդ Պատրիկին հետ կը փութայ դէպքին վայրը եւ ստուգումներ կատարելով կը հաստատէ թէ Ս. Հռիփսիմէի կողմէ աւանդ ձգուած մասունքն է այդ: Հայ ժողովուրդը մեծ ուրախութեամբ կ'ընդունի աստուածային սուրբ նշանին յայտնութիւնը: Ներսէս կաթողիկոս տարեկան տօն կը հաստատէ Վարագայ սուրբ խաչի նշանին յիշատակութեան համար: Հաւանական է որ ինք յօրինած ըլլայ այդ տօնին առթիւ երգուող «Նշանաւ Ամենայաղթ Խաչիւդ Քո» շարականը:

Հայ եկեղեցին կը տօնէ նաեւ Սուրբ Խաչի գիւտին, երեւումին եւ ազատագրութեան յիշատակները հանդիսաւոր արարողութիւններով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Սուրբ խաչը հաւատքի, աստուածային սիրոյ, Յիսուսի կատարած փրկագործութեան եւ Սատանայիմ դէմ անոր տարած յաղթանակին նշանն ու դրօշակն է, որով անոր ընծայուած յարգանքն ու երկրպագութիւնը ուղղուած կ'ըլլան խաչեալ եւ յարուցեալ փրկչին՝ Յիսուս Քրիստոսի:

2) Սատանան կը սարսափի խաչի նշանէն: Ան թէեւ մոնցող առիծի նման կը պտըտի ամէն կողմ՝ մարդիկը

մոլորեցնելու համար, սակայն չի կրնար կլլել Քրիստոսի եւ անոր խաչին ապաւինող անկեղծ հաւատացեալները եւ ոչ ալ կրնայ տկարացնել անոնց հաւատքը:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ս. Խաչը որո՞ւն նշանն ու դրօշակն է:
- 2) Յակոբոս Տեառնեղբոր ժամանակ ո՞ր թագուհին Երուսաղէմ ուխտի եկաւ եւ ի՞նչ ուզեց տեսնել:
- 3) Յակոբոս Տեառնեղբայրը ի՞նչ պատասխանեց անոր:
- 4) Յակոբոս Տեառնեղբայրը Ս. խաչի նշանով հաւատացեալները օրհնելէ ետք ի՞նչ երգեց:
- 5) Պատրոնիկէ թագուհին իր ուխտը կատարելէ ետք ի՞նչ փափաքեցաւ ունենալ:
- 6) Պատրոնիկէ թագուհին տարած մասունքը ի վերջոյ որո՞ւն վիզէն կախեցին:
- 7) Կրնա՞ս պատմել Վարագայ Ս. խաչի նշանին յայտնութեան դէպքը:
- 8) Հրեաներ ո՞րն են տած էին Յիսուսի խաչափայտը:
- 9) Ո՞ր թագուհին Երուսաղէմ գալով գտաւ Ս. խաչափայտը:
- 10) Ի՞նչ է դէպքը երեսման խաչին: Ո՞ր պատրիարքին օրով եղաւ:
- 11) Ո՞ր կայսրը ազատագրեց Քրիստոսի խաչափայտը պարսիկներէն:
- 12) Հայեր ի՞նչ դեր կատարեցին խաչափայտի ազատագրումի պատերազմին:

### ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

խաչ քո եղիցի մեզ ապաւն, Տէր Յիսուս, յորժամ երեսի փառօք Հօր ընդ ամպս լուսաորս: Յայնժամ մեք մի՛ ամաչեցուք լուսացեալքս ի Քեզ. այլ զօրութեամբ քով մեծաւ բերկրեցուք ընդ աջմէ քումմէ՝ որպէս զորդիս լուսոյ եւ որդիս տուրնչեան:

### Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

	Էջ
<i>Երկու խօսք</i>	5
<i>Յառաջարան</i>	7
Ա.— Աստուածորդին Փրկիչ Աշխարհի	9
Բ.— Յիսուսի Համբարձումը	16
Գ.— Հոգեգալուստ	19
Դ.— Ի Մեկ Կաղին Բժշկութիւնը	23
Ե.— Անանիայի եւ Սափիրայի Մահը	28
Զ.— Առաքեալներու Քարոզութիւնն ու Հրեաներու Հալածանքը	31
Է.— Ս. Ստեփանոս Սարկաւագին Նահատակութիւնը	35
Ը.— Քարոզութիւն Սամարիայի Մէջ	39
Թ.— Փիլիպպոս եւ Եթովպացի Ներքինին	43
Ժ.— Սօդոսին Դարձը	46
ԺԱ.— Պետրոս Առաքեալ Կը Քարոզէ եւ Հրաշքներ Կը Գործէ	50
ԺԲ.— Պետրոս Առաքեալ Կոռնելիոսի Մօտ	53
ԺԳ.— Պետրոս Առաքեալ Բանտէն Կ'ազատի	58
ԺԴ.— Անտիոքի Եկեղեցին եւ Պօղոսի Առաքելական Առաջին Ճամբորդութիւնը (Ա.)	62
ԺԵ.— Պօղոսի Առաքելական Առաջին Ճամբորդութիւնը (Բ.)	67
ԺԶ.— Պօղոսի Առաքելական Երկրորդ Ճամբորդութիւնը (Ա.)	73

ԺԷ.— Պողոսի Առաքելական Երկրորդ Ճամբորդութիւնը (Բ.)	78
ԺԸ.— Պողոսի Առաքելական Երրորդ Ճամբորդութիւնը (Ա.)	85
ԺԹ.— Պողոսի Առաքելական Երրորդ Ճամբորդութիւնը (Բ.)	89
Ի.— Պողոսի Առաքելական Երրորդ Ճամբորդութիւնը (Գ.)	92
ԻԱ.— Հրեաներուն Յարձակումը Պողոսի Վրայ	96
ԻԲ.— Պողոս Առաքելային Դատաւարութիւնը	101
ԻԳ.— Պողոս Փեստոս Կուսակալի և Ագրիպաս Արքային Առջև	106
ԻԴ.— Պողոսի Ուղեւորութիւնը Դէպի Հռոմ և Նաւաթեկութիւն	112
ԻԵ.— Պողոս Մալթայի և Հռոմի Մէջ	116
ԻԶ.— Ս. Կոյս Աստուածածին և Անոր Վերափոխումը	120
ԻԷ.— Յիսուս Գրիստոսի Ս. Խաչը	126

